To analyze the development of the Arab Spring in the Palestinian Authority, it's essential to consider several factors. Unlike protests in other Arab countries, the protests in Palestine did not aim to seize power. This distinction highlights the unique closed political opportunity structure present in the Palestinian context. According to Political Opportunity Structure (POS) theory, protest movements are more likely to succeed when there are divisions among elites, reduced repression, or external support. However, in Palestine, the cohesion between Fatah and Hamas, coupled with the ongoing Israeli occupation and repression of dissent, along with limited international encouragement for popular mobilization had significantly constrained the potential for transformative collective action. The absence of divisions within the political leadership meant that protesters lacked institutional allies, and the geopolitical environment did not create conditions favorable for structural reform.

Furthermore, the political climate in Palestine was shaped by the experiences of the two intifadas between 1987–1991 and 2000–2004. Following these uprisings, the Palestinian Authority found itself in a political crisis, lacking viable alternatives among its political elites. Rather than challenging the political situation, many Palestinians chose to disengage from politics altogether. Their priorities shifted away from public and political engagement, focusing instead on personal life and social status to address their own needs. Additionally, the harsh policies of the right-wing Israeli government, coupled with regional risks and international pressure on Palestinian leadership, further suppressed public discontent.

The primary reason for the internal challenges faced by the Palestinians was not the actions of the Fatah or Hamas governments, but rather Israel's occupation,

which has long disrupted daily life and isolated Palestine from the rest of the world. Consequently, Fatah's governance in the West Bank and Hamas's influence in the Gaza Strip remained unchanged. Efforts to reconcile the two groups, due to various internal and external factors, were ultimately destined to fail. As a result, both Palestinian political factions, unable to bridge their divide channelled the wave of Palestinian protests towards Israel, believing that the root cause of their failures and hardships was solely the policies implemented by Israel, which received considerable support from the West.

Acknowledgement

The author expresses her sincere gratitude to Associate professor Gohar Iskandaryan for her valuable advice and insightful observations during the preparation of this article.

References/Գրականություն/Литература

1. Akram F. 2012, Hamas Leader Abandons Longtime Base in Damascus, The New York Times, https://www.nytimes.com/2012/01/28/world/middleeast/khaled-meshal-the-leader-of-hamas-vacates-damascus.html (Accessed on: 15.05.2024).
2. Al Jazeera 2008, Palestine Papers, Summary of Olmert's "Package" Offer to Abu Mazen, Doha.
3. Al-Jazeera 2012, Abbas to Head Palestinian Unity Government, https://www.aljazeera.com/news/middleeast/2012/02/20122610416298264.html (Accessed on: 03.05.2024).
4. Alcaro R. and Dessì A. 2011, The September UN Vote on Palestine: Will the EU be up to the Challenge? Rome, Istituto Affari Internazionali, IAI Working Papers 11|27, 1–13.
5. Amayreh K. 2011, Hamas-Fatah Discord on Fayyad Persists, Ramallah, The Palestinian Initiative for the Promotion of Global Dialogue and Democracy, MIFTAH, http://miftah.org/Display.cfm?DocId=23622&CategoryId=5 (Accessed on: 01.04.2024).
6. Amnesty International Report 2011, 1–83, https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2021/06/pol100022011en.pdf (Accessed on: 20.05.2024).
7. Amour P. 2018, Did a Palestine Spring Take Place? The Lost Decade in Palestine, İstanbul, Tarih Dergisi, Sayi 67 (2018/1), 151–176.
8. Arshad S. 2011, The Palestine Papers – a Matter of Public Interest, London, Middle East Monitor, February, 1–6.
9. Beinin J. 2011, The Israeli Palestinian Conflict and the Arab Awakening, US and UK, Middle East Research and Information Project, https://merip.org/2011/08/the-israeli-palestinian-conflict-and-the-arab-awakening/ (Accessed on: 10.04.2024).
10. Brom Sh. 2011, Quiet in the Palestinian Arena: The Eye of the Storm, Tel-Aviv, The Institute for National Security Studies, 55–64.
11. Burton G. 2017, Building ties across the Green Line: The Palestinian 15 March youth movement in Israel and occupied Palestinian territory in 2011, London, Third World Quarterly, vol. 38/1, 169–184.

12. Christophersen M., Høigilt J., Tiltnes A. 2012, Palestinian Youth and the Arab Spring, Oslo, Norwegian Peacebuilding and Resource Centre, NOREF Report, 1–19.
13. Darweish M. 2013, The Palestinian Israeli Conflict in the Shadow of the Arab Revolutions, Journal of Conflict Transformation and Security, vol. 3/2, 154–172.
14. Dessì A. 2012, Israel and the Palestinians After the Arab Spring: No Time for Peace, Rome, Istituto Affari Internazionali, Working papers, 1–16.
15. Doha Declaration signed between Hamas and Fatah 2012, Doha, State of Qatar, 1–2.
16. El-Bey D. 2011, New Face New Ideas, Cairo, Al-Ahram Weekly, 1 p., https://www.masress.com/en/ahramweekly/26942 (Accessed on: 20.05.2024).
17. General Assembly Votes Overwhelmingly to Accord Palestine 'Non-Member Observer State' 2012, Status in the United Nations, UN Doc. GA/11317.
18. Gunning J. and Baron I.Z. 2013, Why Occupy a Square? People, Protests and Movements in the Egyptian Revolution, London, Hurst & Company, 1–336.
19. Hanieh A. 2001, The Camp David Papers, California, Journal of Palestine Studies, University of California Press, vol. 30/2, 75–97.
20. Høigilt J. 2013, The Palestinian Spring that Was Not: The Youth and Political Activism in the Occupied Palestinian Territories, Arab Studies Quarterly, vol. 35/4, 343–359.
21. International Crisis Group 2011, Palestinian Reconciliation: Plus Ça Change…, US and UK, Middle East Report, N 110, 20 July, 1–31.
22. Natil I. 2017, Palestinian Youth Movements and "the Arab Spring", New York, Societies and Political Orders in Transition, 33–42.
23. Pratt N. 2012, The Implications of the "Arab Spring" for the Israel-Palestine Conflict: or 'Things Fall Apart', Coventry, University of Warwick, 1–19.
24. Samson I. 2013, Impact of the "Arab Spring" on the Palestinian-Israeli Peace Process, Bratislava, Centre for European and North Atlantic Affairs, 1–8.
25. Sherwood H. 2013, US-Backed Palestinian Prime Minister Salam Fayyad Resigns, The Guardian, https://www.theguardian.com/world/2013/apr/14/palestinian-pm-salam-ayyad-resigns (Accessed on: 31.03.2024).
26. Tarrow S. 2011, Power in Movement: Social Movements and Contentious Politics, Cambridge, Cambridge University Press.
27. Tocci N. 2011, The EU, the Middle East Quartet and (In) effective Multilateralism, Rome, Mercury E-Paper, N 9, June, 1–30.
28. UN General Assembly 2012, Status of Palestine in the United Nations, New York, Resol tion 67/19, UN Doc. A/RES/67/19.
29. Weiner M. 1999, The Palestinian Hamas: Vision, Violence and Coexistence, New York, Palgrave Macmillan, 1–272.
30. Zayani M. 2013, Al Jazeera's Palestine Papers: Middle East Media Politics in the Post-WikiLeaks Era, Media, War & Conflict, vol. 6/1, 21–35.

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՎԱՀԱՅՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

LEGAL ASPECTS IN HISTORIOGRAPHICAL WORKS AND LAPIDARY INSCRIPTIONS OF THE EASTERN PARTS OF ARMENIA

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ В ИСТОРИОГРАФИЧЕСКИХ ТРУДАХ И ЛАПИДАРНЫХ НАДПИСЯХ ВОСТОЧНЫХ КРАЕВ АРМЕНИИ

Վլադիմիր Հովսեփյան
Vladimir Hovsepyan
Владимир Овсепян

Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Philosophy, Sociology and Law, National Academy of Sciences, Armenia
Институт философии, социологии и права, Национальная академия наук, Армения

volodya.hovsepyan@isec.am

Ներկայացվել է՝ 07.05.2025; գրախոսվել է՝ 12.08.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 07.05.2025; Revised: 12.08.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 07.05.2025; рецензировано: 12.08.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-115

Ամփոփում – Հնագիտական և պատմական տվյալները վկայում են, որ միջնադարյան հայկական աղբյուրներում Մեծ Հայքի թագավորության Արցախ և Ուտիք նահանգների տարածքների նկատմամբ կիրառվել են «Հայոց Արևելից կողմանք», «Արևելից աշխարհ», «Աղվանից աշխարհ», «Խորին աշխարհ Հայոց», «Հյուսիս արևելից կողմանք» անվանումները: Պատմաքաղաքական իրադարձությունների հետևանքով Հայոց Արևելից կողմանք, միակցվելով Աղվանից մարզպանությանը, կոչվել է նաև Աղվանք, սակայն հայկական նահանգների առումով ունեցել միայն աշխարհագրական իմաստ: Վերոնշյալ բոլոր եզրույթների առնչությամբ պետք է նկատի ունենալ Հայաստանի «արևելյան կողմ» հասկացությունը: Մեր ուսումնասիրության առարկան վաղ և ուշ միջնադարի այն հատվածն է, որ վերաբերում է առանցքային նշանակություն ունեցող կարևորագույն հարցերից մեկին, որը բազում անհերքելի պատմահրավական փաստեր է պարունակում պատմական Ուտիք և Արցախ երկրամասերի բացառապես հայկական լինելու մասին: Այդ փաստերն արտացոլված են միջնադարյան հայ պատմիչների աշխատություններում և Աղվանից աշխարհում սփռված վիմագիր արձանագրություններում: Աղվանից եկեղեցին, լինելով Հայ առաքելական եկեղեցու մի թեմը, ղեկավարվել է այն բոլոր կանոնահրավական նորմերով, որոնք գործել են Մայր հայրենիքում, և եթե հաճախ միասին վերանայվել ու վերահաստատվել են նոր կանոններ, ապա դրանք համահայկական նշանակություն են

ունեցել: Բացառությամբ հայոց եկեղեցական օրինադիր ժողովների և մի քանի ազգային դատաստանագրքերի, հայ ժողովուրդը միջնադարում օրինակարգված ժողովածուներ, օրենսգրքեր չի ունեցել, որտեղ արտացոլված լինեին հայ իրավունքի բովանդակությունը և ծավալը: Այդ առումով, հայ ժողովրդի արցախյան հատվածի միջնադարյան պատմության մի շարք իրավական հարցերի լուսաբանումն անխզելիորեն կապված է այդ նույն դարաշրջանի հայ իրավունքի հետ: Այդ տեսանկյունից պատմիչների աշխատությունները և վիմագիր արձանագրությունները պարունակում են բավարար տվյալներ:

Abstract – Archaeological and historical data indicate that in medieval Armenian sources the names "Armenian Eastern Side", "Eastern World", "Aluan World", "Deep World of Armenians", "North-Eastern Side" were used for the territories of the provinces of Artsakh and Utik of the Kingdom of Greater Armenia. Due to historical and political events, the Armenian Eastern Side, having merged with the Aluan marzpanate, was also simply called Aluank, but only with a geographical meaning for the Armenian provinces. The subject of the article covers the period of the early and late Middle Ages and touches on one of the most important issues of key importance, which contains many undeniable historical and legal facts about the belonging of the historical territories of Utik and Artsakh to the Armenian people. These facts are reflected in the works of medieval Armenian historians and in the lapidary inscriptions from Aluank. The Albanian Church, being one of the dioceses of the Armenian Apostolic Church, was guided by all the canonical and legal norms, and if new canons were often revised and restored together, they had a pan-Armenian significance. The Armenian people in the Middle Ages did not have unified collections or codes that would reflect the content and volume of Armenian law, with the exception of the Armenian church legislative assemblies and several national court books. In this regard, the coverage of a number of legal issues in the medieval history of Artsakh is inextricably linked with the Armenian law of the same era. From this point of view, the works of historians and epigraphic inscriptions contain sufficient data.

Аннотация – Археологические и исторические данные свидетельствуют о том, что в средневековых армянских источниках для территорий провинций Арцах и Утик царства Великой Армении использовались названия «Армянская восточная сторона», «Восточный мир», «Алуанкский мир», «Глубокий мир армян», «Северо-восточная сторона». В силу исторических и политических событий армянская восточная сторона, слившись с Алуанкским марзпанством, также называлась просто Алуанк, но только с географическим значением для армянских провинций. Все вышеперечисленные термины имеют отношение к понятию восточной стороны Армении. Предметом исследования статьи является рассмотрение множества неоспоримых исторических и юридических фактов о принадлежности исторических территорий Утика и Арцаха армянскому народу. Эти факты отражены в трудах средневековых армянских историков и в лапидарных надписях из Алуанка. Албанская церковь, являясь одной из епархий Армянской Апостольской церкви, руководствовалась всеми каноническими и правовыми нормами, действовавшими на родине, и если новые каноны часто пересматривались и восстанавливались совместно, то они имели общеармянское значение. Армянский народ в средние века не имел унифицированных сборников или кодексов, которые отражали бы содержание и объем армянского права, за исключением армянских церковных законодательных собраний и нескольких общенациональных судебных книг. В этом плане освещение ряда правовых вопросов в средневеко-

вой истории Арцаха неразрывно связано с армянским правом той же эпохи. С точки зрения сказанного труды историков и лапидарные надписи содержат огромный массив данных.

Հիմնաբառեր – իրավունք, Հայոց Արևելից կողմանք, իրավահայտ աղբյուրներ, վիմագրեր:
Keywords – law, Eastern part of Armenia, legal sources, lapidary inscriptions.
Ключевые слова – право, Восточный край Армении, правовые источники, лапидарные надписи.

Ներածություն

Մեծ Հայքի թագավորության անկախության կորստից հետո (428 թ.) նրա Արցախ և Ուտիք երկրամասերը, որոնք հայ մատենագրության մեջ կոչվում են Հայոց Արևելից կողմանք, V դարի 2-րդ կեսին նորաստեղծ Աղվանից մարզպանությանը բռնակցվելուց հետո թեև վարչաքաղաքական առումով հիմնականում կտրված են եղել Մայր հայրենիքից, բայց այդ համընդհանուր երկրամասում կյանքը, ոգին, իրավական ինստիտուտները և առհասարակ ամեն ինչ հայկական է եղել՝ կազմելով հայ ժողովրդի բազմադարյա պատմության մի մասը:

Հայ իրավունքի պատմությունը շաղկապված է երկու գիտությունների՝ հայագիտության և իրավագիտության հետ, որոնցից որևէ մեկի առաջընթացը պետք է խթան դառնա մյուսի համար: Հաշվի առնելով, որ իրավահայտ աղբյուրները բավարար տվյալներ են պարունակում Հայոց Արևելից կողմանց իրավական տեսանկյունների վերաբերյալ, սույն հոդվածի համատեքստում, մի քանի խոսք ասենք իրավունքի էության և հայոց իրավունքի սկզբնաղբյուրների մասին:

Ըստ հայերեն բացատրական բառարանների՝ «իրավունք» եզրույթը, մի շարք այլ նշանակություններին զուգահեռ, ստուգաբանվում է նաև «ինչ որ արդար և իրավ է», «ինչ որ կատարվում է օրենքով, համապատասխան է օրենքին», «Կամք, իշխանություն՝ որոշ սահմանների մեջ», «Որևէ ձևով գործելու ազատություն՝ արտոնություն», «Հիմք, օրինական պատճառ, հիմունք», «Արդարություն», «Որևէ ձևով գործելու ազատություն՝ արտոնություն», «Օրենք, օրինականություն, իշխանություն» իմաստներով (Մալխասեանց 1944, 174, 175; Աճառյան 1972, 361, 362), իսկ «Հայերեն արմատական բառարանի» համաձայն՝ հայերեն «Իր» (բան, մի բան) բառի գործիական հոլովն է իրավ, որ ստացել է մակբայական գործածություն, իսկ հետագայում «իրավունք, դատաստան, արդարադատություն» նշանակությամբ դառնալով գոյական և որպես այդպիսին ըմբռնվելուց հետո տվել է նորանոր ածանցներ՝ հանիրավի, իրավացի, իրավազուրկ, իրավագետ և այլն (Աճառեան 1926, 250):

Ներկայիս գիտության մեջ իրավունքի մասին չկա համընդհանուր ճանաչում ունեցող մոտեցում: Որոշ սահմանումների համաձայն՝ իրավունքը նույնացվում է իրավական համակարգի հետ (օբյեկտիվ իրավունք կամ ուղղակի օրենսդրություն): Ընդ որում, իրավունքը՝ որպես համակարգ, արտահայտվում է իրավունքի ակունքներում, իսկ նրա իրավական բնույթը որոշվում է իրավական նորմերով: Եվ երբ խոսքը իրավական համակարգի մասին է, ապա, ի տարբերություն իրավունքի համակարգի, սովորաբար ենթադրվում են նաև այլ իրավական երևույթներ, իրավական մշակույթ, իրավագիտակցություն և իրավաիրա-

ցում: Իրավագիտության պատմության ողջ ընթացքում իրավունքի աղբյուրների վերաբերյալ համընդհանուր ճանաչում ունեցող սահմանում նույնպես չի տրվել, և այն համարվել է գիտության ամենախճճված հարցերից մեկը (Нерсесянц 1983, 27–29; Нерсесянц 2005, 48; Խրոպանյուկ 1997, 206–209; Ներսեսյանց 2001, 40–47; Марченко 2007, 76; Վաղարշյան 2011, 15–24; Սաֆարյան, Եսայան 2012, 21):

Այդպիսին է վիճակը նաև ներկայիս գիտության մեջ: Ամեն պարագայում իրավունքը հասարակական հարաբերությունների կարգավորիչներից է, որն առաջացել է հասարակության շերտավորմանը զուգընթաց, դասակարգային հարաբերությունների ծագման ընթացքում՝ որպես տիրող դասակարգի՝ օրենքի աստիճանի բարձրացված կամքի դրսևորում, որն սկզբում արտահայտվել է սովորույթներում, հետագայում դարձել օրենք:

Իրավունքի տարբեր հատկանիշներից առավել տարածվածներն են՝ նորմատիվությունը (սահմանում է վարքագծի ընդհանուր կանոններ), համապարտադիր լինելը (գործողությունը տարածվում է բոլորի վրա կամ սուբյեկտների առավել լայն շրջանակի վրա), պետության կողմից երաշխավորված լինելը (պետական հարկադրանքի միջոցներով ամրագրված լինելը), մտակամային բնույթը (իրավունքը արտացոլում է մարդկանց գիտակցությունը և կամքը), որոշակիությունը (իրավունքի նորմերն արտահայտվում են պաշտոնական ձևով), համակարգայնությունը:

Հայոց իրավունքի սկզբնաղբյուրները

Իրավունքը հայ հասարակության պատմության մեջ առաջացել է այն նույն պատճառների և պայմանների ուղիով, ինչ որ պետությունը: Պետության և իրավունքի ծագման գործընթացներն ընթանում են զուգահեռաբար: Միաժամանակ, տարբեր ժողովուրդների մոտ, տարբեր պատմական ժամանակաշրջաններում իրավունքի առաջացումն ունեցել է իր առանձնահատկությունները:

Հայոց իրավունքի և իրավական մտքի պատմության սկզբնաղբյուրներն իրենց արմատներով գնում են խոր հնադար, այսինքն՝ հնում և միջնադարում հայ ժողովրդի իրավունքը և իրավական միտքը պատմականորեն ունեցել են իրենց իրավական աղբյուրները: Դրանք են՝ սովորույթը կամ սովորութային իրավունքը, կանոնական կամ եկեղեցական իրավունքը, օտար իրավունքի ռեցեպցիան (Մովսեսական օրենքները, ասորահռոմեական դատաստանագիրքը, բյուզանդական զինվորական օրենքը և այլն), ազգային դատաստանագրքերը (Դավիթ Ալավկա որդու Կանոնադրությունը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը»): Հայոց իրավունքի համար աղբյուրագիտական արժեք ունի հայ և օտար մատենագիրների՝ Ստրաբոնի, Քսենոփոնի, Ագաթանգեղոսի, Խորենացու, Բուզանդի, Շիրակացու և այլոց թողած ժառանգությունը: Նրանց գործերում որոշակի տվյալներ են պահպանվել վաղ շրջանի հայ իրավունքի պատմության վերաբերյալ: Միաժամանակ, հենց այդ տեղեկություններն են իրավունքի աղբյուրի նշանակություն ձեռք բերել հետագայի համար: Այդ համատեքստում հայ և օտար պատմիչների գործերը, վիմագիր տարեգրություններն ու նյութական մշակույթի այլ հիշատակարաններ

հայոց իրավունքի իրավահայտ աղբյուրներ են (Սամուելյան 1939, 24–90; Сукиасян 1963, 381; Ղազինյան, Վաղարշյան 2014, 55–64):

Միջնադարյան գրավոր աղբյուրները մեզ շատ քիչ տվյալներ են թողել՝ պատկերացում կազմելու, թե հեթանոսական Հայաստանում իրավունքի ի՞նչ ինստիտուտներ են գործել, ինչպե՞ս է իրականացվել արդարադատությունը, գործերի ի՞նչ ընդդատություն է եղել, ի՞նչ լեզվով է տարվել դատավարությունը և այլն: Հարցը դժվարանում է նաև նրանով, որ Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո (301 թ.), նոր գաղափարախոսությունը ոչնչացրեց հայ ժողովրդի հեթանոսական բազմադարյա մշակույթը՝ անհետ վերացնելով պետության իրավական համակարգին առնչվող բազմաթիվ նյութական և ոչ նյութական հուշարձաններ:

Պատմական Հայաստանում հանցագործին պատժելու վերաբերյալ ամենավաղ հիշատակումը գտնում ենք երգիծաբան գրող Լուկիան Սամոսատցու (120–180 թթ.)՝ «Պերեգրինի մահվան մասին» աշխատության մեջ, որին նաև անդրադարձել է Ֆր. Էնգելսը՝ «Նախասկզբնական քրիստոնեության պատմության շուրջ» հոդվածում: Ազգությամբ հույն Պերեգրինը, լինելով փառասեր և արկածախնդիր անձնավորություն, երիտասարդ հասակում Հայաստանում իր ապագա հաջողությունը (կարիերա) սկսեց «շնություն» (ընտանեկան հավատարմության խախտում) անելով և բռնվեց արարքի կատարման վայրում: Տեղական սովորույթների ուժով Պերեգրինը ենթարկվեց ինքնադատաստանի, սակայն, երջանիկ պատահականությամբ, կարողացավ խուսափել մահից՝ տանիքից ցատկելով և թաքնվելով անվտանգ վայրում (Самосатский 2001, 194):

Միջնադարյան Հայաստանում օրենքի և դրա կիրառողների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին: Այն հարցին, թե՝ չարիքներն ի բնե՞ են և ոչ կամածին, Կողբացին պատասխանում է. «Եթե բնութեամբ իցեն, ընդէ՞ր օրէնք ի թագաւորաց դնիցին, և սաստք ի յիշխանաց, պատիժք, և ի դատաւորաց, ո՞չ ապաքէն վասն կարճելոյ չարեացն: Եւս, թէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ չարագործին ածել: Ընդէ՞ր պատժիցեն զայն՝ որ ոչ կամոքն չար իցէ, որում արգահատելն պարտ էր, և ոչ պատիժս, ի վերայ հասուցանել: Իսկ եթե տեսանեմք՝ թե թագաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ և բերէ՝ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ և հայր զորդի մահապարտեալ՝ դատաւրաց մատնէ և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր 27 զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանօք, յայտ է թէ չարիքն՝ որք գործին՝ կամածինք են և ոչ բնականք» (Կողբացի 1994, 48–50):

Հայ պատմիչների գործերը՝ որպես իրավունքի սկզբնաղբյուրներ

Միջնադարյան մի շարք հայ մատենագիրների գործերում որոշակի տվյալներ են պահպանվել Հայոց Արևելից կողմանց վերաբերող թագավորական հրովարտակների, դրանց էության և բովանդակության, իրավական տեսանկյուն-

ների և իրավունքի պատմության հիմնահարցերի վերաբերյալ: Նման տեղեկությունները, որոնք իրավունքի աղբյուրի նշանակություն են ձեռք բերել հետագայի համար, գտնում ենք պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Թովմա Արծրունու և Անանունի, Մատթեոս Ուռհայեցու և այլոց աշխատություններում: Այդ առումով ուշագրավ են Հայոց Արևելից կողմանց աշխարհիկ և հոգևոր տերերի կարգավիճակի հետ կապված այն իրավահարաբերությունները, եկեղեցական, դավանաբանական բնույթի հարցերը, որոնք կարգավորվել են թագավորական հրովարտակներով, կաթողիկոսական կոնդակներով, գրություններով և իրավական բնույթի այլ ակտերով: Ուշադրության են արժանի նաև այն դեպքերը, երբ Այսրկովկասը գտնվում էր օտար նվաճողների տիրապետության տակ, և երկրի շահերի հրամայական պահանջներից ելնելով՝ Արցախի և Ուտիքի տերերը, ներկայանալով օտար իշխողներին, երկիրը կառավարելու համար որոշակի արտոնություններ են ստացել: Ակներև է, որ օտար նվաճողները անողոքաբար ոչնչացրել են հայոց արքունի դիվաններում պահպանվող փաստաթղթերը, և եթե դրանցից ինչ որ մասունքներ պահպանվել են, ապա՝ միայն հիմնականում հայ պատմիչների աշխատություններում: Դիմենք դրանցից մի քանիսին:

Պատմահայր Մովսես Խորենացին հայտնում է, որ Վաղարշակ թագավորի (մ.թ.ա. II դար) հրովարտակով Հայկի ժառանգ Սիսակի սերունդներից մեկը՝ Առան անունով, կողմնակալ է կարգվել Հայաստանի հյուսիսարևելյան կողմերում. նրան էլ ժառանգություն հասավ այդ երկրամասը (Խորենացի 1981, 153, 154; Սվազյան 2006, 7-13; Սվազյան 2015, 218): Երբ Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Գ Մեծ թագավորի հրովարտակով, 302-ին մեծ շքախմբով ուղևորվել է Կեսարիա՝ քահանայապետ օծվելու, նրան ուղեկցող նախարարների և կուսակալների խմբում եղել են նաև «երկուտասաներորդ՝ իշխանն Ծավդէից (իմա՝ Արցախի) աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին» (Ագաթանգեղոս 1914, 488): Վերջիններս իրենց տեղն են ունեցել ինչպես Գահնամակում, այնպես էլ Զորանամակում: Տրդատ արքայի մեկ այլ հրովարտակով Գրիգոր Լուսավորչի թոռը՝ անչափահաս Գրիգորիսը, արևելյան կողմերի հոգևոր պետ է նշանակվել՝ այդ կողմերի աշխարհիկ տերերի խնդրանքով: Հենց Գրիգոր Լուսավորիչն է Արցախի Ամարաս գյուղաքաղաքում հիմնադրել եկեղեցի, որը մեծ դեր է խաղացել Հայոց Արևելից կողմանց հոգևոր և մշակութային կյանքում (Բուզանդ 1968, 129; Խորենացի 1981, 153, 154): Կորյունի հաղորդումներից երևում է, որ հայ գրերի ստեղծող և հայկական դպրոցների հիմնադիր Մեսրոպ Մաշտոցն իր գործունեությունը ծավալել է արքայական հրովարտակների հիման վրա (Կորյուն 1981, 103, 109, 119–121): Ըստ ավանդության՝ նրա շնորհիվ Ամարասի վանքում բացվել է հայկական առաջին դպրոցներից մեկը, որտեղ հայ մանուկները գիր և դպրություն են սովորել:

Միջնադարյան հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու (այլ աղբյուրներում՝ նաև Մովսես Դասխուրանցի) «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքի ԻԶ

գլուխը վերաբերում է Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությանը (Կաղանկատվացի 1969, 65–69), որն ընդունվել է 488 թ. Հայոց Արևելից կողմանց Աղվենի սահմանադիր ժողովում: Հայոց հողում ծնված և հայերեն լեզվով խոսող իրավական մտքի այդ խոշոր հուշարձանը երկար տարիներ ապահովել է երկրամասի հարաբերական անդորրությունը:

Թովմա Արծրունու և Անանունի երկասիրությունները IX դարի 2-րդ կեսի և X դարի սկզբի Հայաստանի պետականության վերականգնման արժեքավոր սկզբնաղբյուր են: Հայաստանի տարբեր վայրերում ծավալված հակաարաբական պայքարի շնորհիվ վերականգնվեց հայոց պետականությունը (885–1045 թթ.): Միայն Արցախի հարավային հատվածում Առանշահիկ իշխան Եսայի Աբու-Մուսեն 28 անգամ ճակատամարտ մղեց Այսրկովկասը հրի մատնած արաբ զորավար Բուղայի բանակների դեմ: Հայ Բագրատունիներն այնքան էին հզորացել, որ քաղաքական և սոցիալ-տնտեսական առումներով Վրաստանը և Աղվանքը գտնվում էին նրանց գերիշխանության ներքո (Արծրունի և Անանուն 1981, 275–289, 296, 297, 366, 367):

Պատմությունը վկայում է, որ դարերի ընթացքում Հայոց Արցախն ու Սյունիքը, լինելով Մայր Հայրենիքի ողնաշարը, օտար զավթիչների դեմ մղված պայքարում միշտ գործել են կողք կողքի և հաղթանակ տարել: Արցախը կոչվել է նաև փոքր Սյունիք (Խորենացի 1981, 244, 245; Դրասխանակերտցի 1996, 46, 47):

Հայ պատմագիրների համաստեղությունում իր ուրույն տեղն ունի Սյունյաց աշխարհի պատմության հեղինակ Ստեփանոս Օրբելյանը, որի աշխատության մեջ մի շարք հարցեր առնչվում են երկու դրկից երկրամասերի վարչական սահմանազատման, քաղաքացիական, հողային և ամուսնական-ընտանեկան իրավահարաբերություններին: Այսպես, Տաթևի վանքապատկան հողերի սահմանազատման շնորհիվ (906 թ.) կազմվել է վճռագիր (վավերագիր), որի տակ իրենց ստորագրությունն են դրել նաև Արցախի և Ուտիքի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները: Դրանից հետո փաստաթուղթ իրենց մատանիներով կնքել են Սյունիքի եպիսկոպոսը, Աղվանքի և Հայոց հայրապետները, իսկ վերջում այն հաստատել և արքայական մատանիով կնքել է հայոց թագավոր Սմբատ Բագրատունին (Օրբելյան 1986, 212): Արցախի գավառից բերված աստվածընկալ խաչի առուձախի պայմանագրի նկարագրությունից ընթերցողը պատկերացում է կազմում, թե նման պայմանագրերը XIII դարում ի՞նչ ձևով են կնքվել, գույքի արժեքն ինչպե՞ս է վճարվել, և կողմերն ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ են ունեցել (Օրբելյան 1986, 378–380):

Հայ առաքելական եկեղեցին երկրորդ պսակի առնչությամբ համապատասխան կանոններ է ունեցել: Մինչև IX դարը երկապսակների ամուսնությունը եղել է կամ եկեղեցու օրհնությամբ, կամ առանց դրա՝ քաղաքացիական կարգով: Ամեն պարագայում երկամուսնության վերաբերյալ հայոց եկեղեցու մոտեցումը բացասական է եղել: Բերենք մի օրինակ. երբ Սյունիքի Տարսայիճ իշխանը Վրաստանի թագավոր Դավթի ուղեկցությամբ գնում է Արցախի Խաչեն գավառ, իշխան Աթաբեկի մոտ և նրա քույր Մինա խաթունին իրեն կին առնում, դեռ իր

առաջին կնոջ կենդանության օրոք, նրա արարքը չի արժանանում եկեղեցու վարդապետների հովանավորությանը, քանի որ դա անհարիր էր հայոց եկեղեցու կանոններին (Օրբելյան 1986, 337):

Միջնադարյան հայ պատմիչների մեծ մասը, որպես կանոն, գրել է զուտ Հայոց պատմություն կամ նույնիսկ մի նահանգի պատմություն: Ընդհանուր կանոնից կան բացառություն կազմող անձինք, որոնցից մեկն էլ Մատթեոս Ուռհայեցին է: Նա իր «Ժամանակագրություն»-ում նկարագրել է 952–1137 թթ. իրադարձությունները, հիմնականում՝ Բագրատունիների թագավորության, նրա կործանման, սելջուկների արշավանքների և նվաճումների, հայերի արտագաղթի, երկրից դուրս հայկական իշխանություններ հիմնելու և օտարերկրյա նվաճողների դեմ նրանց պայքարի մասին: Պատմիչը կարևոր տեղեկություններ է տալիս Աղվանից երկրի մասին՝ այն անվանելով «Խորին Աշխարհ Հայոց», իսկ Պարտավը և Գանձակը՝ հայկական քաղաքներ (Ուռհայեցի 1973, 151–155):

Անվիճելի է, որ Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական միավորներից մեկն էլ Գանձակի երկրամասն էր, որտեղ և ծնվել է միջնադարյան հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Վաղ մանկությունից սովորել է Նոր Գետիկի վանքում՝ Վանական վարդապետի մոտ: 1236-ի գարնանը գերվել է մոնղոլների կողմից (նրանց բանակում եղել է թարգմանիչ ու գրագիր): Գանձակեցու գլխավոր երկը շուրջ հազար տարվա ընդգրկում ունեցող «Հայոց պատմությունն» է, որը պատմիչը հասցնում է մինչև 1265 թվականը: Այս աշխատությունը Հայաստանում մոնղոլական դարաշրջանի ամենահեղինակավոր աղբյուրն է:

Սսի երկրորդ կաթողիկոսական ժողովը (1243), Կիլիկիայի Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու գլխավորությամբ, սահմանել է քսանհինգ կանոն՝ ընդդեմ աշխարհականների և հոգևորականության մեջ տարածված չարաշահումների, կենցաղային ու եկեղեցական ախտերի (մերձամուսնության, ամուսնաթողության, ապօրինի կենակցության) արգելում, պահքերի, աշխարհականների և եկեղեցականների կենցաղի կանոնավորում: Եվ ահա Գանձակեցու պատմության ԽԱ, ԽԲ և ԽԳ գլուխները նվիրված են Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսի շրջաբերական թղթին, կանոնական հրամաններին և կանոնական սահմանադրությանը: Ուշագրավ է, որ այդ կանոնահրավական փաստաթղթի նախագծի մշակմանը մասնակցել է նաև Գանձակեցու ուսուցիչ Վանական վարդապետը: Փաստաթուղթը Հայաստան է բերել Գանձակեցու ուսումնակից Վարդան վարդապետը: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունն են դրել նաև Հայոց Արևելից կողմանց հոգևոր և աշխարհիկ այրերը, որից հետո միայն այն վերադարձվել է Կոստանդին կաթողիկոսին (Գանձակեցի 1982, 210–223):

Գանձակեցու տեղեկությունների համաձայն՝ մոնղոլ-թաթարական տիրապետության պայմաններում, Արցախի իշխանաց իշխան Հասան Ջալալը խոհեմությամբ էր կարգավորում երկրի հարցերը՝ համաձայնության գալով և հաշտություն կնքելով մոնղոլների հետ: Նա մոնղոլ զորավարներից փաստաթուղթ ուներ՝ իր երկիրն ինքնուրույն կառավարելու, սակայն պարտավոր էր նրանց հետ պատերազմի գնալ: Նրա դուստր Ռուզուքանը թաթարների թագավոր Չար-

մաղանի որդի Բորա Նուինի կինն էր: Հենց Հասան Ջալալի միջնորդությամբ Կիլիկիայի Հեթում արքան բարեկամություն հաստատեց մոնղոլական վերնախավի հետ: Այնքան մեծ էր Հասան Ջալալի հեղինակությունը, որ Գանձասար եկեղեցու մեծահանդեսին (1240 թ.) ներկա էին 700 քահանա, այդ թվում՝ Վանական վարդապետը՝ շատ ուսուցիչներով, Աղվանքի Ներսես կաթողիկոսը՝ բազմաթիվ եպիսկոպոսներով և վարդապետներով: Մոնղոլների պետության անունից Ներսես կաթողիկոսը նույնպես արտոնագիր ուներ՝ հոգևոր բնագավառում գործունեություն ծավալելու համար (Գանձակեցի 1982, 192, 194, 203, 204, 207, 208, 257, 258, 267, 280):

Պետահրավական բնույթի վիմագրերը պատմական Արցախի տարածքում

Վիմագիր (պահլավերեն՝ vem-քար և հայերեն՝ գիր բառերից) բառը նեղ իմաստով նշանակում է քարի վրա փորագրված գրություն, սակայն գործածության ընթացքում իմաստն ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև իրերի, առարկաների, պատերի վրա փորագրված հիշատակության և մակագրության նմուշները: Վիմագիր արձանագրությունները չափազանց ստույգ և կարևոր տեղեկություններ են պարունակում հայ ժողովրդի բազմադարյա պատմության տարբեր հարցերի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն: Ընդունված է վիմագրերը բաժանել 4 խմբի՝ շինարարական, հիշատակագրային և նվիրատվական, կրոնաբարոյական և կանոնահրավական: Հայ իրավունքի իրավահայտ աղբյուրներից են նաև այն վիմագրերը, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և աշխարհիկ իրավունքի հարցերի վերաբերյալ:

Եթե հայ պատմիչների աշխատությունները սակավ նյութեր են պարունակում թագավորական հրովարտակների, կաթողիկոսական կոնդակների, զանազան իրավական ակտերի վերաբերյալ, ապա այդ բացն ինչ-որ չափով լրացնում են ժայռերի, քարերի, սահմանապահ կոթողների և եկեղեցիների պատերին փորագրված վիմագիր արձանագրությունները: Ուսումնասիրելով Անիի հնագիտական հուշարձանները՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին նշել է. «Մխիթար Գոշի, Սմբատի և ուրիշների դատաստանագրքերի և այլ իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կայացված հայ իրավունքի պատմությունը, առանց հայկական վիմագրական նյութերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասությամբ, թերասածությամբ, անճշտությամբ և երբեմն նույնիսկ հետևությունների լիակատար սխալությամբ, ինչպես արդեն հնացած ու դեն նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր մեր մատենագրական տվյալների հիման վրա, առանց հնագիտական ու վիմագրական հուշարձանների իրական լուսաբանության» (Օրբելի 1966, VIII):

Հանճարեղ գիտնականի այդ միտքը հավասարապես վերաբերում է նաև Հայոց Արևելից կողմերում ավելի վաղ ստեղծված իրավական մտքի խոշոր հուշարձաններին՝ Վաչագան Բարեպաշտ թագավորի Կանոնական Սահմանադրությանը (488 թ.) և Դավիթ Ալավկա որդու Կանոնական օրինադրությանը (1130 թ.):

Արցախի տարածքում պետականության հարցերի մասին ամենահին արձանագրությունը հայտնաբերվել է 2008 թ.՝ Տիգրանակերտի պեղումների ժամանակ: Քաղաքը գտնվում է արցախյան գոյամարտի տարիներին (1991–1994 թթ.) հայոց բանակի ազատամարտիկների կողմից ազատագրված նախկին Աղդամի շրջանի Վանքասարի ստորոտից բխող Շահբուլաղ անունը կրող աղբյուրի մոտ: Պեղումների ընթացքում բացվել է հայկական եկեղեցի, որի պատի տակ հայտնաբերված և V–VII դարերին վերագրվող խեցեղեն փոքրիկ սկավառակի վրա հայերեն բովանդակությամբ արձանագրությունը մասնագետները վերծանել են. «ԵՍ (ՎԱՉ)Է ԾԱՌԱՅ Տ(ԵԱՌ)ՆԷ» կամ «ԵՍ ՎԱՉ(ԱԳԱՆ) ԾԱՌԱՅ Տ(ԵԱՌ)Ն»: Մասնագետները հավանական են համարում, որ կլոր խեցեղեն սկավառակն արքայական կամ իշխանական կնքադրոշմի դեր է կատարել, որով կարող էին վավերացվել աշխարհիկ կամ հոգևոր փաստաթղթեր կամ եկեղեցական մասնատուփեր (Պետրոսյան, Ժամկոչյան 2009, 166–176):

Հարկ է նշել, որ *Վաչէ* կամ *Վաչագան* անուն կրողները վաղ միջնադարյան Արցախում հանրահայտ անձնավորություններ են եղել: Պատմիչ Մ. Կաղանկատվացին հայտնում է, որ Վաչագան արքան Ամարասում հայտնաբերված սրբերի մասունքները կնքել է արքայական մատանիով, իսկ արքայի կողմից Աղվենի ժողովում ընդունված Կանոնական սահմանադրությունը կնքվել է ինչպես թագավորի, այնպես էլ ժողովի բոլոր մասնակիցների կնիքներով (Կաղանկատվացի 1969, 58, 59, 69): Արցախի ամենաբարեպաշտ թագավորի մարմինն ամփոփված է Մռավ սարի մի լեռնաբազուկի վրա՝ Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղից ոչ շատ հեռու, անմատչելի լեռների մեջ կառուցված՝ Եղիշե առաքյալի կամ Ջրվշտիկ վանքի մոտ: Թագավորի գերեզմանին դրված է առանձին խնամքով պատրաստված և մաքուր տեսքով հղկված մի եռանկյունաձև տապանաքար, որի վրա մատուռ է կառուցված: Իսկ մատուռի խորանի ճակատակալ քարի վրա քանդակված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՎԱՉԱԳԱՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ԱԺ. ՈՂՈՐՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵՒ ՈՅՐ ԾՆՈՂԱՅՆ, ՈՐ ՇԻՆԵՑ ԶԵԿԵՂԵՑԻՍ՝ ՅԱՌԱՋՆՈՐՈՒԹԻ. ՏԵՐ ՍԻՄԵՈՆԻ, ԹԻՒ ՉԼԵ (1286) ԷՐ» (Բարխուդարյան 1982, 110):

Արցախի Տիգրանակերտ քաղաքի մոտակայքում, ազերի գիտնականները 1950-ական թթ. հայտնաբերեցին հայերեն արձանագրությամբ մի տապանաքար: Ըստ ուսումնասիրողների՝ տապանաքարը դրված էր Բագրատունի Համամ թագավորի՝ ողբերգաբար մահացած ավագ որդու գերեզմանի վրա: Ազերիները տապանաքարի հայտնաբերման վայրն անվանեցին Գյավուր կալա (Անհավատների բերդ) և տապանաքարը տեղափոխեցին Ադրբեջանի պատմության պետական թանգարան: Համամ թագավորն արքայական թագ է կրել, և այնքան մեծ է եղել նրա հեղինակությունը, որ նրա միջամտությամբ՝ փրկագնի վճարման դիմաց արաբների կողմից գերված Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսն ազատվել է գերությունից:

Արցախյան հողի վրա մինչև այժմ հայտնի գիր-թվական ունեցող հնագույն վիմագիր արձանագրությունը (853 թ.) հայտնաբերվել է Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ Հակոբա վանքի արևմտյան պատի մեջ: Դա մի խաչքար է, որի պատվանդանին փորագրված արձանագրու-

թյան համաձայն՝ խաչը կանգնեցվել է Հայաղվանքի իշխան Հովհաննեսի օրոք, վանքի եպիսկոպոս Սողոմոնի կողմից (Բարխուդարյան 1982, 12, 14, 15): Հովհաննեսը հայազգի այն իշխանն էր (837–854 թթ.), որն իր կատարած քաջագործությունների համար արաբների կողմից արժանացավ Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների տեր տիտղոսի և պարգևների: Հետագայում քաջ Հովհաննեսի եղբոր՝ Ատրներսեհի որդին, Արևելքի մեծ իշխան Համամ-Գրիգորը, վերականգնեց Հայաղվանքի թագավորությունը (881 թ.):

Հովհաննեսից ոչ պակաս աչքի են ընկել նաև հարավային Արցախի իշխանապետները: Իշխան Եսայի Աբու Մուսեն, որին արաբական աղբյուրները «հայոց պատրիկ» են կոչել, իր հետնորդներին թողել է մի այնպիսի ժառանգություն, որի կրողները «քարակերտ մատյաններում» հանդես են եկել իշխանաց իշխան կամ թագավոր տիտղոսներով: Հադրութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող «Կարմիր եղցու» (եկեղեցի) պատուհանի կամարի քարն ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Ի ՆԽՌ (1000 թ.) թուին Հայոց, ի թագաւորութեանս տեառն Գագիկա՝ որդու Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի շինեցի տուն Աստծո» (Բարխուդարյան 1982, 173): Նույն Գագիկ թագավորը, Արցախի Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղից ոչ հեռու գտնվող Ջուխտ Բարևաձառ ավերակ երկու եկեղեցիներից մեկի խաչքարին փորագրված արձանագրության մեջ հանդես է գալիս որպես Աղվանից պետության (նեղ իմաստով՝ Հայաղվանքի-Վ.Հ.) իշխանաց իշխան (Բարխուդարյան 1982, 169):

Վիմագրերով դժվար չէ ճշտել Արցախի հարավային սահմանները: Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ գտնվող Գտչավանքը, որն ավերվել էր մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ, 1241 թ. վերանորոգեցին Ամարասի երկու վանական եղբայրներ. վանքի հյուսիսային պատին թողած նրանց արձանագրության տվյալներից կարելի է պատկերացում կազմել հարավային Արցախի սահմանների և նրա մեջ մտնող եկեղեցական թեմերի վերաբերյալ: Արձանագրության մեջ թվարկված են եկեղեցական երեք թեմ և վարչատարածքային տասներկու միավոր՝ իրենց անվանումներով, սահմաններով և սահմանային գետերով (Դիվան 1982, 182, 183, Յակոբյան 2009, 73–128): Բնակավայրերի ու գետերի աշխարհագրական անվանումները մեզ հուշում են, որ Արցախի հարավային սահմանն Արաքս գետն էր, ինչպես կար մինչև 44-օրյա պատերազմը, իսկ հյուսիս-արևմտյան սահմանը ներառել է նաև Քաշաթաղի (Լաչինի) շրջանի մի մասը:

Մատենագրության և վիմագրության մեջ չափազանց քիչ տվյալներ են պահպանվել Արցախի արտաքին սահմանների և ներքին վարչատարածքային սահմանաբաժանումների վերաբերյալ: Այդ հարցերում մեզ օգնության է գալիս Մխիթար Գոշը, որը սահմանները բաժանում է չորս խմբի՝ գավառների, գյուղերի (համայնքների), հողամասերի, շենքերի և շինությունների: Համաձայն Գոշի Դատաստանագրքի ՄԽԷ գլխի՝ «Սահմանք գաւառաց լերամբք, եւ գետովք, և արձանօք հաստատեսցին, նմանապէս և՝ գեղից: Եւ գեղք ի սահմանս շինեալք յերկուց կամ երից գաւառաց, զոյգ բաժանեսցին առաւելութեամբ և նուազութեամբ. նմանապէս և՝ անդաստանք և այլք ի սահմանս գեղից, սոյնպես և՝

ծառք բուսեալք ի սահմանս անդաստանաց: Իսկ զմիջոցի ցանկս այգեաց զոյգ երկուքանչիւրքն դիցեն, զի թէպէտ առաջինն իւրոյն աղագաւ եդ, երկրորդին մի՛ լիցի պատճառք՝ միշտ նմա դնել, կամ որ ստացաւ կամ եդ այգի յաղագս այնր, զի մի՛ դից՝ ցանկ: Ըստ այսմ լիցի և տանց որմոց և այլոց այսպիսեաց» (Մխիթար Գոշ 1975, 414): Մեր կարծիքով, «Արձանների» տակ Գոշը նկատի է ունեցել սահմանաքար կոթողները, որոնք գոյություն ունեին դեռևս Արտաշեսյան թագավորության ժամանակ: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ ԼՂ Քարվաճառի շրջանի Դադիվանքի հյուսիսային լեռնաբազուկի վրա հայտնաբերված սահմանակոթող հիշեցնող քարը, շատ նման է այն սահմանաքարերին, որոնք դրվել են գյուղերի և ագարակների սահմանագլուխներին՝ Արտաշես Ա թագավորի ձեռնարկած հողային բարեփոխումների կապակցությամբ, և որոնցից մի քանի տասնյակ հայտնաբերվել են Սյունիքում և Սևանա լճի առափնյա շրջաններում (Հովսեփյան 2016, 126): Պարզորոշ է, որ Քարվաճառի շրջանը Սևանա լճի արևելյան կողմի առափնյա շրջանի շարունակությունն է:

Կենտրոնական և Հյուսիսային Արցախում Առանշահիկ Համամ թագավորի տոհմաշղթան անխափան շարունակեցին նաև նրա սերունդները: Այդ շղթայում իր պատվավոր տեղն ունի Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Հասան Մեծը (1142–1182), որը Դադիվանքում իր իսկ անունից թողած արձանագրության մեջ նշել է, որ քառասուն տարի շարունակ պատերազմներ է մղել հայրենի երկրի թշնամիների դեմ և միշտ էլ հաղթել: Ակնհայտ է, որ միայն հզոր պետականություն ունեցող մարդը կարող է իր երկրում նման բովանդակությամբ արձանագրություն փորագրել տալ: Ճիշտ է, արձանագրությունից չի երևում, թե Հասան Մեծն ո՞ւմ դեմ է պատերազմել: Սակայն նույն վանքի վրա իշխանի կնոջ՝ Արզու խաթունի անունից փորագրված արձանագրությունը հուշում է մեզ, որ պատերազմը մղվել է թուրքերի դեմ հանուն քրիստոնեական հավատի, որի ժամանակ նահատակվել են նաև քաջ իշխանի երկու որդիները (Բարխուդարյան 1982, 198, 199): Այդ արձանագրությունները նաև կարևոր տվյալներ են պարունակում պատմական Արցախի ռազմագիտական պատմությունն ուսումնասիրողների համար: Հասան Մեծին փոխարինել է նրա ավագ որդին՝ իշխանաց իշխան Վախթանգը (1182–1214 թթ.), որի ապարանքում Գոշը ձեռնամուխ եղավ իր Դատաստանագիրքը գրելուն:

Արցախի հռչակավոր իշխանաց իշխան Հասան-Ջալալ Դոլան (1214–1260 թթ.) իր հայրենանվեր գործունեությամբ ու թողած ժառանգությամբ հավերժացավ ոչ միայն գրչագիր մատյաններում, այլև՝ քարագիր արձանագրություններում:

Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ներսում, հյուսիսային պատի ամբողջ լայնությամբ Հովասափ Միակյաց ճգնավորը 1240 թ. արձանագրել է Հասան-Ջալալ Դոլայի ուխտը կամ կտակը (27 տող): Կտակում Հասան-Ջալալը հանդես է գալիս «ԲՆԱԿԱԻՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱՒՈՐ ԽԱԻԽԱՆԱԲԵՐԴԻ ՅՈԳՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՒՔ» խրոխտ տիտղոսներով, իսկ Առաջածոր գյուղի արևելյան մասում գտնվող եկեղեցու մեծ քարի վրա փորագրված արձանագրության մեջ Հասան-Ջալալն իրեն անվանում է «Աստծո արքա… Իշխան Խաչենի և Առանի» (Բարխուդարյան 1982, 38, 88):

Հասան-Ջալալի եղբայրը՝ Սմբատը, Խանչալ խաչ կոչվող վայրում կանգնեցրած արձանագրության մեջ եղբորը ևս «արքա» տիտղոսով է անվանում: Դժվար չէ կռահել, որ նման բարձրահունչ տիտղոսներ կրող անձն օժտված է եղել պետական հզոր իշխանությամբ, որի տիրապետությունը տարածվել է ամբողջ Հայաղվանքի վրա՝ ներառյալ մինչև Կուրի և Արաքսի միախառնվելու վայրը:

Գույքի նվիրատվությունների մասին

Վիմագրերի մեջ մի առանձին խումբ են կազմում այն նվիրատվությունները, որոնք կոչվում են «վախմ» (արաբերեն և թուրքերեն՝ վագըֆ)՝ եկեղեցուն կտակված բարեպաշտական նվեր, որոնք հարկման ենթակա չեն եղել: «Վախմ»-ները եղել են տարբեր տեսակների՝ ագարակներ, այգիներ, արտեր, հանդեր, հողեր, ձիթհանքներ, անասուններ, դրամական միջոցներ և այլն: Այսպես, Մեծառանից Սբ Հակոբա վանքն Արցախի հեղինակավոր ուխտատեղիներից է, եղել է եպիսկոպոսանիստ և երբեմն էլ կաթողիկանիստ, նաև ուսման և դպրության կարևոր կենտրոն: Վանքի պատերին փորագրված մի քանի արձանագրություններ (XIII դ.) կարևոր տեղեկություններ են պարունակում հողային իրավահարաբերությունների, մասնավորապես վանքին հողերի նվիրատվության հարցերի վերաբերյալ: Այսպես, Ասկերանի շրջանի Պտկեսբերգ վանքի արձանագրության համաձայն՝ Ղուկաս վարդապետը Խաչենագետի վրա կառուցած իր ջրաղացը հոգու փրկության համար նվիրել է վանքին: Քաշաթաղի շրջանի Քոչիզ գյուղի եկեղեցու արձանագրությունից տեղեկանում ենք, որ ոմն Հայկազ սրանոցը (ձիթհանք) «վախմ» է արել եկեղեցուն: Մարտունու շրջանի Հերհեր գյուղի Սբ. Գրիգորիս եկեղեցու մուտքի հյուսիսային կողմի արձանագրությունը փաստում է, որ Հերհերի ժողովուրդը, տանուտեր Ղասումի գլխավորությամբ, մեծ և փոքր ճանապարհի վերևի տափը, որն ի սկզբանէ «վախմ» էր Սբ Աստվածածնին, այժմ իրենք «վախմ» են անում Սբ Գրիգորիս եկեղեցուն (Օրբելի 1966, 13):

Անդրադառնալով կանոնահիրավական վիմագրերին՝ հարկ է նշել, որ դրանց մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նվիրագրերը և այն հիշատակագրերը, որոնց հեղինակներն իրական անձնավորություններ էին: Դրա հետ մեկտեղ, բավական շատ են այն նվիրագրերը, որոնց հեղինակներին (նվիրատուներին) հնարավոր չէ պարզել: Մի կողմից էլ, ժամանակը կատարել և կատարում է իր սև գործը, և անխաթար վիճակում գտնվող արձանագրությունների թիվն օրեցօր նվազում է: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ արձանագրությունների մի մասի անհետացումն էլ կապված է մեր իրականության մեջ երբեմնակի կամա-ակամա տեղ գտնող բացասական երևույթների հետ: Ակադեմիկոս Հ. Օրբելին մի այսպիսի դեպք է նկարագրել. «Բավական էր անհեթեթ լուր տարածվեր, թե դատարանը Խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը լուծելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմերով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII–XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություններ, նպատակ

ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելն ապացուցող վավերագրերը» (Բարխուդարյան 1982, 14, 15, 121, 122):

Եթե վիմագրերով ոչ միշտ է հաջողվում պարզել նվիրատուների անձը և սոցիալական կարգավիճակը, ապա ամեն պարագայում նվիրառուները վանքերը կամ եկեղեցիներն են: Վիմագրերում նվիրատվության առարկա են տարբեր տեսակի անշարժ կամ շարժական իրեր, առարկաներ, գույքային պարտականություններ և այլն: Որոշ արձանագրություններում շոշափվում են գույքի պատկանելության, քանակի, արժեքի և օտարման պայմանների, ինչպես նաև նվիրառուների պարտավորությունների վերաբերյալ հարցեր: Քննարկենք դրանցից մի քանիսը:

Արցախի տարածքում նվիրատվության վերաբերյալ թվագրությամբ ամենահին արձանագրությունը զետեղված է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 6–8 կմ դեպի արևմուտք մի սարահարթի վրա գտնվող Խադավանք կամ Խաթրավանք եկեղեցու արևելյան պատի մեջ: Արձանագրության համաձայն՝ տեր Հովհաննեսը 1204 թ. վերակառուցել է այդ եկեղեցին, այնտեղ հավաքել գրքեր, խաչեր և մատյաններ, տնկել Ջոթաց այգին, ապա մի նոր այգի ևս գցել և այդ բոլորը, Հաթերքի իշխանաց իշխան Վախթանգի միջնորդությամբ, հանձնել իր եղբայր Հասանին ու նրա որդիներին: Նույն արձանագրության երկրորդ մասի համաձայն, Հասանն էլ ընդունել է ընծան, ինքն էլ իր հերթին Խնձորաբակի այգին իր սահմաններով նվիրել է վանքին (Բարխուդարյան 1982, 138, 167): Ի դեպ, այգիների նվիրատվության դեպքեր են հիշատակված նաև Անիի Ս. Փրկիչ եկեղեցու 1193 թ. արձանագրության մեջ (Գրիգորյան 2002, 49–52):

Այս փաստերը հիմք են տալիս կարծելու, որ Խաչենի տարածքում տեղական իշխանությունների այսօրինակ գործարքներն անգամ կատարվում էին Վախթանգի և նրա հետնորդների միջամտությամբ: Հատկանշական է, որ նվիրատուները գույքն ընծայել են իրենց հոգու փրկության և մեղքերի թողության համար: Մյուս կողմից, հոգևոր հաստատությունը պարտավորվում է օրինել, պատարագ մատուցել նվիրատուի կամ նրա մերձավոր հարազատների համար կամ էլ նրանց անունները նշել ժամասացության մեջ: Վերջում հավելվում է, որ արձանագրության պայմանները խափանողները պետք է արժանանան Աստծո դատաստանին և 318 հայրապետների նզովքին:

Նման կարգի վիմագրերը ցույց են տալիս, որ «վախմ»-ի ձևով նվիրատվությունները տարածված են եղել XIII–XVI դարերում: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ մոնղոլ-թաթարները, Լենկ-Թեմուրը և թուրքմենական վաչկատուն ցեղերն ասպատակում էին ամբողջ Այսրկովկասը: Իսկ ի՞նչն էր ստիպում հայ ավատատերերին՝ իրենց գույքը նվիրելու կամ էժան վաճառելու հոգևոր հաստատություններին: Պատճառներից մեկն այն է, որ քաղաքական նկատառումներով միջնադարյան վաչկատուն ցեղերի որոշ ղեկավարներ բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում հայ հոգևորականության նկատմամբ՝ վանքապատկան հողերն ազատելով հարկերից ու տուրքերից: Մյուս կողմից՝ հնուց ի վեր պատիվ էր համարվում եկեղեցիների ու վանքերի սրբազան համարված հողում թաղվելու իրավունքը: Այդպիսի պատվի արժանացողը մահից առաջ իր

հոգու պարտքն էր համարում շարժական կամ անշարժ գույքի նվիրաբերումով արտահայտել իր երախտագիտությունը սուրբ ուխտի նկատմամբ: Իսկ երբ մի վանք դառնում էր որևէ գերդաստանի տոհմային տապանատունը, այդ գերդաստանի ժառանգներն արդեն ոչինչ չէին խնայում այն պատշաճ վիճակում պահելու համար: Եվ պատահական չէ, որ եկեղեցիներն ու վանքերը հենց այս եղանակով էլ դառնում էին ամենահարուստ հողատերերը, և նրանցից ամենանշանավորներն իրենց ավատական իրավունքներով ետ չէին մնում աշխարհիկ հզորագույն իշխանավորներից (Ուլուբաբյան 1976, 383): Հենց վերոնշյալ հանգամանքներով պետք է բացատրել այն իրողությունը, որ Արցախի ավատատերերի ամենամեծ նվիրատվություններն արվել են Գանձասարի վանքին: Կա նաև ուշադրության արժանի մեկ այլ պարագա. հայտնվելով քաղաքական անբարենպաստ պայմաններում, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով, հայ ավատատերերը դրանք նվիրում էին հիմնականում սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին: Գանձասարի վանքի պատերին առկա 182 արձանագրությունից 35-ը վերաբերում է նվիրատվություններին:

Շարժական գույքի նվիրատվության առարկա են եղել անասունները (եզներ և կովեր), դրամական միավորները, փողը (դեկան, թուման, ստակ), եկեղեցական սպասավորության առարկաներ (ավետարան, գավազան, խաչ, սկիհ և այլն): Նվիրատվության պայմանագրում, որպես նրա ենթատեսակ, առանձնանում է նվիրաբերությունը, որի տակ նկատի են ունեցել գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, ինչն էլ շեշտվում է գործարքում: Եթե պայմանագրում գույքի օգտագործման նպատակը չի նշվում, ապա այն դիտվում է որպես սովորական նվիրատվություն: Ինչպես Դադիի, այնպես էլ Գանձասարի վանքերի վիմագրերը վկայում են, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կենտրոնացված են եղել իշխող տոհմի ձեռքում, ինչը խոշոր խթան էր եկեղեցական հարստության աճի և զարգացման համար:

Վիմագրերից մի քանիսը կարգավորում են առուծախի պայմանագրերից բխող իրավահարաբերություններ: Ջրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքի արձանագրությունների համաձայն՝ միաբանությունը վանքի համար գնել է այգիներ, հողամասեր և Ավետարան: Մեկ այլ արձանագրություն փաստում է, որ Շերբարիք անունով մեկն իր ռազմի սայլերի կեսը 25 դեկանով (դահեկան, պարսից Դարեհ արքայի պատկերով դրամական միավոր – Վ.Հ.) վաճառել է Շահի որդուն՝ տեր Ռուբենի ներկայությամբ: Առուծախի գործարքի ժամանակը նշված չէ, բայց տեր Ռուբենը հիշատակված է Խաթրավանքի 1267 թ. այլ արձանագրության մեջ (Բարխուդարյան 1982, 107, 128, 129): Արձանագրությունը վկայում է հեռավոր անցյալում պատմական Արցախում եղած առևտրային դրամաշրջանառության հարաբերությունների մասին:

Եզրակացություններ

Միջնադարյան հայ պատմիչների (Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Կաղանկատվացու և այլոց) աշխատությունները, որպես իրավահայտ աղբ-

յուրներ, հավաստի տվյալներ են պարունակում ինչպես պատմական Հայաստանի, այնպես էլ Հայոց Արևելից կողմանց իրավական մի շարք հայեցակարգերի պարզաբանման բնագավառում: Ամեն դեպքում պետք է ելնել նրանից, որ վերջինը հարաբերվել է առաջինի հետ, ինչպես մասը՝ ամբողջի:

Պատմիչների գործերից ակնհայտ է դառնում, որ պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք երկրամասերում, որոնք V դարի 2-րդ կեսին բռնակցվել էին «Աղվանք» կոչվող վարչաքաղաքական միավորին, շարունակել են կիրառվել հայ իրականության մեջ գործածվող կանոնահիրավական նորմերը: Եվ եթե նոր պայմաններում ստեղծվել են իրավական նորմեր պարունակող կանոններ, ապա դրանց մշակման հիմքում դրվել են միայն ու միայն հայ իրավունքի հայեցակարգերը: Իսկ տեղի բնիկ հայությունը, թեկուզև որոշակի ժամանակահատվածներում կտրված էր Մայր Հայրենիքից, սակայն միշտ բարձր է պահել իր ազգային հատկանիշները: Հայոց Արևելից կողմանց վիմագրերը փաստում են, որ այդ երկրամասում ազգային պետական իշխանությունը երբեք չի ընդհատվել, և որ բացի հայերեն վիմագրերից, այլ լեզվով (պարսկերեն) վիմագրերն առնչություն ունեն միայն XIX դարի հետ, ինչը մեզ աներկբա հուշում է, որ մահմեդական տարրը պատմական Արցախում և Ուտիքում բնավորվել է նոր ժամանակներում՝ հասցնելով չորս անգամ փոխել իր այբուբենը, ազգությունը և նախնիներին: Մեր օրերում, երբ Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությամբ ադրբեջանական է համարում, իրավահայտ աղբյուրները և վիմագրերը ոչ միայն խոսուն վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու հարցում, այլև կարևոր կռվան են ադրբեջանական զեղծարարությունները հիմնովին բացահայտելու և հերքելու համար:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության, շոշափվող առանցքային հարցերի շուրջ կարևոր խորհուրդների և դիտարկումների համար շնորհակալություն ենք հայտնում մեր գիտական ղեկավար, ի.գ.դ. Հ. Ստեփանյանին, ի.գ.դ. Գ. Սաֆարյանին, ի.գ.թ. Լ. Ղազանչյանին, պ.գ.դ. Ա. Հակոբյանին և պ.գ.թ. Շավարշ Ազատյանին: Հատուկ շնորհակալություն նաև «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականի խմբագրությանը՝ այս արդիական թեմայի հանրայնացմանն ուղղված հետևողական աշխատանքի համար:

Գրականություն/References/Литература

1. Ագանթագելայ Պատմութիին հայոց 1914, Թիֆլիս, տպարան Ն. Աղանեանի, Պոլից-7: Agatangeghos Armenian History 1914, Tbilisi, N. Aganean, Polic-7 Publication (in Armenian).
2. Ալիշան Ղ. 1901, Հայապատում, Վենետիկ, ի վանք Ս. Ղազարի: Alishan Gh. 1901, Hayapatum, Venice, Monastery of St. Lazarus (in Armenian).
3. Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան»:

Aghayan E. 1976, Modern Armenian Explanatory Dictionary, Yerevan, Hayastan (in Armenian).

գործական կենտրոններից այստեղ թափանցած լինելու վարկածը: Խնդիրն այն է, որ փոքրասիական գորգագործական կենտրոններում չափազանց նկատելի է պատմական Հայաստանի հյուսիսային և արևելյան նահանգների գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի առկայությունը: Մենք բազմիցս անդրադարձել ենք այս հարցին, ուստի բավական է հիշեցնել միայն «Ջրաբերդ վիշապագորգ» տիպի գորգերի ավանդույթների և արցախյան բարբառի ու տարազային համալիրների առկայությունը փոքրասիական հայաշատ գորգագործական կենտրոններում, որոնք 1890-ական թվականներին արձանագրել է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը (Պողոսյան 2012, 51–70; 2014, 102–110; 2018, 226–243):

Ամփոփելով վերն ասվածները՝ կարելի է եզրակացնել, որ քննության առարկա ենթախմբին պատկանող գորգերի բոլոր տիպերն էլ առաջին հերթին բնորոշ են Արցախ-Ուտիք-Գուգարք նահանգների գորգագործական կենտրոններին: Բացի դրանից, այդ կենտրոնների հայոց տեղաշարժերի հետևանքով, գորգերի այլ տիպերի հետ միասին, նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբին վերաբերող ավանդույթներն են արմատավորվել բնակության նոր վայրերում՝ մասնավորապես փոքրասիական գորգագործական կենտրոններում:

«Լոռի-Փամբակ» գորգի գորգադաշտի խորհրդաբանության մասին



Նկ. 11. «Լոռի-Փամբակ» փոքրասիական տարբերակը

Մեր նախորդ հրապարակումներում առիթ ենք ունեցել անդրադառնալ սկզբնական գորգի ծիսամոգական նշանակությանն ու դրա հետ կապված հետագա զարգացումներին (Պողոսյան 2000, 182–183; 2022, 64, 69): Մասնավորապես կարևորել ենք գորգադաշտի և այն երիզող գոտիների գեղազարդման հիմնական հորինվածքների նշանակությունը: Մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերն ու գրավոր և պատկերային սկզբնաղբյուրները հնարավորություն են տվել եզրահանգելու, որ գորգն ու գորգադաշտը հայոց մեջ ի սկզբանե ընկալվել են որպես արգասավորության ու պտղաբերության միջավայր: Գորգադաշտը ընկալվում էր իբրև չարի ներգործությունից եզրագոտիներով պաշտպանված տարածք: Այս պարագայում էլ չափազանց կարևորվել է գոտիների՝ մասնավորապես կենտրոնական լայն գոտու գեղազարդման տարրերի

ընտրությունը: Ավանդաբար, հայոց գորգերի գեղազարդման համակարգերում լայն գոտու գեղազարդման համար հիմնականում ընդունվում էին գալարանախշեր, ատամնազարդ կամ կեռիկազարդ գունաշերտեր, աստղաձև, խաչաձև, օձագալար, պայտաձև զարդեր և այլն (Poghosian 2001, 156–162): Մենք հիմք ունենք առանձնապես կարևորելու այդ հանգամանքը՝ նկատի ունենալով այն, որ հայոց գորգերի լայն եզրագոտիների թվում բավականին մեծ տարածում ունի պայտաձև զարդը, որը հայտնի է նաև *դաղդան* անվանումով (Poghosian 2001, 162; Պողոսյան 1983, 56): Ակնհայտորեն նույն իմաստն ունի նաև «Լոռի-Փամբակ» տիպին բնորոշ «եռաժանի» զարդի շարանով ծածկված լայն գոտին: Շեշտենք, որ այդօրինակ պատկերացումները գոյություն ունեին մինչև 1950–60-ական թվականները, երբ գորգ գործելու տարածքն ու գորգագործական տորքը չար աչքի ներգործությունից պաշտպանելու համար նույնպես օգտագործում էին չարխափան հմայական միջոցներ (Poghosian 2001, 162):

Գորգադաշտի սրբազնացված լինելը հայոց գորգագործական մշակույթի մի շարք կենտրոններում դրսևորվում էր առանձնահատուկ մեկնաբանությամբ. այն համարվել է «տափ», այսինքն, գետին՝ «մայր հող»: Ընդ որում՝ այդպիսին համարվում էին առաջին հերթին կարմիր հիմնագույնով գորգերը (Պողոսյան 1984–1991, 64, 105):

Անտարակույս, հենց մի այդպիսի չար աչքից պաշտպանված անաղարտ տարածքում պետք է ծնվի մեռնող և հառնող բնությունը խորհրդանշող առասպելական կերպարը: Հիսուս Քրիստոսի ծնվելու և ընդհանրապես ծիսամոգական հատկանիշներով օժտված գորգի հետ կապված նման մի պատմություն 1640-ական թվականներին Վաղարշապատում գրի է առել թուրք ուղեգիր Էվլիա Չելեբին (Poghosian 2001, 162):

Գորգի «սրբազնացված տարածք» հասկացության և ընդհանրապես ծիսամոգական հատկանիշների առումով առանցքային նշանակություն պետք է ունենար գորգադաշտի հիմնական հորինվածքը: Անշուշտ, կոնկրետ օրինակների ու սկզբնաղբյուրների բացակայության պայմաններում դժվար է հստակորեն մատնանշել գորգի որևէ առանձին տիպ կամ տարբերակ, որը հատկապես նախատեսված լիներ միայն ծիսական արարողություններում գործածելու համար: Այս պարագայում, մենք ելակետային ենք համարում հենց հիմնական հորինվածքն ու դրա պարունակած խորհուրդը:

Տվյալ դեպքում հիմնական հորինվածքը բնորոշվում է ոճավորվածության, ուստի նաև ծիսամոգական պատկերացումներ պարունակելու հատկանիշներով: Դա առաջին հերթին ներկայացնում է խաչը՝ արևի, կյանքի և բնության հավերժության հետ կապված հնամենի պատկերացումների խորհրդանշաններից մեկը: Բայց մենք տեսնում ենք, որ այստեղ այն լրացված է հավերժությունն ապահովող, պտղաբերությունն ու արգասավորությունը խորհրդանշող տեսարաններով: Դրանք խաչազարդի ուղղաձիգ առանցքի գագաթները եզրափակող կենդանակերպ, դիմահայաց պատկերված զույգ ոճավորումներն ու կակաչկոկոնանախշերն են: Անտարակույս, այս հորինվածքի սկզբնական, առաջին

գծանկարը կազմողը օգտվել է իր ձեռքի տակ եղած հնամենի օրինակից և հենց դրանով էլ ծածկել է իր ստեղծած, ծիսամոգական հատկանիշներով օժտված գորգի սրբազան ու կենսաբեր տարածքը:

Եզրակացություններ

1. Ամփոփելով վերն ասվածները՝ եզրակացնում ենք, որ քննության առարկա ենթախմբին պատկանող գորգերի բոլոր տիպերն էլ առաջին հերթին բնորոշ են պատմական Հայաստանի Արցախ-Ուտիք-Գուգարք նահանգների գորգագործական կենտրոններին: Բացի դրանից, այդ կենտրոնների հայոց՝ տարբեր ժամանակաշրջաններում կատարած տեղաշարժերի հետևանքով, գորգերի այլ տիպերի հետ միասին, նաև «Լոռի-Փամբակ» ենթախմբին վերաբերող ավանդույթներն են արմատավորվել բնակության նոր վայրերում, մասնավորապես փոքրասիական գորգագործական կենտրոններում: Այդ գորգերը գեղազարդման արվեստի ու հորինվածքների խորհրդաբանության առումով առանձնակի տեղ ունեն հայոց գորգարվեստում և ընդհանրապես հայոց պատմամշակութային ժառանգության մեջ:

2. Խնդրո առարկա ենթախմբին միավորող հիմնական հորինվածքի՝ «Լոռի-Փամբակ» խաչազարդի բոլոր տարբերակներն էլ բնորոշվում են կառուցվածքային հիմնական սկզբունքով՝ խաչի ուղղաձիգ թևերի գագաթներն ավարտվում են դիմահայաց պատկերված կենդանակերպ զույգ ոճավորումներով, իսկ հորիզոնական թևերը՝ գծայնացված մեկական «կակաչ» բուսածաղկային վարդակով:

3. «Լոռի-Փամբակ» խաչազարդը, որպես այդպիսին, եղել է նաև ասեղնագործության բարդ տեխնիկաներով իրականացված պատի զարդ-գորգիկների հիմնական հորինվածքը: Պահպանված սակավաթիվ նմուշները մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այդ ավանդույթը հատկապես հայտնի էր Հյուսիսային Արցախի մշակութային կենտրոններում՝ մասնավորապես վանական խոշոր համալիրներին կից մենաստաններում:

4. Առանձնակի խորհրդաբանական բովանդակություն է պարունակում ենթախմբի գորգերի հիմնական հորինվածքը: Որպես խաչ՝ այն ինքնին ներկայանում է որպես կենաց ծառ ու այդ առումով էլ խորհրդանշում է ի սկզբանե սրբազնացված գորգադաշտին վերապահված պտղաբերության ու արգասավորության գաղափարը: Չարխափան գոտիներով շրջանակված այդ տարածքը, ըստ հայոց հնամենի ծիսամոգական պատկերացումների, համարվում էր անվտանգ ու անարատ, որը կենսաբեր էր և կարող էր ծնունդ տալ ու վերակենդանացնել մարդուն ու բնությանը:

Այս առումով էլ մենք կարևորում ենք սույն գորգերի գեղազարդման համակարգն ու հատկապես «Լոռի-Փամբակի» խաչազարդ, դասական հորինվածքը՝ որպես առասպելական գորգի երբեմնի ծիսամոգական էության հետ կապված պատկերացումների բացահայտման աղբյուր:

Շնորհակալական

Աշխատանքի ընթացքում տված օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Սվետլանա Պողոսյանին:

Գրականություն/References/Литература

1. Բարխուտարեանց Մ. 1999, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, հատորը կազմեց՝ Պ. Չոբանյանը, Երևան, Գանձասար աստվածաբանական կենտրոն:
   Bishop Barkhutariants M. 1999, The Land of Aluank and the Neighbours. Artsakh, Compiled by P. Chobanyan, Yerevan, Gandzasar Theological Center (in Armenian).
2. Թաթիկյան Վ. 2004, Արցախի տոհմագորգերը, Երևան, «Լուսաբաց»:
   Tatikian V. 2004, Ancestral Carpets of Karabagh, Yerevan, Lusabats (in Armenian).
3. Լալայան Ե. 2004, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն»:
   Lalayan E. 2004, Borchalu District, Works, vol. III, Yerevan, Gitutyun (in Armenian).
4. Լեո 1985, Իմ հիշատակարանը, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Սովետական գրող», 32–180:
   Leo 1985, My Diary, Collection of Works, Yerevan, Sovetakan Grogh, 32–180 (in Armenian).
5. Պողոսյան Ա. 2010, «Լոռի-Փամբակ» ենթախմբի գորգերի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 12, 139–145:
   Poghosyan A. 2010, About Carpets of the Subgroup «Lori-Pambak», Collection of Scientific Articles of Gavar State University, N 12, 139–145 (in Armenian).
6. Պողոսյան Ա. 2011, Հարթակարով ասեղնագործության ավանդույթների մասին, Էջմիածին, Է, 53–60:
   Poghosyan A. 2011, On the Tradition of Satin-stitch Embroidery, Etchmiadzin, N 7, 53–60 (in Armenian).
7. Պողոսյան Ա. 2012, Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին, Էջմիածին, Ա, 51–70:
   Poghosyan A. 2012, On the Armenian Carpet Weaving Culture of Dersim, Etchmiadzin, N 1, Etchmiadzin, 51–70 (in Armenian).
8. Պողոսյան Ա. 2014, Մայր Աթոռի գորգերի հավաքածուի նոր համալրումների մասին (2008–2014 թթ.), Էջմիածին, Ը, 128–137:
   Poghosyan A. 2014, On New Additions to the Carpet Collection of the Mother See of Holy Etchmiazin (2008–2014), Etchmiadzin, N 8, 128–137 (in Armenian).
9. Պողոսյան Ա. 2014, Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկրորդ կես – XX դ. առաջին քառորդ), Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն», 102–110:
   Poghosyan A. 2014, Carpet Weaving in Asia Minor (Second half of the 19th Century – First Quarter of the 20th Century), Armenian Folk Culture XVI, Traditional and Modern in

Armenian Culture, Papers in Memoriam of Derenik Vardumyan, to mark his 90th Anniversary, Yerevan, Gitutyun, 102–110 (in Armenian).

10. Պողոսյան Ա. 2018, «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական ու տիպաբանական հարցերի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 5, 226–243:
Poghosyan A. 2018, On the Genetics and Typology of the Rugs belonging to the "Jraberd" Group, Collection of Scientific Articles of Gavar State University, N 5, 226–243 (in Armenian).
11. Պողոսյան Ա. 2000, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 175–184:
Poghosyan A. 2000, On the Guestion of the Kultand Ritual Significance of the Carpet, Historical-Philological Journal, N 1, 175–184 (in Armenian).
12. Պողոսյան Ա. 2022, Գորգը Հայ առաքելական եկեղեցու արարողակարգերում, Էջ-միածին, Զ, 64–79:
Poghosyan A. 2022, Carpet in the Rites of the Armenian Apostolic Church, Etchmiadzin, N 6, Etchmiadzin, 64–79 (in Armenian).
13. Պողոսյան Ա., Դաշտային ազգագրական նյութեր 1984–1991:
Poghosyan A., Ethnographic Field Materials 1984–1991.
14. Րաֆֆի 1987, Երկու ամիս Աղվանից և Սյունաց աշխարհներում, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, «Սովետական գրող», 230–289:
Raffi 1985, Two Months in the Worlds of Aghvan and Syunik, A Collection of Works, vol. 9, Yerevan, Sovetakan Grogh, 230–289 (in Armenian).
15. Керимов Л. 1983, Азербайджанский ковер, т. 3, Баку, «Гянджлик».
Kerimov L. 1983, Azerbaijani Rug, h. 3, Baku, Gianjlic (in Russian).
16. Саркисян Г. 2002, Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, «Гитутюн».
Sargsyan H. 2002, The Population of Eastern Armenia in the 19th – early 20th Centuries, Yerevan, Gitutyn (in Russian).
17. Bennet J. 2000, Oriental and African Rugs and Carpets. Rugs & Carpets of the World, London, Chartwell Books.
18. Poghosyan A. 2001, Carpets. Armenian Folk Arts, Abrahamian L., Sweezy N. (eds), Culture and Identity, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 150–165.
19. Tschebull R. 1978, Entwieklung von vier Kasak-Mustern. Hali, h. 1, N 3, London, Hali Press, 257–261.

ԳՐԱՖԻԿԱՆ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ
GRAPHICS IN THE ART OF HMAYAK HAKOBYAN
ГРАФИКА В ТВОРЧЕСТВЕ АМАЯКА АКОПЯНА

Արմինե Պետրոսյան
Armine Petrosyan
Армине Петросян

Արվեստի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Art Institute, National Academy of Sciences, Armenia
Институт искусств, Национальная академия наук, Армения

armine.petrosyan@arts.sci.am

Ներկայացվել է՝ 11.03.2025; գրախոսվել է՝ 10.08.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 11.03.2025; Revised: 10.08.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 11.03.2025; рецензировано: 10.08.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-235

Ամփոփում – Գրաֆիկ-նկարիչներին միավորում է աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքը արտահայտելու նոր ձևերի որոնումը՝ սահմանափակ արտահայտչամիջոցների օգտագործմամբ: Գծանկարը զարգացում ապրեց Եվրոպայում Ռեմբրանդտ վան Ռեյնի, Ֆրանցիսկո Գոյայի, Ալբրեխտ Դյուրերի, Օնորե Դոմիեի, Ժան Էնգրի, Անտոնիս վան Դեյքի և այլ նկարչիների ստեղծագործություններում: Գրաֆիկայի բնագավառում ստեղծագործել են ռուս հայտնի արվեստագետներ Իլյա Ռեպինը, Վալենտին Սերովը, Վասիլի Սուրիկովը և այլն, իսկ հայ կերպարվեստում՝ Հարություն Շամշինյանը, Հմայակ Հակոբյանը, Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Հմ. Հակոբյանի գծանկարային արվեստը հայ գրաֆիկական մտածողության մեջ առանձնանում է որպես ինքնատիպ և բովանդակությամբ հարուստ երևույթ: Հմ. Հակոբյանի ստեղծագործություններում գիծը վերածվում է ոչ միայն ուրվագծի, այլև ամբողջական լեզվի, որով արվեստագետը հաղորդում է կերպարի ներաշխարհը և բնության ներդաշնակությունը: Նրա գծանկարը հաճախ անցնում է իր սոսկ տեխնիկական սահմանները՝ դառնալով ինքնուրույն գեղարվեստական արտահայտություն: Հմ. Հակոբյանի աշխատանքներում նկատվում է եվրոպական գրաֆիկական ավանդույթների ազդեցությունը, որը, սակայն, ենթարկվում է հեղինակի անհատական ձեռագրին և ազգային գեղարվեստական մտածողությանը: Այս համադրության շնորհիվ տաղանդավոր նկարիչը ձևավորեց յուրահատուկ ոճ, որտեղ դասական ճշգրտությունն ու ազատ ստեղծագործականությունը հանդես են գալիս հավասարաչափորեն: Վարպետի գծանկարային ժառանգությունը կարևոր նշանակություն ունի հայ արվեստի պատմության համար. այն բացահայտում է գծի՝ որպես հույզերի, շարժման և գաղափարներ կրողի անսահման

հնարավորությունները: Նրա գործերը շարունակում են մնալ ուսումնասիրությունների և համեմատական վերլուծությունների արժեքավոր նյութ՝ ընդգծելով գրաֆիկական արվեստի կարևոր դերը ազգային և համաշխարհային մշակութային համատեքստում:

Abstract – Graphic artists are united by their search for new ways to express own view of the world using limited means of expression. Drawing evolved in Europe through the works of Rembrandt van Rijn, Francisco Goya, Albrecht Dürer, Honoré Daumier, Jean Ingres, Anthony van Dyck, and others. Among renowned Russian graphic artists are Ilya Repin, Valentin Serov, Vasily Surikov, and others. In Armenian visual art, notable figures include Harutyun Shamshinian, Hmayak Hakobyan, Vardges Surenyants, Gevorg Bashinjaghian, Panos Terlemezian and more. Hmayak Hakobyan's graphic art stands out as a unique and rich phenomenon in Armenian graphic thought. In his works, the line becomes not just an outline but a complete language through which the artist conveys the inner world of the character and the structural harmony of nature. In his approach, drawing often goes beyond its purely technical boundaries and becomes an independent form of artistic expression. European graphic traditions are evident in his works, yet this influence is always subordinated to the artist's individual style and national artistic thinking. Through this synthesis, Hmayak Hakobyan developed a distinctive style where classical precision and creative freedom coexist in balance. His graphic legacy holds great importance for the history of Armenian art, revealing the limitless possibilities of line as a bearer of emotions, movement, and ideas. His works remain valuable material for study and comparative analysis, highlighting the crucial role of graphic art in both national and global cultural contexts.

Аннотация – Художников-графиков объединяет стремление выразить своё отношение к миру через поиск новых форм с использованием ограниченных выразительных средств. Графика получила развитие в Европе в творчестве Рембрандта ван Рейна, Франсиско Гойи, Альбрехта Дюрера, Оноре Домье, Жана Энгра, Антониса ван Дейка и других художников. Среди известных русских мастеров графики можно отметить Илью Репина, Валентина Серова, Василия Сурикова и т.д. В развитии армянского изобразительного искусства важную роль сыграли Арутюн Шамшинян, Амаяк Акопян, Вардгес Суренянц, Геворг Башинджагян, Панос Терлемезян и другие. Графическое искусство Ам. Акопяна выделяется самобытностью мышления и техническим мастерством. В его произведениях линия становится не только контуром, с помощью которого художник передаёт внутренний мир образа, но и часто выходит за рамки чисто технической задачи, становясь самостоятельным художественным воплощением. В работах художника ощущается влияние европейских графических традиций, однако это влияние всегда подчинено индивидуальному стилю автора и национальному художественному мышлению. Благодаря такому сочетанию Ам. Акопян сформировал уникальный стиль, в котором сочетаются классическая точность и свободное творчество. Его графическое наследие имеет важное значение для истории армянского искусства: оно раскрывает безграничные возможности линии, которая передает эмоции, движение и идеи. Работы художника продолжают оставаться ценным материалом для исследований и сравнительного анализа, подчеркивая значимость графического искусства в национальном и мировом культурном контексте.

Հիմնաբառեր – Հմ. Հակոբյան, գծանկար, դիմանկար, բնանկար, արվեստ:
Keywords – Hm. Hakobyan, graphic drawing, portrait, landscape, art.

Ключевые слова – Ам. Акопян, графический рисунок, портрет, пейзаж, искусство.

Ներածություն

Գրաֆիկան՝ որպես կերպարվեստի տեսակ, մեծ տարածում է ստացել բնանկարի, դիմանկարի, նատյուրմորտի և այլ ժանրերում: Գիծը պատկերվող առարկայի դիրքի արտահայտման հիմնական միջոցն է և, անկախ ընդհանուր պատկերից, ունի իր գեղագիտական արժեքը:

Համաշխարհային կերպարվեստի տաղանդավոր ներկայացուցիչները ստեղծել են գծանկարներ, որոնք վկայում են նրանց տեխնիկական վարպետության և դիտողականության մասին, և որոնք դարձել են արվեստի գլուխգործոցներ:

Ինչպես նկատում է արվեստաբան Վ. Բադալյանը, «Նկարիչը մեծ մասամբ գծանկար է անում իր համար՝ իբրև ճեպանկար կամ ապագա հորինվածքի էսքիզ, որպես շրջակա աշխարհի, առարկաների ու երևույթների ուրվանկար: Շնորհիվ այս ամենի գծանկարը օժտված է այն յուրատեսակ հատկություններով, որոնք բացահայտում են հեղինակի անձը, նրա ուրույն ձեռագիրը. հենց գծանկարում է նա արտահայտում իր առաջին տպավորությունը, պարզաբանում մտահղացումը: ...Յուրաքանչյուր նկար հիմնականում գնահատվում է ըստ նրանում ձեռք բերված պատկերային ու ռիթմիկ արտահայտչականության աստիճանի» (Բադալյան 2014, 9–10):

Գծանկարը զարգացավ Իտալիայում և հատկապես Հոլանդիայում՝ հանձինս Ռեմբրանդտ վան Ռեյնի, որի ստեղծագործություններում այն առանձնահատուկ տեղ է գրավում: Մեծ հոլանդացին ընդլայնեց գծանկարի հնարավորությունները՝ այն դարձնելով ավելի գեղանկարչական և նրան հաղորդելով հոգեբանական ուղղվածություն: Պատահական չէ, որ Ռեմբրանդտին համարում են գծանկարի անգերազանցելի վարպետ: Մեզ են հասել մեծ նկարչի ձեռքով արված բազմաթիվ գծանկարներ, որոնք նրա ապրած կյանքի ինքնատիպ վավերագրերն ու երկխոսությունն են սեփական «ես»-ի հետ, նաև խորհրդածություններ ու մտորումներ: Ռեմբրանդտյան գրաֆիկան հետաքրքիր զարգացում ստացավ Ֆրանցիսկո Գոյայի, Ալբրեխտ Դյուրերի, Օնորե Դոմիեի, Անտոնիս վան Դեյքի, Վալենտին Սերովի և այլ նկարչիների ստեղծագործություններում: Գրաֆիկայի վարպետ Ժան Էնգրի գծանկարների ալբոմը նման է օրագրի, որտեղ յուրաքանչյուր տող գրված է անկեղծությամբ:

Երբեմն ինքնաբուխ արված գծանկարը ավելի շատ բան է ասում նկարչի մասին, քան ամիսների ընթացքում ստեղծված որևէ կտավ: Մաքուր թուղթը ստեղծագործողի համար անսահման տարածություն է, որը մատիտի մի քանի շարժումով վերածվում է անտառի, պուրակի, մարգագետնի և այլնի:

Հատկանշական է գծանկարի բնութագրումը ռուս հետազոտողների կողմից. «Գծանկարի բարդությունը նրա լեզվի պայմանականությունն է ... Հիրավի, աշխարհն անսահման է, սակայն այն պետք է պատկերել թղթի սահմանափակ տարածքի վրա: Յուրաքանչյուր իր, առարկա ունի իր ծավալը, իսկ մենք այդ ամենը պատկերում ենք հարթության վրա... կյանքում կա տարածք՝ որոշ առար-

կաներ մոտ են [տեղադրված], մյուսները՝ հեռու, բարձր կամ ցածր …գծանկարիչն ունի միայն հարթություն» (Каретникова, Климова 1964, 4): Եվ այս պայմանականության հաղթահարումը պահանջում է մեծ վարպետություն:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը նշում է. «Գրաֆիկան կերպարվեստի մեկ այլ՝ գեղանկարչությանը և քանդակագործությանը նախորդած տեսակ է, որի ակունքները պետք է փնտրել նախնադարյան մարդու ձեռքով ժայռաքարերի կամ ոսկրի վրա փորագրված գծանկարներում» (Աղասյան 2020, 9):

Ընդունված է նաև գծանկարը համարել սևագիր արվեստ, քանզի թե՛ գեղանկարիչը, թե՛ քանդակագործը նախ գծանկարում են և ապա արարում իրենց մտահղացումները՝ յուրաքանչյուրն իր տեխնիկայով:

Ըստ գրաֆիկայի վարպետ Վ.Ա. Ֆավորսկու՝ «գրաֆիկայի ամենաընդհանուր տարբերակիչ առանձնահատկությունը պատկերված առարկայի հատուկ հարաբերակցումն է տարածության հետ, որի դերը մեծ մասամբ կատարում է թղթի ֆոնը» (Графика как вид изобразительного искусства):

Գծանկարային գործերը պահանջում են մանրակրկիտ և նրբին մոտեցում, քանի որ, օգտագործելով գծանկարի տեխնիկական արսենալի բոլոր հնարները՝ շտրիխներ, ուրվագծեր, կետեր, գծեր, լույս ու ստվեր և նույնիսկ բծեր, գեղանկարիչը ստեղծում է արվեստի գործեր, որոնք նույնքան տպավորիչ են, որքան գեղանկարչական աշխատանքները:

Ֆրանսիական կլասիցիզմի հիմնադիր Նիկոլա Պուսսենի բնութագրմամբ՝ «…գծանկարում է հիմնականում դրսևորվում արվեստը, և մեծ արվեստագետ է նա, ով մեծ է իբրև գծանկարիչ» (Վանո Խոջաբեկյանի առեղծվածը 1875–1922 2005, 7):

Գծանկարը եվրոպացի, ռուս և հայ նկարչիների գործերում

Փորձենք համեմատական վերլուծություն կատարել պատմական տարբեր ժամանակահատվածներում ստեղծագործող արևմտաեվրոպական, ռուս և հայ գեղանկարիչների արվեստի գեղարվեստաոճական առանձնահատկությունների վերաբերյալ:

Գրաֆիկայով զբաղվող նկարիչներին միավորում է աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքի արտահայտման նոր ձևերի որոնումը սահմանափակ արտահայտչամիջոցների օգտագործմամբ: Յուրաքանչյուր նկարիչ ունի իր վրձնի ու մատիտի ձեռագիրը, բայց միևնույն ժամանակ ամեն մեկը հակված է այս կամ այն տեխնիկական միջոցի կիրառմանը:

Գերմանացի նկարիչ, գրաֆիկ, փայտի փորագրության մեծագույն վարպետ Ալբրեխտ Դյուրերը ժամանակակիցների դիմանկարներում պատկերել է ինքնատիպ բնավորություններ: Նրա՝ կենդանիներին և բնության տարրերը պատկերող գծանկարները առանձնանում են ստեղծագործական բարձր վարպետությամբ ու դիտողականությամբ:

Հոլանդացի գրաֆիկ Անտոնիս վան Դեյքը ստեղծել է դիմանկարային այնպիսի կերպարներ, ընդհանրացված այնպիսի տիպեր, որոնց կեցվածքը, շարժումը, նույնիսկ դիմագծերը կրկնօրինակում էին տաղանդավոր նկարիչները: Նրա զուսպ ու թովիչ նկարչական ոճը, կերպարների փիլիսոփայական մեկնաբանությունը նախատիպի դեր խաղացին եվրոպական դիմանկարային արվեստում:

Ռեմբրանդտի գծանկարները հաճախ դինամիկ են՝ հագեցած արտահայտիչ շտրիխներով, որոնք դիտողի մոտ հուզական լարվածություն են ստեղծում:

Նկատենք, որ որոշակի նմանություն է առկա եվրոպացի նկարիչների և Հմ. Հակոբյանի գծանկարային արվեստում: Դրանք են՝ հոգեբանական շեշտադրումն ու մարդկային կերպարի ուսումնասիրությունը, իսկ տարբերակիչ առանձնահատկությունները՝ հավասարակշռված գիծը և սահմանափակ լուսաստվերային էֆեկտը, մինչդեռ, օրինակ, Ռեմբրանդտը ազատության և դրամատիզմի ջատագովն է, Դյուրերը՝ տեխնիկական ճշգրտության:

Իսպանացի գեղանկարիչ, փորագրիչ, ռոմանտիզմի ժամանակաշրջանի գեղարվեստի առաջին և հեղինակավոր դեմքի՝ Ֆրանցիսկո Խոսե դե Գոյայի գրաֆիկական աշխատանքներում տոնական ու լուսավոր նրբերանգները փոխարինվում են լույսի ու ստվերի սուր հակադրություններով: Ի տարբերություն Ֆ. Գոյայի՝ Հմ. Հակոբյանի գծանկարներում, հատկապես դիմանկարներում, կարևոր է կերպարի ներքին հոգեվիճակի փոխանցումը: Երկու նկարիչների գծանկարները կառուցված են կյանքի թաքնված, երբեմն դրամատիկ կողմերի հոգեբանական բացահայտման վրա: Հմ. Հակոբյանի գծանկարներում գերակշռում են դիմանկարները և հատկապես հայ մարդու կերպարը՝ հոգեբանորեն վերլուծված, իսկ Ֆ. Գոյայի արվեստը հագեցած է ալեգորիկ-ֆանտաստիկ պատկերներով, սարսափի ու երազի սահմանին գտնվող տեսարաններով: Հմ. Հակոբյանի գծերը հաճախ ավելի կառուցվածքային են՝ կապված ակադեմիական դպրոցի ավանդույթների հետ, բայց տոգորված՝ ներքին արտահայտչությամբ, իսկ Ֆ. Գոյայի գծանկարները երբեմն վերածվում են գրոտեսկի, որն ընդգծում է դրանց մեջ թաքնված գաղափարները, մինչդեռ Հմ. Հակոբյանի գծանկարը ավելի շատ թափանցում է անհատի ներաշխարհ: Նկարիչը հավատարիմ մնաց իր ազգային միջավայրին, իսկ Ֆ. Գոյան դարձավ համամարդկային դրամայի վավերագրող:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն Հմ. Հակոբյանի, արևմտյան արվեստագետներն ավելի ազատ և փորձարարական մոտեցումներ են ունեցել գծի և ձևի հանդեպ:

Ռուս արվեստագետներ Իլյա Ռեպինը, Վալենտին Սերովը, Վասիլի Սուրիկովը գծի միջոցով ձգտում էին ներկայացնել կերպարի հոգեբանությունը և պահի հուզական լարվածությունը: Նրանք հաճախ օգտագործում էին գծանկարը՝ որպես մեծածավալ կտավների նախօրինակ, մինչդեռ Հմ. Հակոբյանի գծանկարը հաճախ ինքնուրույն և ավարտուն ստեղծագործություն էր: Ռուս նկարիչների գծանկարներում, հիմնականում որպես նախնական ստեղծագոր-

ծական փուլ, ընդգծված էր կերպարային ներքին դրամատիզմը (Ի. Ռեպին, Վ. Սերով, Վ. Սուրիկով), իսկ արևմտաեվրոպական նկարիչների գործերում առաջնայինը գծի ազատությունն էր, շարժումը, երբեմն՝ ձևի սիմվոլացումը: Նրանց ընդհանրությունները Հմ. Հակոբյանի արվեստի հետ գծի միջոցով հոգեբանական խորության և կերպարի ներաշխարհի արտահայտումն է, նուրբ շտրիխային տեխնիկան, ծավալի ստեղծումը առանց գունային միջոցների, մարդու շարժումների և մարմնի կառուցվածքի ճշգրիտ պատկերումը:

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ կերպարվեստում գրաֆիկան աստիճանաբար ձևավորվեց որպես ինքնուրույն արվեստի ճյուղ: Այս գործընթացում նշանակալի դեր ունեցան Հարություն Շամշինյանը, Հմայակ Հակոբյանը, Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, որոնց գործունեությունը թեև տարբեր ուղղություններով էր զարգանում, բայց արտացոլում էր հայ գրաֆիկայի ձևավորման հիմնական ուղիները:

XIX դ. վերջին քառորդին գրաֆիկական արվեստը զարգանում է ի դեմս օֆորտի առաջին ներկայացուցիչ Հարություն Շամշինյանի, որը հայտնի է որպես գծանկարչության վարպետ: Նրա արվեստի հիմքն են կազմում գիծը, հստակ կառուցվածքը և ձևի տրամաբանական ճշգրտությունը (Սարգսյան 1961, 7):

Հարություն Շամշինյանի և Հմայակ Հակոբյանի գրաֆիկական արվեստը, թեև առնչվում է նույն դարաշրջանի ընդհանուր մշակութային ընթացքին, սակայն զանազանվում է ոճային հատկանիշներով ու մոտեցումներով, չնայած Հմայակ Հակոբյանը շամշինյանական դպրոցի սան էր: Հ. Շամշինյանի գիծը հստակ է, դասական, Հմ. Հակոբյանի գործերում այն ավելի ազատ, զգացմունքային ու երբեմն էսքիզային է: Հ. Շամշինյանը կիրառել է փորագրանկարչության հնարքներ, Հմ. Հակոբյանը գերադասել է մատիտը, թանաքն ու ազատ գծանկարը: Եթե Հ. Շամշինյանը հայ գրաֆիկայի պատմության մեջ հանդես է գալիս որպես հիմնադիր և դասական ակադեմիզմի ջատագով, ապա Հմ. Հակոբյանը հարում է գեղարվեստական ազատության՝ ցուցաբերելով հոգեբանական խորություն և նոր մտածողություն:

Հմ. Հակոբյանին բնորոշ է հավասարակշռված շտրիխների կիրառումը, Վ. Սուրենյանցի գծանկարներն արված են նուրբ և մանրակրկիտ շտրիխներով՝ համադրված դեկորատիվ լուծումներով, մինչդեռ Գ. Բաշինջաղյանի գրաֆիկայում շտրիխները ծառայում են հիմնականում ձևի ուրվագիծը պահպանելու նպատակին, իսկ Փ. Թերլեմեզյանի գծանկարը բնութագրվում է կտրուկ շտրիխներով, երբեմն՝ հուզական հարվածներով:

Այսպիսով, ստեղծագործողների անհատականությամբ է պայմանավորված մոտեցումը գծանկարային արվեստին, նաև թեմատիկ ու տեխնիկական առանձնահատկությունների ընտրությունը, նախասիրությունների դրսևորումը:

Հմայակ Հակոբյանը՝ գծանկարիչ

Տրապիզոնում ծնված և Թիֆլիսում ստեղծագործած հայ ռեալիստական գեղանկարչության նշանավոր ներկայացուցիչ, մատիտային գծանկարի վար-

պետ Հմայակ Ստեփանի Հակոբյանը (1871–1939) (կենսագրական տվյալները տե՛ս Մարտիկյան 1983, 84–109; Հմայակ Հակոբյան (1871–1939) 1948, 3–24, Դզնունի 1977, 247և այլն) կերտել է ազգային կյանքը արտացոլող ճշմարիտ կերպարներ, մասնավորապես XIX դ. Թիֆլիսի կենցաղը պատկերող առօրյա դրվագներ: Նրա գծանկարները հաճախ ներկայացնում են մարդու կերպարը, համայնքային միջավայրը՝ գծի և ձևի հարաբերակցությամբ: Մասնավորապես, շամշինյանական արվեստանոցը, որտեղ ուսանում էր նկարիչը, «խրախուսում էր կյանքը ճշմարիտ կերպով վերարտադրելու ձգտումը» և առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում նկարչի վարպետության բյուրեղացմանը: Նրա գծանկարները շատ արժեքավոր են նաև ուսուցողական իմաստով, քանի որ կազմում են հայ դասական ռեալիստական արվեստի հիմքերից մեկը: Գծանկարը նաև ինքնաարտահայտման միջոց է արվեստագետի համար, և այն կազմում է Հմ. Հակոբյանի գեղարվեստական ժառանգության շոշափելի հատվածը:

Գերմանիայում ուսանելու տարիներին Հմ. Հակոբյանը ծանոթացավ եվրոպական վարպետների գունանկարչությանը, գծանկարչությանը և գեղարվեստական նոր հոսանքներին: Նրա ներկայացրած կերպարներից յուրաքանչյուրն առանձնանում է ընդգծված բնավորությամբ ու շարժուձևով (տե՛ս օրինակ՝ նկ. 1):

Նկարչի ստեղծագործության բազմաժանրությունը բխում է ներքին՝ մտքի և կարողությունների ներուժից, երևակայությունից ու ստեղծագործական անսպառ ավյունից: Հմայակ Հակոբյանը, ինչպես գեղանկարչության մեջ, այնպես էլ գծանկարում շեշտադրում է ռեալիստական պատկերումը և հոգեբանական խորությունը: Գծանկարչի հիմնական թեմաներն են մարդու ներաշխարհը, առօրյա կյանքը և միջավայրը:

Թիֆլիսյան ոգով ու կոլորիտով են ներծծված Հմ. Հակոբյանի ստեղծագործությունները բոլոր ժանրերում: Վարպետի գեղանկարչության և գրաֆիկայի սյուժեները աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ՝ գծանկար-դիմանկարներ, գծանկար-կենցաղային տեսարաններ, գծանկար-բնանկարներ, գծանկար-քաղաքային բնանկարներ:


Հմայակ Հակոբյանի գծանկարները

Դիմանկարի ժանրում աշխատելիս նկարիչները ոչ միայն վերարտադրում են մարդու դիմագծերը, ընդհանուր տեսքը, որի մեջ արտացոլվում է մարդու բնավորությունը, այլև փորձում են ներթափանցել բնորդի հոգու խորքերը:

Հմ. Հակոբյանի դիմանկար-գծանկարները խոսուն են և դինամիկ՝ շնորհիվ դիմախաղի, ժեստերի, շարժուձևի վերարտադրման: Նրա կերպարները խիստ են՝ օժտված մարդկային արժանապատվությամբ, հաստատակամությամբ: Օրինակ, «Տղամարդու դիմանկար»-ում (նկ. 1) պատկերված է կամային անձնավորություն, որն ունակ է վճռական քայլի կամ սխրագործության:



Նկ. 1. Տղամարդու դիմանկար, թուղթ, մատիտ, 24.5x17 սմ, անթվակիր, ՀԱՊ



Նկ. 2. Բնորդ, թուղթ, մատիտ, 46x37.5 սմ, անթվակիր, ՀԱՊ



Նկ. 3. Հայ, թուղթ, իտալական մատիտ, 34.5x26.5 սմ, 1887, ՀԱՊ



Նկ. 4. Քարթալինեցին, թուղթ, իտալական մատիտ, 35x26.5 սմ, անթվակիր, ՀԱՊ

Յուրօրինակ տեխնիկայով է արված «Բնորդ» (նկ. 2) գրաֆիկական գործը, որտեղ հերոսը խորասուզված է մտքերի մեջ, յուրովի ինքնազրույցի է բռնվել:

Դիմանկարիչը ստեղծել է գծանկարների մի շարք՝ նվիրված ազգային տարբեր պատկանելություն ունեցող տիպաժներին՝ «Հայ» (նկ. 3), «Քարթալինեցին» (նկ. 4), որոնք արված են վարպետորեն:

Աշխատելով նաև բնանկարի ժանրում, գծանկարային արվեստում Հմ. Հակոբյանը ստեղծել է քաղաքային բնանկարի նմուշներ, որոնք վկայում են նրա նուրբ դիտողականության մասին: Հարկ է նշել, որ նկարչի գծանկարային գործերը աչքի են ընկնում ուրույն քնարականությամբ: Գեղանկարիչը արարել է

նաև բազմաֆիգուր կոմպոզիցիայի սկզբունքներով գծանկարներ, օրինակ՝ «Ֆիգուրներ. կառք» (նկ. 5):

Զգայական աշխարհը արվեստի բոլոր ժանրերի հիմքն է: Արվեստագետը օժտված է կյանքն ու բնությունը զգալու նուրբ ունակությամբ, ինչն արտահայտվում է նրա գործերում:

Հմ. Հակոբյանը նաև բազմաթիվ ճեպանկարների հեղինակ է. նա անմահացնում էր իրեն հետաքրքրող տեսարաններ, աչքի զարնող դեմքեր, որոնք հետագայում դառնում էին իր ստեղծագործությունների հերոսները:

Նկարիչը անդրադարձ է կատարել նաև պատմական ժանրը ընդգրկող գրաֆիկական աշխատանքների: «Պատմական ժանրի ստեղծագործության կարևորությունը որոշվում է ոչ միայն գեղարվեստական արժանիքներով, այլև այն բանով, թե պատկերվող անցքերը որքանով են առնչվում տվյալ ժողովրդի բախտորոշման և պետության գործունեության հետ» (Սարգսյան, Խաչիկյան 1983, 9): Արտահայտիչ է «Կարմիր բանակի մուտքը Թբիլիսի» (նկ. 6) գործի նկարչական լեզուն: Պատկերը կառուցված է հորիզոնական կոմպոզիցիայով, որտեղ օգտագործած են գրաֆիկական տարբեր հնարներ՝ ստեղծելու հեռանկար և ընդգծելու իրողության ծավալները: Պատմական անգնահատելի վավերագրեր են այսպիսի ստեղծագործությունները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել Հմ. Հակոբյանի ապրած ժամանակաշրջանի մասին:



Նկ. 5. Ֆիգուրներ. կառք, կրոկի, թուղթ, թանաք, գնդիկավոր գրիչ, 15.2x23.5 սմ, անթվակիր, ՀԱՊ



Նկ. 6. Կարմիր բանակի մուտքը Թբիլիսի, թուղթ, ածուխ, 51.7x70 սմ, անթվակիր, ՀԱՊ

Եզրակացություններ

Հմայակ Հակոբյանի գծանկարային ժառանգությունը հայ արվեստի պատմության մեջ առանձնանում է ինքնատիպությամբ և բովանդակային խորությամբ: Նրա աշխատանքները հաստատում են այն իրողությունը, որ գիծը կարող է հանդես գալ ոչ միայն որպես նկարային կառուցվածքի հիմք, այլև որպես ինքնուրույն արտահայտչամիջոց: Հմ. Հակոբյանի մոտ գիծը թելադրում է ոչ միայն ձև, այլև տրամադրություն, հոգեվիճակ, երբեմն էլ՝ ամբողջ գաղափարական հենք:

Գծանկարչի ստեղծագործական որոնումները հավասարապես առնչվում են դասական ճշգրտությանը և ժամանակի գեղարվեստական նորարարություններին: Հմ. Հակոբյանը կարողացավ եվրոպական գրաֆիկական ավանդույթների ազդեցությունը համադրել հայ արվեստի ինքնատիպ մտածողության հետ, ինչը ձևավորեց յուրահատուկ գեղարվեստական լեզու: Այս մոտեցումը արվեստագետին հնարավորություն տվեց ընդգծելու կերպարների հոգեբանական խորությունը:

Հմայակ Հակոբյանի գծանկարային արվեստը կարելի է դիտել որպես հայ գրաֆիկայի զարգացման էական փուլ: Նրա գործերը շարունակում են մնալ իբրև համեմատական վերլուծությունների և տեսական ուսումնասիրությունների նշանակալի նյութ՝ ընդգծելով գծանկարի անսպառ հնարավորությունները ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային գեղարվեստական համատեքստում:

Շնորհակալական

Շնորհակալություն ենք հայտնում ա.գ.թ. Մերի Կիրակոսյանին և «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրությանը օգտակար խորհուրդների ու աջակցութան համար:

Գրականություն/References/Литература

1. Աղասյան Ա. 2020, Արվեստի պատմություն. կերպարվեստ, ուսումնական ձեռնարկ, գիրք 1, Երևան, «Արմավ»:
   Aghasyan A. 2020, History of Art: Fine Arts, Textbook, Book 1, Yerevan, Armav (in Armenian).
2. Բադալյան Վ. 2014, XVII–XIX դարերի գծանկարը, կավճանկարը, ջրանկարը, գուաշը և XVII–XIX դարերի Արևելքի արվեստը, Երևան, Հայաստանի ազգային պատկերասրահ:
   Badalyan V. 2014, XVII–XIX Centuries Drawing, Chalk Drawing, Watercolor, Gouache and the Art of the East of the XVII–XIX Centuries, Yerevan, National Gallery of Armenia (in Armenian).
3. Դզնունի Դ. 1977, Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Երևան, «Լույս»:
   Dznuni D. 1977, Armenian Fine Artists (Brief Dictionary), Yerevan, Luys (in Armenian).
4. Հմայակ Հակոբյան (1871–1939) 1948, Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահվան ցուցահանդեսի կատալոգ, ներածական հոդվածը Ռ. Լոռիս Մելիքյանի, Երևան, Հայաստանի պետական պատկերասրահի հրատ.:
   Hmayak Hakobyan (1871–1939) 1948, Catalog of the Posthumous Exhibition of Hmayak Hakobyan's Works, Introductory Article by R. Loris Melikyan, Yerevan, Publishing House of the State Gallery of Armenia (in Armenian).
5. Մարտիկյան Ե. 1983, Հայկական կերպարվեստի պատմություն, գ. Գ, Երևան, «Սովետական գրող»:

Martikyan E. 1983, History of Armenian Fine Arts, Book C, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).

6. Սարգսյան Մ. 1961, Սովետական Հայաստանի գրաֆիկան, Երևան, «Հայպետհրատ»:
Sargsyan M. 1961, Graphics of Soviet Armenia, Yerevan, Haypethrat (in Armenian).
7. Սարգսյան Մ., Խաչիկյան Վ. 1983, Կերպարվեստի տեսակները և ժանրերը. նկարչություն, Երևան, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության տպարան:
Sargsyan M., Khachikyan V. 1983, Types and Genres of Fine Arts: Painting, Yerevan, Armenian SSR Ministry of Education Press (in Armenian).
8. Վանո Խոջաբեկյանի առեղծվածը 1875–1922 2005, ալբոմ-կատալոգ, Երևան, «Էդիթ Պրինտ»:
The Mystery of Vano Khojabekyan 1875–1922 2005, Album-Catalog, Yerevan, Edit Print (in Armenian).
9. Каретникова И., Климова М. 1964, Художники-графики, Москва, «Знание»
Karetnikova I., Klimova M. 1964, Graphic Artists, Moscow, Znanie (in Russian).
10. Графика как вид изобразительного искусства, https://lib.uni-dubna.ru/biblweb/expo /pdf /graf.pdf (Accessed: 02.08.2025).

ՄԱՍՐԵՆԻՆ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ
ROSE HIP (ROSA L.) IN ARMENIAN TRADITIONAL CULTURE
ШИПОВНИК В АРМЯНСКОЙ ТРАДИЦИОННОЙ КУЛЬТУРЕ

Անժելա Ամիրխանյան
Anzhela Amirkhanyan
Анжела Амирханян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

anzhela.amirkhanyan@sci.am

Ներկայացվել է՝ 30.04.2025, գրախոսվել է՝ 26.06.2025, ընդունվել է՝ 12.08.2025
Received: 30.04.2025; Revised: 26.06.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 30.04.2025; рецензировано: 26.06.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-246

Ամփոփում – Մասուրի հավաքչությունը մարդու՝ շրջակա միջավայրին հարմարվելու, հազարավոր տարիների ընթացքում ձևավորված մարդ-բնություն փոխազդեցության ուշագրավ երևույթներից է: Այն արտացոլվել է մասրենու, մասուրի և դրանից պատրաստված կերակրատեսակների ժողովրդական անվանումներում (վայրի վարդ, սուտ վարդ, փշավարդ, շան վարդ, արջի մասուր, մասրամածուն, մասրաթան, մասրաթթու, մասուրի սպաս և այլն), որոնք պահպանել են հնագույն մշակութային իրողությունների շերտեր: Դարերի ընթացքում կուտակված փորձի շնորհիվ մասրենին լայնորեն կիրառվել է ժողովրդական բժշկության մեջ բազմաթիվ հիվանդություններ բուժելու համար: Ուտեստի ավանդական համակարգում մասրենու պտուղներից պատրաստված կերակուրները միաժամանակ եղել են սննդաբուժության բաղկացուցիչ մաս: Դեղաբույս, ինչպես նաև փշոտ թուփ լինելու պատճառով մասրենուն հավատալիքներում վերագրվում են հիվանդությունները վանող և չարխափան գործառույթներ: XX դ. ուտեստի ավանդական համակարգն աստիճանաբար փոփոխվեց՝ հանգեցնելով բազմաթիվ խնդիրների: Դրանց լուծման արդյունավետ ուղիներից են համարվում ավանդական սննդակարգը, ժողովրդական բժշկությունն ու մասնավորապես սննդաբուժությունը, որոնք այսօր նորովի են արժևորվում: Այս առումով վայրի բույսերը և մասնավորապես մասրենին կարող են դառնալ առողջարար, վիտամիններով հարուստ և էկոլոգիապես մաքուր մթերքի աղբյուր: Ուտեստում և ժողովրդական բժշկության մեջ մասրենու գործածության ավանդական և ժամանակակից եղանակներն ունեն կարևոր կիրառական նշանակություն:

Abstract – The gathering of rose hips represents an interesting example of human adaptation to the natural environment - a form of human–nature interaction shaped over thousands of years. This long-standing relationship is reflected in the diverse folk names for rosehips (e.g., wild rose, false rose, thorn rose, dog rose, bear rose hip) and the traditional dishes prepared from them (e.g., soups called *masramatsun*, *masratan*, *masrattu*, *masuri spas*, etc.), which encapsulate layers of ancient cultural realities (in Armenian, the word for rose hips is *masur*, and part of the word *masra* – commonly used in traditional dish names – derives from *masur*, signifying that the food is made from rose hips). Thanks to centuries old accumulated knowledge, the rosehip has long been regarded as a medicinal plant and has been widely utilized in folk medicine for the treatment of various ailments. Within traditional culinary systems, dishes prepared from rose hip fruits have also been considered an integral component of dietetics. As both a thorny shrub, and a healing plant, the rose hip holds a symbolic role in folk beliefs, where it is thought to ward off evil spirits and protect against disease. During the 20th century, traditional food systems underwent gradual transformation, leading to a range of nutritional and health-related challenges. Consequently, traditional dietary practices, folk medicine, and particularly nutrition therapy are being re-evaluated and increasingly appreciated for their potential contributions to health and well-being. In this context, the use of wild plants, and especially that of rose hip, offers a valuable source of nutritious, vitamin-rich, and environmentally sustainable food products. Both traditional and contemporary applications of rosehip in culinary practices and folk medicine hold significant practical relevance today.

Аннотация – Сбор шиповника представляет собой интересный пример адаптации человека к природной среде – форму взаимодействия человека и природы, которая формировалась на протяжении тысячелетий. Эта давняя связь отражена в разнообразных народных названиях шиповника (например, дикая роза, ложная роза, шиповатая роза, роза собачья, шиповник медвежий) и традиционных блюдах, приготовленных из них (например, супы, называемые масрамацун, масратан, масратту, масури спас и т.д. (На армянском шиповник звучит как масур, часть слова масра означает изготовленное из шиповника). Благодаря накопленным веками знаниям шиповник издавна считается лекарственным растением и широко используется в народной медицине для лечения различных недугов. В традиционных кулинарных системах блюда, приготовленные из плодов шиповника, также считаются неотъемлемым компонентом диетологии. Как колючий кустарник и лечебное растение, шиповник играет символическую роль в народных верованиях, где считается, что он отгоняет злых духов и защищает от болезней. В течение XX века традиционные системы питания претерпели постепенную трансформацию, что привело к ряду проблем, связанных с питанием и здоровьем. Следовательно, традиционные диетические практики, народная медицина и особенно диетотерапия переоцениваются и все больше ценятся за их потенциальный вклад в здоровье и благополучие. В этом контексте использование дикорастущих растений, особенно шиповника, предлагает ценный источник питательных, богатых витаминами и экологически устойчивых продуктов питания. Как традиционное, так и современное применение шиповника в кулинарии и народной медицине имеет сегодня важное практическое значение.

Հիմնաբառեր – հավաքչություն, մասրենի, ուտեստ, բժշկություն, հավատալիք:
Keywords – gathering, rose hips, nutrition, medicine, beliefs.
Ключевые слова – собирательство, шиповник, питание, медицина, верования.

Ներածություն

Հայոց կենսապահովման մշակույթը հիմնված է երկրագործության և անասնապահության վրա, հետևաբար ուտեստի համակարգի հիմքում հացահատիկն է, միսը, կաթնամթերքը և բանջարեղենը: Որպես օժանդակ տնտեսածև՝ որոշակի դեր ունի նաև հավաքչությունը, որի ծավալների վրա ազդեցություն ունեն բնակլիմայական պայմանները, տնտեսական զբաղմունքները, սոցիալ-տնտեսական իրավիճակը, մշակութային ավանդույթները և այլն:

Ավանդաբար հատապտուղներն օգտագործվել են միայն թարմ վիճակում ուտելու համար, դրանք կերակուր (ճաշ, քաղցրավենիք և այլն) պատրաստելու նպատակով գրեթե չեն գործածվել, ինչպես նաև չեն պահեստավորվել: Այդ իսկ պատճառով հատապտուղների հավաքչությունը երկրորդական դեր է ունեցել: Մասուրը ուտեստի ավանդական համակարգում մեծ կիրառություն ունեցող միակ հատապտուղն է, որի հավաքչությունը կարևոր նշանակություն է ունեցել:

1960-ական թվականներից հետո, շաքարի՝ մատչելի մթերք դառնալու և պահածոյացման նոր եղանակների շնորհիվ վայրի հատապտուղներն սկսեցին գործածել քաղցրավենիքներ պատրաստելու համար, որը հանգեցրեց դրանց հավաքչության ծավալների ընդլայնմանը (Ամիրխանյան 2024, 245–257): Այսօր, չնայած հատապտուղների բազմազանությանը, մասուրը շարունակում է մնալ որպես մեծ պահանջարկ ունեցող պտուղ, որի հավաքչությունն ստացել է նաև առևտրային նշանակություն:

Մասրենու վերաբերյալ ժողովրդական պատկերացումներն արտացոլվել են ազգագրական և բանահյուսական նյութերում՝ հանելուկներում, դարձվածներում, անեծքներում, հավատալիքներում և այլն (Ղանալանյան 1960, 321; Սուքիասյան, Գալստյան 1975, 598; Հարությունյան 1960, 126, 135, 148, 154; Սարգսյան 2015, 579, 586, 589, 593–594, 601, 605):

Հայկական լեռնաշխարհում տարածված են նաև «մասուր» բառով կազմված տեղանունները՝ Մասուր, Մասրիկ, Մասրուտ, Գեղարքունիքում է գտնվում Մասրուց վանքը կամ Մասրուց անապատը (Հակոբյան և այլք 1991, 709–710): Գրավոր աղբյուրներում հիշատակվում է նաև Մասուր՝ ինչպես իգական, այնպես էլ արական անձնանունը, որը, ըստ Հր. Աճառյանի, «վարդ» բառից է և հիշվում է XV–XVI դարերից (Աճառեան 1942, 217):

Մասուրի հավաքչություն

Մասրենին (Rosa L.) վարդազգիների ընտանիքի թուփ է, ՀՀ-ում աճում է շուրջ 31 տեսակ, որոնց մի մասն էնդեմիկ է: Ցրտադիմացկուն, քիչ պահանջկոտ բույս է, աճում է բնակլիմայական բոլոր գոտիներում, մինչև 2200 մ բարձրություններում: Այս հանգամանքի շնորհիվ, ի տարբերություն մյուս հատապտուղների, որոնց հավաքչությունը տեղային բնույթ է կրում, քանի որ աճում են բնակլիմայական որոշակի պայմաններում, մասուրի հավաքչությունը միշտ եղել է բավականին տարածված:

Մասուրը (մասուրա, մասպուր, միասուր, մասուլ, մասպար, ակռվուկ, վարդապտուղ) (Գայայեան 1838, 324; Петров 1940, 166; Գաբիկեան 1968, 148; Թորոսյան 1983, 200; Ամիրխանյան, ԴԱՆ, 2022) հասունանում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Հավաքելու համար գործածում են ծայրին կեռ ունեցող երկար փայտ կամ երկաթե ձող՝ կեռչան (կռեչան, կըռաչան) (Ամիրխանյան, ԴԱՆ, 2010–13), որով ճյուղերը մոտեցնում են: Յուրաքանչյուր ոք օրական կարող է հավաքել 25-30 կգ մասուր: Մասուրի պտուղները չորացնում են՝ փռելով ստվերոտ և օդափոխվող տեղում:

Հավաքչությամբ ավանդաբար զբաղվում են կանայք և աղջիկները, սակայն, դրան զուգահեռ, տեղի են ունեցել նաև որոշակի փոխակերպումներ, որոնք պայմանավորված են 1990-ական թվականներին Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով, երբ հավաքչության դերը կարևորվեց: Ընտանիքի կարիքները հոգալու համար տղամարդիկ ևս սկսեցին զբաղվել հավաքչությամբ, որի համար մեծ խթան դարձան ՀՀ անկախության տարիներին շուկայական հարաբերությունների զարգացումը և հատապտուղների արդյունաբերական նշանակությունը, որոնք զգալիորեն հեշտացրին վայրի բույսերի իրացումը (Ամիրխանյան 2019ա, 206–207; Ամիրխանյան 2024, 251–252): Տղամարդիկ, ի տարբերություն կանանց, հիմնականում զբաղվում են եկամտաբեր բույսերի, այդ թվում նաև մասուրի հավաքչությամբ (Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–13, 2014–15, 2019, 2022–2023):

Մասրենու ժողովրդական անվանումները

Մասրենին, լինելով վարդի նախնին, սերտորեն առնչվում է այդ ծաղկին, այդ իսկ պատճառով կոչվում է նաև վարդ, զիրա վարդ, զինավարդ (Петров 1940, 113, 166), վայրի վարդ/վարդենի (Գայայեան 1838, 324; Ալէքսանեան 1899, 795; Մովսիսյան 1972, 51; Մելիքեան 1964, 516; Ամիրխանյան, ԴԱՆ, 2019, 2023), մասուրի վարդ (Ամիրխանյան, ԴԱՆ, 2019, 2021, 2023), սուտ վարդ (Ալիշան 1895, 592; Հարությունյան 1960–62, 8), շնավարդ (Մէնեվիշեան 1897, 110; Роллов 1908, 432), փշավարդ (Петров 1940, 113, 166; Թորոսյան 1983, 200) և այլն: Վարդենու և իր նախնի մասրենու կապի մասին է հավաստում Դավիթ Սալաձորեցին իր «Գովասանք ծաղկանց» տաղում. «Սուտ վարդն բաժնուել յերամէն, խառնուել յերամ մասուրուն…» (Մկրյան 1938, 196):

Հայերենում մեծ թիվ են կազմում կենդանիների անուններով բաղադրված վայրի բույսերի անունները (Թէոդիկ 1926, 91–92; Գաբիկեան 1968, ԺԵ; Ամիրխանյան 2016, 6–12; Ամիրխանեան 2023, 283–297): Կենդանու անունը հուշում է, որ բույսը վայրի է, հետևաբար մասրենու շան վարդ (շնավարդ) անվանումը նշանակում է կեղծ, վայրի վարդ: Մասրենին կոչվում է նաև շան մորենի (ՃԷրէճեան և այլք 1992, 466), որտեղ «շուն» բառը բույսի վայրի լինելու ցուցիչ է, իսկ «մորի» բառը հատապտուղների ընդհանրական անունն է:

Մասրենու այն տեսակները, որոնց պտուղները համարվել են ոչ պիտանի, բարբառներում կոչվել են էշի վարդ, շան վարդ, պտուղները՝ էշի, շան կամ խոզի

մասուր (Գաբիկեան 1968, 71, 148), դառնահամ սև մասուրը՝ գայլի մասուր (Ամիրխանյան, ԴԱՆ, 2021) և այլն: Մասրենու արժեքավոր պտուղները կոչվում են խաս մասուր (Բդոյան 1972, 12), շահ մասուր (շահ մըհըսըրէ) (Петров 1940, 114) և այլն: Սեբաստիայում բարձր է գնահատվել դեղին ծաղիկ ունեցող մասրենու՝ շգրավի վարդի պտուղը (շգրավ) (Գաբիկեան 1968, 177, 226):

Արջի մասուր: Մասուրի որոշ տեսակներ բարբառներում կոչվում են արջի մասուր, որն առնչվում է «արջ» բառի սև իմաստին և արջ գազանի հատկություններին:

ա. *Արջի մասուր՝ սև մասուր:* Արջ բառի «սև, մութ, մուգ» իմաստները տեսնում ենք նաև արջնանալ՝ սևանալ, արջասպ՝ սև նյութ, արջնազգեստ՝ սևազգեստ (Աւետիքեան և այլք 1836, 375) և այլ բառերում: Այն պահպանվել է նաև մի շարք՝ սև պտուղներ ունեցող բույսերի անվանումներում (արջնդեղ, արջի խնդեղնի և այլն) (Ամիրխանյան 2019բ, 6–7): Հայերենի որոշ բարբառներում սև մասուրը կոչվում է արջի մասուր (արջամասուր), որտեղ ևս «արջ» բառը սև իմաստն ունի (Ամիրխանյան, ԴԱՆ, 2009, 2012–2014, 2021):

բ. *Արջի մասուր՝ ոչ պիտանի մասուր:* Որոշ վայրի ուտելի բույսերի չգործածվող տեսակների անունները բաղադրվում են նաև «արջ» բառով (արջի նվիկ, արջի բոխի և այլն) (Ամիրխանյան 2019բ, 9–10): Շատ կորիզ և բարակ պտղամիս ունեցող մասուրը ևս, որպես ոչ պիտանի, որոշ բարբառներում կոչվում է արջի մասուր (Ամիրխանյան, ԴԱՆ, 2011):

գ. *Արջի մասուր՝ խոշոր մասուր:* Արջին վերագրվում են խոշոր, կոպիտ, տգեղ և այլ հատկություններ, որոնք արտացոլվել են բազմաթիվ բուսանուններում (Ամիրխանյան 2019բ, 10–13): Մասնավորապես որոշ բարբառներում խոշոր մոշն ու ընկույզը կոչվում են ըրչամոշ (Սարգսյան 2013, 180) և արջակակալ (Ամիրխանյան, ԴԱՆ, 2011), իսկ խոշոր մասուրը՝ արջամասուր (ըրչըմըհասուր) (Պետոյան 1965, 444; Սարգսյան 2013, 180; Ամիրխանյան, ԴԱՆ, 2011, 2012):

Մասրենին ուտեստի համակարգում

Հայոց ավանդական ուտեստի համակարգում մասուրը լայնորեն կիրառվող հատապտուղ է: Թարմ գործածությունից բացի, այն հիմնականում կարևոր նշանակություն է ունեցել ձմռան և հատկապես պասի ընթացում, ուստի մեծ քանակությամբ չորացնում էին: Մասուրից պատրաստել են մասրամածուն և մասուրապուր, ինչպես նաև պաստեղ, թեյ, թուրմ և ոգելից խմիչք: Մասրենու ծաղկաթերթիկներից պատրաստել են վարդաջուր, քացախ և այլն, իսկ մատղաշ ընձյուղները, որոնք Արցախում *նաբաթ* են կոչվում, բազմաթիվ բույսերի զոխերի նման կեղևից մաքրել և կերել են (Петров 1940, 114):

Մասրամածուն (մասուրի մածուն): Պատրաստում են թարմ կամ չորացրած մասուրի պտղահյութից (Սանասարյաններ 1965, 93; Միրզոյան 2007, 218; Ղազարյան 1988, 265; Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–2013, 2021, 2022): Եփած մասուրը տրորում են ու փլավքամիչով անցկացնելով՝ պտղամիսը կորիզներից առանձնացնում, մի քանի անգամ մաղով անցկացնում, որ մազմզուկներն առանձ-

նանան: Եփելիս մասրամածնին ոչինչ չեն ավելացնում, երբեմն փուշի՝ մի քիչ ալյուր են տալիս (Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–13): Ուտում են հաց բրդած, առանց յուղ կամ ձեթ, ցանկացողները շաքար են ավելացնում (Ամիրխանյան ԴԱՆ, 2010–2013, 2021, 2022): Մինչև 1970-ական թվականները մասրամածունը հաճախ եփում էին մի քանի օրվա համար (Ամիրխանյան, ԴԱՆ, 2012–2014): Երկար ժամանակով պահելու համար լցրել են ջնարակած կճուճների մեջ ու բերանը կապել սերեկով, որը պատրաստում էին ուլի կաշվից կամ այծի, ոչխարի, հորթի ստամոքսից (Ամիրխանյան, ԴԱՆ, 2013):

Մասրամածուն անվանումը պայմանավորված է այն բանով, որ հիշյալ կերակրատեսակը թանձրության համար նմանեցվել է մածացած՝ մակարդված և լերդացած զանգվածի: Մասրամածունը Հայաստանի տարբեր բնակավայրերում կոչվում է նաև մասուրի սպաս, մասուրթթու և մասրաթան:

Մասուրի սպաս (պաս): Հայերենում «սպաս» բառն ունի նաև ապուրի ընդհանրական իմաստ (Աճառեան 1979, հ. 4, 261), ուստի, բացի թանով սպասից (թանով ապուր, թանհատ, հոռածած), մի շարք կերակրատեսակների անուններ ևս բաղադրվել են այդ բառով՝ հոնի սպաս, մամուխի սպաս (Ամիրխանյան, ԴԱՆ, 2013), ավելուկի սպաս (Լալայեան 1903, 143), կաթնուսպաս, լոբու սպաս (Մելիք-Բախտամեանց 1889, 68) և այլն: Մասրամածունը ևս որոշ բարբառներում կոչվում է մասուրի սպաս (Ղազարյան 1988, 399; Ամիրխանյան 2018, 12–13):

Մասրաթթու: Թթվաշ կերակրատեսակների անունները հաճախ բաղադրվում են «թթու» բառով՝ զկռաթթու (Մալխասեանց 1944, հ. 2, 26; Ամիրխանյան, ԴԱՆ, 2014), չրաթթու, հոնաթթու (Ամիրխանյան, ԴԱՆ, 2014, 2023), օձի թթու (Լալայեան 1908, 125) և այլն: Թթու համի համար մասրամածունը կոչվում է նաև մասրաթթու (մըսըրթթո, միասուրթթո, մասրթթո և այլն) (Պողոսյան 2007, 149, 203; Ամիրխանյան, ԴԱՆ, 2021–2023):

Մասրաթան: Հայերենում «թան» բառը ևս ունի ապուրի ընդհանրական իմաստ (Մալխասեանց 1944, հ. 2, 80), հետևաբար, բացի թանով սպասից, որոշ կերակրատեսակների անուններ ևս բաղադրվել են այդ բառով՝ խառնաթան (Մալխասեանց 1944, հ. 2, 245), հացաթան (հացով ապուր, ճմուռ) (Գայայեան 1938, 281; Ճէրէճեան և այլք 1992, 1194) և այլն: Մասրամածունը ևս որոշ բարբառներում կոչվում է մասրաթան (Ամիրխանյան, ԴԱՆ, 2021):

Մասուրապուր: Մասուրով ապուր եփելու համար մասուրի պտղամսի թանձր հյութին, որը, ըստ էության, մասրամածունն է, ավելացնում են ոսպ կամ ցորեն և ծիրանի չիր (Վարդանյան 2000, 29), արիշտա (Հովակիմյան 1980, 6), բրինձ կամ ձավար (Ամիրխանյան ԴԱՆ, 2014, 2019, 2022–2023) և այլն: Մասուրի պտղահյութը ավելացնում են նաև սպիտակ բանջարով կամ ալագյազով ու ձավարով ապուրին, որը կոչվում է մասուրով բանջար, ինչպես նաև պասուց տոլմային (Ամիրխանյան, ԴԱՆ, 2019):

Որոշ բարբառներում մասուրով ապուրը ևս, ինչպես մասրամածունը, կոչվում է նաև մասուրի սպաս (Ամիրխանյան, ԴԱՆ, 2019, 2021), մասրաթթու/մըհըսրթթո և մասրաթան (Ամիրխանյան, ԴԱՆ, 2019, 2021–2023):

Հայերենում պահպանվել են պարսկերեն «շորվա» բառով, որն ապուր է նշանակում, բաղադրված բազմաթիվ կերակրատեսակների անվանումներ (Մալխասեանց 1944, հ. 3, 532; Ամիրխանյան 2018, 8–9): Մասուրի ապուրը ևս որոշ բարբառներում կոչվում է մասուրի շորվա (մըհասրով/միասրի շորվա) (Հովակիմյան 1980, 6; Վարդանյան 2000, 29; Ամիրխանյան, ԴԱՆ, 2021–2022):

Պաստեղ: Մասուրի պաստեղը գործածվում է որպես համեմունք (Գաբիկեան 1968, 148; Զելինսկի 1898, 182): Կարինում թարմ մասուրի վրա տաք ջուր են լցրել, թակով ծեծելով սերմերն անջատել ու քամած մածուկը բարակ շերտով արևի տակ չորացրել (Բդոյան, 1972, 12):

Ոգելից խմիչք: Մասուրից նաև խմիչք են պատրաստում, որը կոչվում է մասուրի գինի, չնայած հայոց ավանդական խմիչքը խաղողի գինին է: Մասուրի գինի պատրաստելու համար թարմ մասուրի վրա տաք ջուր են լցնում և պահում փակ տակառի կամ ապակե ամանների մեջ: Խմորվելուց հետո քամում են և շաքարավազ ավելացնում (Ամիրխանյան, ԴԱՆ, 2012):

Թեյ և թուրմ: Մասուրի արմատը, պտուղները, ծաղկաթերթիկները, ճյուղերը և տերևները գործածում են ինչպես թեյ, այնպես էլ թուրմ պատրաստելու համար (Гроссгейм 1942, 20; Петров 1940; Հալաջյան 1973, 246; Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–2013): Մասուրի չորացած ծաղկաբույլերը (ճպուռ, կոծոծ, կտուց, պոժ), որոնք մասրամածուն եփելու համար նախօրոք կտրում են, նույնպես օգտագործում են թեյի համար (Ամիրխանյան, ԴԱՆ, 2010–2013): Թուրմ պատրաստելու համար թարմ կամ չոր պտուղների վրա եռման ջուր են լցնում, կափարիչով փակում և բրդե կտորով ծածկում: Հաջորդ օրը բացում են և քամում (Петров 1940, 114; Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–2014):

Քաղցրավենիքներ: Ավանդաբար մասուրից քաղցրավենիքներ չեն պատրաստել, սակայն 1960-ական թվականներից սկիզբ առած շաքարի լայն գործածությունն ու պահածոյացման նոր եղանակները ուտեստի համակարգում նշանակալի փոփոխություններ առաջացրին (Ամիրխանյան 2024, 246, 248): Հիշյալ հանգամանքներն ընդլայնեցին հատկապես թարմ մասուրի վերամշակման ու կիրառման ձևերը: Որպես հյութ օգտագործելու համար մասրամածունն սկսեցին եփել թարմ պտուղներից, շաքարով և ավելի ջրալի: Քանի որ այն, ըստ էության, կենցաղից աստիճանաբար դուրս մղվող մասրամածուն ճաշի քաղցր և ջրալի տարբերակն է, որոշ վայրերում, մասնավորապես Լոռու մարզում դարձյալ կոչվում է մասրամածուն: Որպես հյութ գործածելու համար մեծ տարածում ստացավ նաև մասուրի թուրմը, որը, ի տարբերություն մասրամածունի, աշխատատար չէ:

Մասուրից նաև ջեմ, մուրաբա, կոմպոտ, ծաղկաթերթիկներից հյութ և մուրաբա են եփում (Ամիրխանյան, ԴԱՆ, 2009–2013, 2019–2021): Չնայած մասրենու կամ վարդենու ծաղկաթերթիկների և շաքարի խառնուրդ միշտ էլ պատրաստել են (Гроссгейм 1942, 20; Роллов 1908, 432), սակայն այն, մինչև շաքարի զանգվածային կիրառությունը, հիմնականում գործածվում էր որպես քաղցր դեղամիջոց: Այն պատրաստում են եփելով և առանց եփելու (մասրենու ծաղկաթերթիկներին շաքար են ավելացնում և դնում արևի տակ):

Մասրենու գործածությունն այլ նպատակներով

Մասրենու ճյուղերը կենցաղում կիրառվել են տարբեր նպատակներով: Մատղաշ ոստերով քթոցներ և մեղվի փեթակներ են հյուսել (Նոր դար 1898, 2), իսկ արմատից՝ դեղին ներկ պատրաստել (Բդոյան 2014, 221): Կեղևը հանած մասրենու ճյուղերը դաշտային պայմաններում օգտագործում են որպես խորոված շամփուր: Ընդ որում, դրանք կարող են գործածվել մի քանի անգամ, քանի որ մասրենու փայտը կրակից չի ծռվում և դանդաղ է այրվում: Համարում են, որ մասրենու ճյուղերը խորովածին նաև յուրահատուկ համ են տալիս (Ամիրխանյան, ԴԱՆ, 2011):

Ծնեբեկը դաշտում կոթխաշ անելու՝ խորովելու համար փաթաթում են մասրենու կեղևով կամ էլ երկարությամբ կտրած կեղևով հյուսած կեղևակոտի մեջ դնում (Միրզոյան 2007, 218; Ամիրխանյան, ԴԱՆ, 2010–2013):

Մասրենին ժողովրդական բժշկության մեջ

Մասրենին ինչպես ժողովրդական, այնպես էլ գիտական բժշկության մեջ համարվում է դեղաբույս: Գործածվում է ամբողջ բույսը՝ արմատը, կեղևը, տերևները, ծաղիկները, պտուղները, սերմերը և այլն (Ролов 1908, 432–433, Թորոսյան 1983, 201–202; Ամիրխանյան, ԴԱՆ, 2010–2014, 2019–2023): Պտուղները հարուստ են վիտամիններով և այլ օգտակար նյութերով (Թորոսյան 1983, 200–201): Մասուրի թուրմը լայն կիրառություն ունեցող դեղամիջոցներից է, այն հակասնկային է, գործածվում է մալարիայի, մրսածության, թուլության, լյարդի, աղեստամոքսային հիվանդությունների, հազի ժամանակ (Մելիք-Շահնազարեան 1904, 537; Петров 1940, 114; Гроссгейм 1942, 20; Տոմարծացի 1959, 1101; Հակոբյան 1974, 75): Հարկ է նշել, որ հիշյալ հիվանդությունների ժամանակ գործածվում են նաև մասուրով կերակրատեսակները:

Մասրենու պտուղները և արմատի կեղևը կիրառվում են արյունահոսությունը դադարեցնելու և թութքի բուժման համար (Մովսիսյան 1972, 51; Թորոսյան, 1983, 201–202): Մասրենու վրա հազվադեպ աճող մղամուճը (Viscum L.) ևս արժեքավոր դեղ է համարվել (Գաբիկեան 1968, 138):

Մասրենին և վարդենին ժողովրդական բժշկության մեջ կիրառվել են գրեթե նույն հիվանդությունների ժամանակ: Հատկապես բուժիչ են համարվել դրանց ծաղկաթերթիկներով պատրաստված շաքարի կամ մեղրի խառնուրդը: Մասրենու և վարդենու կիրառության վերաբերյալ բավականին տեղեկություններ կան նաև միջնադարյան բժշկարաններում (Ամասիացի 1926, 266, 341, 545–546, 398; Սեբաստացի 1993, 333, 353, 362; Ամասիացի 2014, 176):

Մասրենին հայոց հավատալիքներում

Հավատալիքներում բույսերին վերագրվում են ինչպես դրական (չարխափան, երջանկություն և առողջություն պարգևող), այնպես էլ բացասական (չար, վնասակար) գործառույթներ: Մասրենուն առնչվող հավատալիքները կապվում

են այդ բույսի փշոտ լինելու, ինչպես նաև ժողովրդական բժշկության մեջ գործածության հետ:

Թերևս արյունահոսությունն ու թութքը բուժելու հանգամանքով, ինչպես նաև պտուղների կարմիր գույնով է բացատրվում այն արգելքը, որ չի կարելի մասրենու ճյուղով մարդուն և անասուններին հարվածել, քանի որ հակառակ դեպքում նրանք արյուն կմիզեն (Մովսիսյան 1972, 51):

Մասրենին, ինչպես և բազմաթիվ փշոտ բույսեր, հավատալիքներում ունեն երկակի՝ չար և չարխափան գործառույթներ:

Մասրենին՝ որպես չար փուշ: Մասրենուն վերագրվող չար հատկության արտացոլումն է նրա՝ «ճատվի» (ջադուի) փուշ, ինչպես նաև պտուղների՝ «ջատվի լիլիկ»՝ վհուկի պտուղ անվանումը (Բաբգէն վարդ. 1899, 655; Հովակիմեան 1967, 933; Թոռլաքյան 1981, 136, 146): Չար փուշ լինելու մասին է վկայում նաև «Թագդ մասրքու վրա գցեմ» անեծքը, որը թագ ու պսակի չարժանացնելու իմաստն ունի (Ամիրխանյան ԴԱՆ, 2010):

Ջղաձգություն ունեցողները, որպեսզի հիվանդությունը չսրվեր, չար ոգիների բնակատեղի համարվող մասրենու մոտով չէին անցնում (Սարգիսեան 1932, 419): Սիրահարների մահը նյութելուց հետո բղուկ հեծնող պառավը, նրանց գերեզմանի մեջտեղում վեր է ածվել չարի խորհրդանիշ մասուրի փշի (Գաբիկեան 1952, 556):

Մասրենին՝ որպես չարխափան: Չար փուշ լինելուց բացի, մասրենին համարվում է նաև սուրբ տունկ (Հակոբյան 1974, 75; Աբեղյան 1975, 54; Հարությունյան 2006, 224, 238–239): Այդ է վկայում Ներքին Բասենի Ղզըլջա կոչվող ուխտավայրի ցանկապատված նվիրական մասրենին, որի ճյուղերին Կանաչկարմիր կիրակի օրը ուխտավորները առողջության և ցանկությունների իրականացման ակնկալիքով թաշկինակներ ու հագուստի ծվեններ էին կապում (Հակոբյան 1974, 101): Ղարադաղում վախեցածին տանում էին Վախեն փիր սրբավայր, որտեղ նրա հագուստից մի ծվեն էին կապում այնտեղ աճող մասրենուց (Հովսեփյան 2009, 451): Ըստ ժողովրդական հավատալիքների՝ կոխվածը բուժվում էր մեջտեղից ճեղքած մասրենու ճյուղի միջով երեք անգամ անցնելով (Մուրադեանց 1900, 151): Թպղոտությունը բուժելու համար ամուսինները յոթ անգամ պտտվում էին մասրենու շուրջը, յոթ անգամ էլ անցնում թփի միջով՝ հիվանդությունն այնտեղ թողնելու ակնկալիքով (Բդոյան 1947, 197–198):

Փուշը ժողովրդական հավատալիքներում, ինչպես նաև հմայական աղոթքներում իր ծակող հատկության շնորհիվ համարվում է չարխափան (Չար աչքն ի չար փուշ, չար փուշն ի կրակ) (Աբեղյան 1975, 54; Հարությունյան 2006, 84–95, 233, 243, 254): Աղոթքներում մասրենին ևս հաճախ է հիշատակվում. «Առ ֆրանկի դանակը, Մտի Քրիստոսու պախջան, Կտռե իրեք մասսրեն, Մեկը տու սև սատանին, Մեկը տու գել գազանին, Մեկը տու ամենայն չարը փոխանին, Չար մասուրեն՝ չար նիաթին, Չար նիաթը՝ չար կրակին» (Հարությունյան 2006, 87):

Գալիք տարին անփորձանք դարձնելու համար Նոր տարվա նախօրեին տան շեմի մոտ և երդիկին մասուրի ճյուղ էին դնում (Մուրադեանց 1900, 154):

Որպեսզի վիուկները տուն չմտնեին և երեխաներին չխեղդեին, մայիս ամսամուտի գիշերը երդիկի շուրջը մասուրի փշով շրջան էին գծում (Պալեան 1899, 521):

Չար ուժերից պաշտպանվելու համար հմայական պահպանակները պատրաստվում են սուրբ համարվող ծառերի (բռնչենի, ուռենի, կաղնի և այլն), ինչպես նաև փշոտ ծառերի ու թփերի ճյուղերից կամ արմատից: Պահպանակներ էին պատրաստում նաև մասրենու արմատից (Իսրայելյան 2012, 57) և ճյուղից:

Չարից պաշտպանելու նպատակով մասրենու մի կտոր, փայտածուխ և սխտոր էին կտավի մեջ փաթաթում և կապում եզան կամ կովի եղջյուրից (Թոռլաքյան 1981, 146–147): Նախիրը սար տանելուց առաջ մասրենու ճիպոտը երկարությամբ երկու մասի էին բաժանում ու դնում գոմի դռան աջ և ձախ կողմում: Նախիրը դուրս հանելուց հետո ճիպոտի մասերը, գայլի բերանը կապելու համար, պարանով միացնում և գոմում պահում էին մինչև նախրի՝ սարից գալը (Թոռլաքյան 1981, 146): Եթե չար աչքից կովի կաթը արյունախառն էր դառնում, այն լցնում էին մասրենու կամ վարդենու տակ (Լալայեան 1903, 247; Ամիրխանյան, ԴԱՆ, 2022, 2023):

Եզրակացություններ

1. Մասրենին հայոց մշակույթում կարևոր նշանակություն ունեցող բույսերից է, որի հավաքչությամբ զբաղվել են ամենուր: Դրա հավաքչության մեծ ծավալները պայմանավորված են այդ բույսի՝ բոլոր կլիմայական գոտիներում աճելու հանգամանքով:

2. Մասուրը լայն կիրառություն ունի ուտեստի համակարգում, ժողովրդական բժշկության և հատկապես սննդաբուժության մեջ: Մասուրի գործածության եղանակներն առանձնապես ընդլայնվեցին 1960-ական թվականներից հետո՝ շաքարի արդյունաբերության զարգացման և պահածոյացման նոր միջոցների շնորհիվ:

3. Մասրենու տեսակների անունները սահմանվել են վարդենի-մասրենի առնչություններով, ինչպես նաև վերջինիս պտուղների որակական հատկանիշներով:

4. Հավատալիքներում մասրենու փշոտ լինելու հանգամանքն արտահայտվել է երկակի՝ չար և չարխափան գործառույթներով: Ժողովրդական բժշկության մեջ բույսի կիրառության որոշ առանձնահատկություններ (արյունահոսության կանխում և այլն) արտացոլվել են հավատալիքային որոշակի արգելքներում:

Շնորհակալական

Հոդվածի համար տրամադրած օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Սուրեն Հոբոսյանին և բանագետներ Թամար Հայրապետյանին, Հասմիկ Գալստյանին, Արմեն Յու. Սարգսյանին ու Սամվել Ռամազյանին: Հատուկ շնորհակալություն Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի և Սյունիքի մարզերի այն բանասացներին, որոնք աջակցել են դաշտային ազգագրական նյութեր հավաքելու գործում:

Գրականություն/References/Литература

1. Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. Է, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:
   Abegyan M. 1975, Works, vol. VII, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Ալէքսանեան Յ. 1899, Նախապաշարումներ և սովորութիւններ Մարզուանի մէջ, Բիւրակն, N 50–52, 794–796:
   Alexanian H. 1899, Prejudices and Customs in Marzwan, Byurakn, N 50–52, 794–796 (in Armenian).
3. Ալիշան Ղ. 1895, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, Ս. Ղազար:
   Alishan Ղ. 1895, Haybusak or Armenian Botanical Dictionary, Venice, Saint Lazarus (in Armenian).
4. Աճառեան Հ. 1942, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Acharyan H. 1942, Dictionary of Armenian Personal Names, Yerevan, YSU Press.
5. Աճառեան Հ. 1979, Հայերէն արմատական բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Acharyan H. 1979, Armenian Root Dictionary, vol. 4, Yerevan, YSU Press (in Armenian).
6. Ասար Սեբաստացի 1993, Գիրք բժշկական արհեստի (XVI–XVII դդ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ.:
   Asar Sebastatsi 1993, Medical Craft Book (16th–17th centuries), Yerevan, National Academy of Sciences of Armenia Press (in Armenian).
7. Ամիրդովլաթ Ամասիացի 2014, Ուսումն բժշկութեանն է այս, Երևան, «Նայիրի»:
   Amirdovlat Amasiatsi 2014, This is the Study of Medicine, Yerevan, Nairi (in Armenian).
8. Ամիրխանեան Ա. 2023, Գայլ բառով բաղադրուած բոյսերի անունները հայերէնում, Հայկազեան հայագիտական հանդէս, N 43/1, 283–297:
   Amirkhanyan A. 2023, Botanical Names Formed from the Root "Gayl" (Wolf) in Armenian, Haigazian Armenological Review, N 43/1, 283–297 (in Armenian).
9. Ամիրխանյան Ա. 2016, Գառ և դմակ արմատով բուսանուններ, Ջահուկյանական ընթերցումներ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Ասողիկ», 6–13:
   Amirkhanyan A. 2016, Plant Names Composed of the Roots "Gar" (Lamb) and "D'mak" (Fat Tail), Jahukyan Readings, Collection of Scientific Papers, Yerevan, Asoghik, 6–13 (in Armenian).
10. Ամիրխանյան Ա. 2018, Վայրի մրգերով ու հատապտուղներով կերակուրների անվանումները հայերենում, Ջահուկյանական ընթերցումներ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Ասողիկ», 5–15:
    Amirkhanyan A. 2018, The Names of Meals with Wild Fruits and Berries in Armenian, Jahukyan Readings, Collection of Scientific Papers, Yerevan, Asoghik, 5–15 (in Armenian).
11. Ամիրխանյան Ա. 2019ա, Հավաքչության դերն ընտանիքի կենսապահովման մշակույթում (ըստ ՀՀ Լոռու և Տավուշի դաշտային նյութերի), «Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում» միջազգային գիտաժողովի զեկուցումների

ժողովածու, Հայաստանի և սփյուռքի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ 13, Երևան, ՀԱԻ հրատ., 202–215:
Amirkhanyan A. 2019a, The Role of Gathering in the Family's Livelihood Culture (According to Field Materials from Lori and Tavush), Proceedings of the International Conference "The Armenian Family Vis-a-vis Contemporary Challenges". Ethnosociological Researches of Armenia and Diaspora 13, Yerevan, IAE Press, 202–215 (in Armenian).

12. Ամիրխանյան Ա. 2019բ, Արջ արմատով կազմված բուսանուններ, Ջահուկյանական ընթերցումներ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Գիտություն», 5–14:
Amirkhanyan A. 2019b, Botanical Names Formed from the Root "Arj" (Bear), Jahukyan Readings, Collection of Scientific Papers, Yerevan, Gitutyun, 5–14 (in Armenian).

13. Ամիրխանյան Ա. 2024, Հատապտուղները հայոց հավաքչական մշակույթում, Պատմաբանասիրական հանդես, N 1, 245–257:
Amirkhanyan A. 2024, Berries in the Armenian Gathering Culture (Tradition and Modernity), Historical-Philological Journal, N 1, Yerevan, 245–257 (in Armenian).

14. Ամիրտովլաթ Ամասիացի 1926, Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, Մխիթարեան տպ.:
Amirdovlat Amasiatsi 1926, Useless for Ignoramuses or a Dictionary of Medical Materials, Vienna, Mekhitarist Publishing House (in Armenian).

15. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1836, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, Սուրբ Ղազար:
Avetikian G., Surmelian Kh., Avgerian M. 1836, New Dictionary of the Armenian Language, vol. 1, Venice, Saint Lazarus (in Armenian).

16. Բաբգէն վրդ. 1899, Ճանիկին վիճակին մեջ գտնուող համշենցիներու գաւառաբարբառը, «Բիւրակն», N 41, 654–656:
Babgen Archimandrite, Provincial Dialect of the Hamshenians of the Tchanik Region, Byurakn, N 41, 654–656 (in Armenian).

17. Բդոյան Վ. 1947, Հողաբերքի և տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան:
Bdoyan V. 1947, The Cult of Fertility and Child-Fecundity Among the Armenians, Dissertation for the Degree of Candidate of Historical Sciences, Yerevan (in Armenian).

18. Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Bdoyan V. 1972, The Agricultural Tradition in Armenia, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

19. Բդոյան Վ. 2014, Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Երևան, ԵՊՀ հրատ.:
Bdoyan V. 2014, Ethnography and Folklore of the Armenians of Javakhk, Yerevan, YSU Press (in Armenian).

20. Գաբիկեան Կ. 1952, Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց:
Gabikian K. 1952, Dictionary of the Dialect of the Province of Sebastia, Jerusalem, Saint Jacob's Printing House (in Armenian).

21. Գաբիկեան Կ. 1968, Հայ բուսաշխարհ, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց:
Gabikian K. 1968, Armenian Flora, Jerusalem, Printing House Saint Jacob's (in Armenian).

22. Գայայեան Յ. (Մխիթար Պոնտացի) 1938, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, տպ. Գալֆա:
Gayayian H. (Mkhitar Pontatsi) 1938, Dictionary Treasury of the Armenian language, Cairo, Galfa (in Armenian).

23. Զելինսկի Ս. 1898, Բոյսերի գործածութիւնը Երևանի նահանգում, Ազգագրական հանդես, գ. Դ, հ. 2, Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռօտինեանցի, 177–202:
Zelinsky S. 1898, The Use of Plants in the Yerevan Province, Ethnographic Journal, Book D, N 2, Tiflis, M.D. Rotineants Printing House, 177–202 (in Armenian).

24. Թէոդիկ 1926, Որթն ու իր բերքը. այգեբանական եւ մատենագրական ուսումնասիրութիւն Թէոդիկէ, Ամէնուն տարեցոյցը, 20-րդ տարի, Վենետիկ, Ս. Ղազար, 91–92:
Theodik 1926, The Vine and its Harvest: Horticultural and Bibliographic Study by Theodik, Amenun Taretsuytse, 20th Year, Venice, Saint Lazarus, 91–92 (in Armenian).

25. Թորլաքյան Բ. 1981, Համշենահայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (ՀԱԲ), հ. 13, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:
Torlakyan B. 1981, Ethnography of the Hamshen Armenians, Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, vol. 13, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

26. Թորոսյան Ա. 1983, Հայաստանի դեղաբույսերը, Երևան, «Հայաստան»:
Torosyan A. 1983, Medicinal Plants of Armenia, Yerevan, Hayastan (in Armenian).

27. Իսրայելյան Ա. 2012, XVIII–XX դդ. հայկական հմայական պահպանակները, Երևան, «Ասողիկ»:
Israelyan A. 2012, Armenian Amulets of 18th–20th cc., Yerevan, Asoghik (in Armenian and English).

28. Լալայեան Ե. 1903, Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես, հ. 10, Կերակուր եւ խմիչք. Բուսեղէններ: Սնոտիապաշտութիւն, Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռոտինեանցի, 140–145, 246–249:
Lalayian E. 1903, Borchalu District, Ethnographic Journal, vol. 10, Food and Drink; Herbs. Superstition, 140–145, 246–249 (in Armenian).

29. Լալայեան Ե. 1908, Նոր-Բայազէտի գաւառ, Կամաւոր պասեր եւ տօներ, Ազգագրական հանդես, հ. XVII, 124–125:
Lalayian Y. 1908, Nor-Bayazet District, Voluntary Lents and Holidays, Ethnographic Journal, vol. 17, 124–125 (in Armenian).

30. Հալաջյան Գ. 1973, Դերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 5, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:
Halajyan G. 1973, Ethnography of the Armenians of Dersim, Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, vol. 12, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

31. Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան»:
Hakobyan G. 1974, Ethnography and Folklore of Lower Basen, Yerevan, Hayastan (in Armenian).

32. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:

Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H. 1991, Dictionary of Toponyms of Armenia and Adjacent Regions, Yerevan, YSU Press (in Armenian).

33. Հարությունյան Ս. 1960, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Harutyunyan S. 1960, Armenian Folk Riddles (Study), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

34. Հարությունյան Ա. 1960–62, Տարոնի ազգագրական նյութեր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ա. Հարությունյանի ֆոնդ:
Harutyunyan A. 1960–62, Taron's Ethnographic Materials, Archive of the Institute of Archaeology and Ethnography, A. Harutyunyan Fund (in Armenian).

35. Հարությունյան Ս. 2006, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, ԵՊՀ հրատ.:
Harutyunyan S. 2006, Armenian Incantation and Folk Prayers, Yerevan, YSU Press (in Armenian).

36. Հովակիմյան Հ. 1980, Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Հ. Հովակիմյանի ֆոնդ:
Hovakimyan H. 1980, Ethnography of the Village of Bist of Goghtn District, Archive of the Institute of Archaeology and Ethnography, H. Hovakimyan Fund (in Armenian).

37. Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը, Ազգագրություն, հ. 1, Երևան, «Գիտություն»:
Hovsepian H. 2009, Armenians of Gharadagh, Ethnography, vol. 1, Yerevan, Gitutyun (in Armenian).

38. Ղազարյան Վ. 1988, Վրաստանի Մառնեուլի շրջանի հայկական գյուղերը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Վ. Ղազարյանի ֆոնդ:
Kazaryan V. 1988, Armenian Villages of Marneuli Region of Georgia, Archive of the Institute of Archaeology and Ethnography, V. Kazaryan Fund (in Armenian).

39. Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ:
Ghanalanyan A. 1960, Aratsani, Yerevan, Armenian SSR Academy of Sciences Press (in Armenian).

40. Ճէրէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատ.:
Djerjerian G., Tonikian P., Ter Khachadurian A. 1992, New Dictionary of the Armenian Language, Beirut, Publication of K. Tonikian and Sons (in Armenian).

41. Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երևան, ՀՍՍՌ պետհրատ.:
Malkhasiants S. 1944, Armenian Explanatory Dictionary, vol. 2, Yerevan, Armenian SSR State Publishing House (in Armenian).

42. Մելիք-Բախտամեանց Յ. 1889, Տանտիկին եւ խոհանոց. 400-ի չափ տեղական եւ եվրոպական աժան, համեղ եւ անվնաս կերակուրներ պատրաստելու եղանակ, Մասն 1-ին, Թիֆլիս, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի:
Melik-Bakhtameants H. 1889, Housewife and Kitchen: Methods for Preparing of 400 Local and European Cheap, Delicious and Harmless Dishes. Part 1, Tiflis, Publication of Hovhannes Martirosyants (in Armenian).

43. Մելիքեան Յ. 1964, Հարք-Խնուս, Անթիլիաս, Լիբանան:

Melikian E. 1964, Harq-Khnus, Antilias, Lebanon (in Armenian).

44. Մելիք-Շահնազարեան Կ. 1904, Տնային բժշկութիւնը Ղարաբաղում, Առողջապահիկ թերթ, N 23, 537–538:
Melik-Shahnazarean K. 1904, Home Medicine in Karabakh, Aroghjapahik Tert, N 23, 537–538 (in Armenian).

45. Մէնէվիշեան Գ. 1897, Պատկերազարդ բնական պատմութիւն Բ, Բուսաբանութիւն վարժարաններու եւ գիմնազիոններու համար, Վիեննա, Մխիթարեան տպ.:
Menevishian G. 1897, Illustrated Natural History II, Botany for Schools and Gymnasiums, Vienna, Mekhitarian Press (in Armenian).

46. Միրզոյան Ս. 2007, Կողբոփոր-Նոյեմբերյան, Երևան, «Զանգակ-97»:
Mirzoyan S. 2007, Koghbopor-Noyemberyan, Yerevan, Zangak-97 (in Armenian).

47. Մի քանի խօսք Լոռու փեթակների մասին 1898, Նոր դար, N 163, 2:
A few words about the Lori beehives 1898, "Nor Dar", N 163, 2 (in Armenian).

48. Մկրյան (կազմող) 1938, XIII–XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն. ընտիր նմուշներ, Յերևան, Պետհամալսարանի հրատ.:
Mkryan (compiler) 1938, Armenian secular literature of the 13th–18th centuries: Selected Examples, Yerevan, State University Publishing House.

49. Մովսիսյան Ս. (Բենսե) 1972, Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Movsisyan S. (Bense) 1972, Hark (Msho Bulanikh), Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, vol. 3, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

50. Մուրադեանց 1900, Համշենցի հայեր. Տօներ, Սնոտիապաշտութիւններ, Ազգագրական հանդես, հ. Զ, 145–158:

Muradeyants 1900, Hamshen Armenians, Holidays, Superstitions, Ethnographic Journal, vol. Z, 145–158 (in Armenian).

51. Պալեան Յ. 1899, Պառաւաշունչ Բաբերդի. Նախապաշարումներ, Բյուրակն, N 33, 520–523:
Balian H. 1899, Paravashunch Baberd: Prejudices, Byurakn, N 33, 520–523 (in Armenian).

52. Պետոյան Վ. 1965, Սասնա ազգագրությունը, Երևան, ԵՊՀ հրատ.
Petoyan V. 1965, Ethnography of Sasun, Yerevan, YSU, Press (in Armenian).

53. Պողոսյան Ս. 2007, Տաթևի համառոտ պատմություն, Երևան, «Զանգակ-97»:
Poghosyan S. 2007, Brief History of Tatev, Yerevan, Zangak-97 (in Armenian).

54. Սանասարյաններ Ս. և Վ. 1965, Կարնո նահանգի ազգագրական նյութեր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ս. և Վ. Սանասարյանների ֆոնդ:
Sanasaryans S. and V. 1965, Ethnographic Materials of the Karin Province, Archive of the Institute of Archaeology and Ethnography, Fund of S. And V. Sanasaryans (in Armenian).

55. Սարգիսեան Յ. (Ալեւոր) 1932, Բալու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը), Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ:

Sarkisian H. (Alevor) 1932, Balu (its Customs, Educational and Cognitive Situation and Dialect), Cairo, Sahak-Mesrop Printing House (in Armenian).

56. Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ»:
Sargsyan A. 2013, Dictionary of Karabakh Dialects, Yerevan, Edit Print (in Armenian).

57. Սարգսյան Ա. 2015, Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիթ պրինտ»:
Sargsyan A. 2015, Artsakh Folklore, Yerevan, Edit Print (in Armenian).

58. Սուքիասյան Ա., Գալստյան Ս. 1975, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
Sukiasyan A., Galstyan S. 1975, Phraseological Dictionary of the Armenian Language, Yerevan, YSU Press (in Armenian).

59. Վարդանյան Ա. 2000, Ազնաբերդ, Նախիջևանահայության վերջին ամրոցը, Երևան, «Նախիջևան»:
Vardanyan A. 2000, Aznaberd, the Last Fortress of the Nakhichevan Armenians, Yerevan, Nakhichevan (in Armenian).

60. Տոմարծացի (Թորոսեան) Յ. 1959, Պատմութիւն հայ Տոմարծայի. Տեղագրական-պատմագրական-ազգագրական, հ. Բ, Պէյրութ, «Սեւան»:
Tomartzatsi (Torosian) H. 1959, History of the Armenian Tomartza: Topographical-Historical-Ethnographic, vol. 2, Beirut, Sevan (in Armenian).

61. Гроссгейм А. 1942, Дикие съедобные растения Кавказа, Баку, АзФАН.
Grossheim A. 1942, Wild Edible Plants of the Caucasus, Baku, AzFAN (in Russian).

62. Роллов А. 1908, Дикорастущие растения Кавказа, их распространение, свойства и применение, Тифлис, Типография К.П. Козловского.
Rollov A. 1908, The Wild Plants of the Caucasus, Their Distribution, Properties and Use, Tiflis, Printing House of K.P. Kozlovsky (in Russian).

63. Петров В. 1940, Этноботаника Нагорного Карабаха, Баку, АзфАН.
Petrov V. 1940, Ethnobotany of Nagorno-Karabakh, Baku, AzfAN (in Russian).

Դաշտային հետազոտական նյութեր

1. Ամիրխանյան Ա., Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ): Լոռու մարզ, 2009–2013; Տավուշի մարզ, 2014; Վայոց ձորի մարզ, 2014, 2019–2021; Արագածոտնի մարզ, 2019; Սյունիքի մարզ, 2021–2023; Կոտայքի մարզ, 2023:
Amirkhanyan A., Ethnographic Field Materials. Lori region, 2009–2013; Tavush region, 2014; Vayots Dzor region, 2014, 2019–2021; Aragatsotn region, 2019; Syunik region, 2021–2023; Kotayk region, 2023.

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԵՏ

LULLABIES IN THE CHILDREN'S FOLKLORE OF ARTSAKH: INTERCONNECTIONS WITH FOLK TALES

КОЛЫБЕЛЬНЫЕ ПЕСНИ В ДЕТСКОМ ФОЛЬКЛОРЕ АРЦАХА: ВЗАИМОСВЯЗЬ С НАРОДНЫМИ СКАЗКАМИ

Մելինե Պետրոսյան
Meline Petrosyan
Мелине Петросян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

meline.petrosyan@iae.am

Ներկայացվել է՝ 15.04.2025, գրախոսվել է՝ 26.06.2025, ընդունվել է՝ 12.08.2025
Received: 15.04.2025; Revised: 26.06.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 15.04.2025; рецензировано: 26.06.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-262

Ամփոփում – Օրորոցայինները՝ մայրական գովքի ու գորովի երգերը, բացառիկ նշանակություն ունեն հայ ժողովրդական բանահյուսության մեջ, որոնցում մարմնավորված մայրական զգացումներն ու քրիստոնեական արժեհամակարգը ի սկզբանե անփոխարինելի դեր են կատարել մանկան հոգևոր և մտավոր աշխարհի ներդաշնակ ձևավորման գործում: «Օրորել» բառը, ըստ տարածաշրջանների, ունեցել է իր յուրահատուկ տարբերակներն ու անվանումները՝ *հեյրուր, նանիկ, լորիկ, նեննի, րուրիկնանա:* Արցախում այն կոչվել է *լայ-լայ,* որի մեղեդու թեթևությունն ու կրկնակ արտահայտությունների ռիթմը նմանակել են ճոճվող օրորոցի ձայնը: Սույն հոդվածի տեսական-մեթոդական հիմքը բանագիտական հետազոտությունների առանցքային դրույթներն են, որոնց միջոցով առաջին անգամ փորձել ենք պատմահամեմատական, տիպաբանական և տեքստաբանական վերլուծության մեթոդներով քննության առնել Արցախի ժողովրդական օրորոցային երգերի տպագիր և անտիպ տարբերակները հայ ժողովրդական հեքիաթների հետ դրսևորած փոխառնչությունների համատեքստում: Այսօրինակ երգերի առանցքային թեման թե՛ հեքիաթներում և թե՛ օրորոցայիններում մոր անսահման սերն է երեխայի նկատմամբ, որը ներառում է նաև մանկիկին խնամելու, քնեցնելու, հանգստացնելու մտահոգություն: Ուշագրավ է, որ ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ բանահյուսության մեջ մանկատածության թեման հաճախ աղերսվում է կենդանիների տոտեմական հովանա-

վորության և առասպելաբանական վերապրուկների հետ՝ վերահաստատելով ժանրի վաղնջական ծագման ակունքները: Օրորոցայինների շատ տարբերակներ մեր օրերում ոչ միայն չեն կենցաղավարում, այլև անգամ չեն հրատարակվել: Մեր հոդվածի նպատակն է մասամբ լրացնել Արցախի մանկական բանահյուսության այդ բացը:

Abstract – Lullabies, as songs of maternal praise and care, hold exceptional significance in Armenian folklore. They embody deep maternal emotions and reflect the Christian value system, playing an indispensable role in shaping a child's spiritual and intellectual world from the very beginning. The word "ororel" has various regional variants and names, such as heyrur, nanik, lorik, nenni, rurik, and nana. In Artsakh, it was known as *lay-lay*, with the lightness of the melody and the rhythmic repetition of words imitating the gentle sound of a rocking cradle. The theoretical and methodological basis of the article is the key folklore research principles, employing historical-comparative, typological, and textual analysis methods. For the first time, we examine both printed and unpublished versions of Artsakh's folk lullabies in the context of their connection to Armenian folktales. A central theme in these songs, both in folk tales or lullabies, is a mother's boundless love for her child, encompassing care, soothing, and lulling to sleep. Notably, in both general and Armenian folklore, themes of child care songs are often intertwined with totemic animal guardianship and mythological experiences, reaffirming ancient origins of the genre. Unfortunately, many versions of lullabies are not only out of usage today, but have not even been published. The aim of this article is to partially fill in that gap by exploring and preserving the lullaby traditions of Artsakh.

Аннотация – Колыбельные песни, песни материнской хвалы и любви имеют исключительное значение в армянском народном фольклоре. Материнские чувства и христианская система ценностей, воплощенные в них, изначально играли незаменимую роль в гармоничном формировании духовного иинтеллектуального мира ребенка. Слова «качать» или «баюкать», в зависимости от региона, имели свои уникальные варианты и названия: хейрур, наник, лорик, ненни, рурикнана. В Арцахе это называлось лай-лай: легкость их мелодии и ритм повторяющихся выражений имитировали звук качающейся колыбели. Теоретико-методологической основой статьи являются ключевые положения фольклорных исследований, с помощью которых мы впервые попытались на основе историко-сравнительного, типологического и текстологического анализа изучить печатные и неопубликованные варианты арцахских народных колыбельных песен в контексте их взаимосвязи с армянскими народными сказками. Ключевая тема этих песен, как в сказках, так и в колыбельных безграничная любовь матери к ребенку, которая включает в себя также заботу об уходе за младенцем, его усыплении и успокоении. Примечательно, что как в целом, так и в армянском фольклоре тема детского творчества часто соотносится с тотемическим покровительством животных и мифологическими пережитками, подтверждая исконное происхождение жанра. Многие варианты колыбельных песен в наши дни не только не используются в быту, но даже не опубликованы. Цель данной статьи – частично восполнить этот пробел в детском фольклоре Арцаха.

Հիմնաբառեր – Արցախ, օրորոցային, մանկական բանահյուսություն, հեքիաթ:
Keywords – Artsakh, lullaby, child care song, folk tale.
Ключевые слова – Арцах, колыбельная, детский фольклор, сказка.

Ներածություն

Մանկատածությունը խնամքն է նորածնի նկատմամբ: «Մանկատած» նշանակում է փոքր երեխաներին տածող, խնամող, նույնիսկ՝ մանկավարժ (Մալխասյանց 1944, 254):

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ տղաբերք եզրույթը, երեխա իմաստից բացի, նաև՝ նշանակում է *բար-պտուղ-բերք*: Երեխայի ծնունդը որպես բերք ու բարիք է ընկալվում նաև Արցախի բանաձևային բանահյուսության մեջ. «Բերըս եկալ՝ (հղիացել ես), դե ծնի» (Հայրապետյան 2008, 1):

Փոքր երեխայի մանկատածության մաս են կազմում ոչ միայն նրա խնամքը, կերակրումը, այլև քուն պարգևելու միջոցները, մասնավորապես օրորելն ու երգելը:

Մանկատածության երգերն են՝ օրորոցայինները (օրորները), մանկախաղաց երգերը, գովերգերը:

Մանկատածության երգաշարում թե՛ գրառման վաղեմությամբ և թե՛ առատությամբ աչքի են ընկնում օրորոցային երգերը:

Ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ օրորը մոր երգն է՝ մանկիկին քնեցնելու համար: «Մանկիկին օրրանում շարժելով, օրորելով քնեցնել»: Այստեղից էլ՝ *օրրան, օրորոց* բառերը, Ղարաբաղի բարբառով՝ *ըրօրէլ, ուրուրոց,* որը նշանակում է՝ *երեխային քնեցնելու մահիճ* (Աճառյան 1979, 620):

Օրորոցայինները հորինված են հայրենի և երգային բանահյուսության այլ չափերով, մոր և այլ կին արյունակիցների կողմից՝ հագեցած մանկան նկատմամբ ջերմ սիրով, գորովանքով, մանկան ապագայի նկատմամբ մեծ հույսերով, երեխային ամեն տեսակ չարիքից պաշտպանելու հմայական միջոցների զորության խոր հավատքով (Հարությունյան 2010, 235):

Օրորոցայինների դասակարգումը

Օրորոցայինների յուրաքանչյուր տողում մայրական սիրո անսահմանություն է: Ըստ բովանդակության՝ դրանք կարելի է խմբավորել.

ա) մայրական գովեստ-երգ,

բ) մայրական անհանգիստ մտորումներից ծնված երգ:

Մայրական գովեստ-երգի հետաքրքիր օրինակ է հետևյալ օրորոցայինը.

Կերած կաթնըտ քէզ հալալ ա,
Էս լէն ու բօլ ըշխարքումըս,
Վսկըճիրած իմ լյուս բալա,
Իմըս տուվըս, հվատումըս (Պետրոսյան 2021, 6):

Այսօրինակ օրորոցայինների միջոցով ձևավորվում ու ամրապնդվում է երեխա-ծնող անքակտելի կապը. ասվածի վկայությունը տեսնում ենք նաև անգլիացի բանագետ Բրուկսի մոտ. «Փոքրիկը լսելով մոր ձայնը, զգալով դրա թրթռումը, ծանոթանալով մոր բույրին՝ զարգացնում է իր զգայական համակարգը» (Brooks 2016, 83): Այս երևույթն ինքնին խոսում է երեխայի աշխարհաճանաչողության առաջին լուրջ քայլերի մասին. փաստորեն, օրորոցայինները նախ և առաջ ուղղված են ապահովելու երեխայի բնականոն զարգացման ընթացքը: Իսկ օրորոցային-

ների միջոցով երեխաներին փոխանցվող երաժշտականությունը, ժեստերը, դիմախաղը մոր և մանկան միջև նպաստում են առողջ հաղորդակցության ձևավորմանը (Creighton, Atherton 2013, 24), ինչը հաստատել են բազմաթիվ հետազոտողներ: Հարցի քննությամբ զբաղվել են նաև տարբեր երաժշտագետներ. համաձայն նրանց մոտեցման՝ օրորոցայիններում մայրն ու երեխան համատեղելի «գործընկերներ» են, և մոր կողմից հնչող մեղեդայնության շնորհիվ նրանք մտնում են երաժշտական երկխոսության մեջ (Malloch, Shoemark 2012, 386–399):

Ուսյալ, կիրթ ու կայացած զավակի հետ կապված հույսերն աննկարագրելի բերկրանք են պատճառում ծնողին, և մայրը հավատացած է, որ իր որդին թև ու թիկունք է լինելու ողջ գերդաստանին: Դա համընդհանուր երևույթ է աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ. «Օրորոցայինները նպաստում են հուզական մտերմության ձևավորմանը՝ անմիջական կապ ստեղծելով հարմարավետության ու անվտանգության միջև» (Baker, Mackinlay 2006, 147):

Բայիկ ըրա վէր դինջանաս,
Հանցու վէր ճելլի (արագ) մըծանաս
Քինիս կարթիս՝ լավ մարթ տէռնաս,
Մեր դըլվումը վէնը կէնաս (Պետրոսյան 2021, 16):

Ապահով կյանք ունենալու մաղթանքը մշտապես ուղեկցել է փոքրիկներին, որովհետև ծնողները լավ էին հասկանում ծանր կենցաղի ու դաժան աշխատանքի հետևանքները.

Լօք տաս սարեն, լօք տաս բարեն,
Քեզ ծառայի հարուր տարեն,
Գյուրգըդ տըռօզ, ջուբըդ տըռօզ,
Թօշդ տռօզ իմ բալա:
Օրոր, օրոր իմ բալաս (Հարությունյան 1991, 39):

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ազգային ու մշակութային առանձնահատկությունների հստակ համակարգը, որը փոխանցվում է սերնդեսերունդ, սակայն մի բան աներկբայորեն առկա է բոլոր ժողովուրդների մոտ. «դեռ օրորոցում փոքրիկն իր կյանքի առաջին ազդակները, շրջակա աշխարհի մասին ձևավորած պատկերացումները ստանում է օրորոցայինների շնորհիվ» (Мартынова 1975, 152):

Հենց այս կարևորագույն նախապայմանն է օրորոցայինների այսօրինակ տարածվածության հիմք դարձել: Անշուշտ, ազգային բնավորության, կենսամակարդակի ու աշխարհընկալման ձևերից են ծնվում որոշ երևույթներ, որոնք, ժամանակի ընթացքում ամրապնդվելով, դառնում են տվյալ ժողովրդի բնավորության անքակտելի մասը: Օրինակ, եվրոպական ժողովուրդների մոտ հաճախակի է նկատվում ծնողների երկուստեք մասնակցությունը օրորոցայինների կատարմանը, իսկ հայ իրականության մեջ պատկերն այլ է, այն վերագրվում է մորը. «Ծնողների ներգրավվածությունը օրորոցայիններում խթանում է ծնողավարման հմտությունների զարգացմանը, ձևավորում երեխա-ծնող զգայական ամուր համակարգ» (Brachfeld-Child, Simpson, Izenson 1988, 174):

Օրորոցայինների հաջորդ խումբը կյանքի դժվարություններից անմասն չմնացած մոր անհանգիստ մտորումներն են, որոնք ուղեկցում են քնելու ծեսին ուղղված ողջ գործընթացին.

Էս աշխարը յաման ծոռ ա,
Ամէն օրը ստեղ կօռ (դժվար - Մ.Պ.) ա,
Կյանքը զուլամ ա տեռալ շատ,
Հունց եշումըս ցավ ա ու դարդ (Պետրոսյան 2021, 8):

Փոքրիկը ակամա դառնում է մոր ներքին տագնապների կրողն ու կիսողը: Իմաստային այս նրբերանգն էլ երբեմն տեղիք է տալիս այս երգերը մանկական բանահյուսության ժանրի դրսևորումներ չհամարելու, մինչդեռ ըստ էության սրանք իմաստային նույն օղակի հաջորդական շղթաներն են. առաջինը գովեստի մաղթանքն է, երկրորդը՝ տագնապից ծնվող երազանքը:

Օրորոցայինների կառուցվածքային առանձնահատկությունները

Արցախի օրորոցայիններում առանցքային դեր ունեն կրկներգային բանաձևումները՝ «նանիկ-նանիկ», «բայ-բայ», «լայ-լայ», «բայուշկի-բայուշկի», «քոնիլ-քոնիլ», որոնց գլխավոր նպատակը երաժշտականության, կրկնությունների և ռիթմիկ հանգավորման շնորհիվ երեխաներին քուն բերելն է: Այս գործընթացն առավել ներդաշնակ ընթացք ու նպատակային ավարտ է ունենում, երբ զուգորդվում է մայրական ջերմ մաղթանքներին. «Սիրագորով մայրը բազմաթիվ պատկերավոր համեմատություններով ու համադրություններով գովերգում է իր մանկան գեղեցկությունը, նրանով լցված տեսնում բնությունն ու աշխարհը» (Նահապետյան 2011, 214):

Լայ-լայ անե իմ բալաս,
Բաբայ անե իմ բալաս,
Թող քոն ինի՝ մծանա,
Վարթու միչի մծանա (Հայրապետյան 2008, 2):

Ինչպես նկատում է Յունգը, երաժշտությունը նպաստում է երեխայի հետ՝ ծնողների ու դայակների էմոցիոնալ, հուզառատ շփմանը (Young 2005, 298):

Երկնային լուսատուների ներգրավումը օրորոցայիններում մոր ենթագիտակցության ազդակներին հաղորդում է ապահովության ու պաշտպանվածության զգացում: Այդպիսով մայրը փորձում է պաշտպանել իր փոքրիկին մթությունից, չար ոգիներից: Այստեղ մենք հանդիպում ենք ծիսահմայական երգերի մնացուկների, որոնց գլխավոր գործառույթը չարահալած բնույթն է՝ միահյուսված մայրական բարեմաղթանքներին ու օրհնանքներին.

Աստղը ու յերգինք նանիկ ասեն,
Վար իմ բալաս բայիկ անե,
Ըրազումըտ միշտ լյուս տեսնաս,
Քշերը քեզ մթեն չանե (Պետրոսյան 2021, 11):

Եթե ժամանակին օրորոցայինները մայրիկների խոսելու, ցավը մեղմելու, անձնական դժբախտությունը բարձրաձայնելու համար իբրև «հարթակ» էին ծա-

ռայում, ապա այսօր կինն առավել ազատ ու ինքնուրույն է, և օրորոցին գամված, ոչ թե իր ծանր կյանքն է ողբում, այլ հաջողակ ու կամային մարդ դաստիարակելու մտահոգություն ունի. «Երեխայի ապագա կյանքում շատ մեծ դերակատարում ունեն մոր մշտական ներկայությունը, նրա կարիքներին ճիշտ ու համապատասխան արձագանքելը, ջերմ հարաբերությունները, մարմնական և բառային շփումները մոր հետ» (Осорина 2011, 288):

Աշխարքը շատ ծոռա բալաս,
Բայց տու պիտի մարթ մըծանաս,
Խելունք ինիս, ղաշանգ ապրիս,
Յերգիրիտ միշտ ծերք հսցնիս (Պետրոսյան 2021, 15):

Որոշ կենդանիների և թռչունների ներգրավումը օրորոցայինների մեջ շարունակվում է առ այսօր: Այս երևույթը ծիսահմայական նախահիմք ունի: Առավել տարածված է կատվի կերպարը՝ որպես քուն բերող կենդանի:

Ա չախմուր, խելունք կատու,
Եկ խուխես քոն ըրա տու,
Կոխկեն պառկե՝ խաղ անե,
Անուշ-անուշ բայ անե (Պետրոսյան 2022, 9):

Ժողովուրդների տարածքային առանձնահատկություններով պայմանավորված՝ օրորոցայիններում հանդես են գալիս տարբեր կենդանիներ ու թռչուններ՝ գայլը, արջը, արծիվը: Հայ ժողովրդական օրորոցայիններին առավել բնորոշ են բազեն, սոխակը, աղավնին: Այսօրինակ երգերում միջատների ու խոտաբույսերի չենք հանդիպում, դրանք առավելապես տարածված են ծիսահմայական երգերում: Այս մասին փաստում են նաև ռուս բանագետներ Ն. Կապլակովան (Каплакова 1962, 231), Վ. Երյոմինան (Еремина 1978, 61):

Ժամանակի ընթացքում ծիսահմայական նախահիմք ունեցող օրորոցայիններն իրենց տեղը զիջեցին քրիստոնեական հավատի պաշտամունքային ձևերին ու կերպարներին. «Քրիստոնեության ընդունումից հետո օրորոցայիններում հրեշտակներին, սրբերին ու հատկապես Աստվածամորը վերապահվեց երեխաներին չար ուժերից պաշտպանելու և հանգիստ քուն բերելու կարևորագույն գործառույթը» (Капица, Колядич, 2002, 42):

Պահում տամ քեզ սուրփ Մարիամեն,
Թող քոն անին հրեշտակնեն,
Պաշտպանին քեզ էն չար դէվան,
Վեր տեն չի քիամ ուրուրուցան (Պետրոսյան 2021, 12):

Պատկերավորման միջոցներով հարուստ օրորոցայիններն առավել ծանրակշիռ դեր ունեն մանկական բանահյուսության մեջ. «Օրորոցային տեքստերում գործածված ոսկե, արծաթե օրորոցը, օրորոցային պարագաներն ունենում են այլաբանական մեկնություն» (Մատիկյան 2020, 112), և այսօրինակ պատկերների միջոցով արտացոլվում է սոցիալական կյանքի ողջ նկարագիրը.

Լայ-լայ կանիմ
Քոնըտ կըտանի:

Ուրուրուցըդ վեսկի ա
Յորղան-դոշակըդ ապրըշում ա (Հայրապետյան 2008, 1):

Անդրադառնալով օրորոցայինների ժանրային առանձնահատկություններին՝ պետք է առանձնացնենք դրանց իմպրովիզացիոն և ավանդական բնույթը: Ըստ Մարտինովայի՝ մաղթանքներն արտահայտվում են իմպրովիզացիայի միջոցով, իսկ մահվան երգերն առավել ավանդական հիմք ունեն, որովհետև ցանկություններն արտահայտվում են «կայուն ձևով՝ անցնելով երգից երգ» (Мартынова 1966, 22):

Օրորոցայինների առնչակցությունները ժողովրդական հեքիաթների հետ

Մանկատածության բանահյուսությունը երբեմն իր արտահայտությունն է գտնում հայ ժողովրդական հեքիաթների որոշ դիպաշարերում: «Ջիգարով պախրեն» (Հայ ժողովրդական հեքիաթներ 1977, 398), «Ջեյրանեն մարը» (Վարդանյան 2001, 7), «Խղճավ էծը» (Հայրապետյան 2008, 1), «Խիղճ - անխիղճը» (Հայ ժողովրդական հեքիաթներ 1977, 653) հեքիաթներում առկա են մոր ներանձնական հոգեվիճակն արտացոլող տրամադրություններ.

Լայ-լայ, լայ-լայ իմ բալա
Սրտես մաչին մին տենակ,
Էծը տառնա քեզ մամա,
Խաշամը՝ յորղան-դոշակ (Հայրապետյան 2008, 2):

Վերոնշյալ հեքիաթներում պատուհասված ծննդկանին օգնության են հասնում մի դեպքում՝ պախրան կամ այծը, որոնք երեխային կերակրում են իրենց կաթով, մյուս դեպքում՝ արջը, որը, բերելով տատմորը, փրկում է երեխայի կյանքը: Քամին օրորում է նորածնին, ծառերի մանր տերևները փափկոց (ներքնակ) են դառնում մանկան համար, լայն տերևներն էլ՝ ծածկոց:

Նորածնի մայրը ինչ-ինչ հանգամանքների պատճառով պատուհասվում է, և բնությունը ինքն է ստանձնում երեխայի խնամքը:

Հայագետ Ասատուր Մնացականյանը օրորոցային և մանկախնամ երգերում տեսնում է հնագույն տոտեմական պատկերների հետքեր. «Տոհմատիրական կարգերում եղած պատկերացումների համաձայն, երեխաներին դաստիարակել են հատուկ եղանակներով և մկրտելիս նրանց հավատացրել, որ նրանք ծնված են իրենց նախնիներից՝ տոտեմներից» (Մնացականյան 1955, 258):

Թե զինք մարդ-մարն չէ քեզ բերել,
Ոչ կնիկ դայեկ սնուցեր, ընկալ օյ,
Թե եղն ի մօրին այ բերել էղաւօյ,
Խրկագվին կաթով սնուցեր ընկալ,
Աստղունք իր օրորքն ա տըվել, էղ,
Լուսնիակն ի լուսն է հաներ, ընկալ (ձեռագիր N 770, 124):

Վերոնշյալ երևույթի արտացոլումը տեսնում ենք մեկ այլ ազգագրական շրջանում: Այսօրինակ տարբերակային տարածվածությունը ևս խոսում է ժողովրդի մեջ լրջորեն արմատավորված լինելու մասին:

Որդի քնի, քո քուն անուշ,

Վեթին քե ծիծ տա,
Աստված քե պահի,
Քամին քե տանի բերի,
Չուր քու մերիկ դառնա գյա (Էմինյան ազգագրական ժողովածու 1906, 63):

Թռչնակերպերն ու կենդանակերպերը միայն հայկական հեքիաթներում չէ, որ հանդես են գալիս: Նրանց կարելի է հանդիպել տարբեր ժողովուրդների մոտ: Այս մասին փաստում է նաև Կուշները՝ վկայակոչելով վելիկոռուսներին և ուկրաինացիներին (տե՛ս Կուշներ 1927, 131):

Արդի օրորոցայինները զրկված են ծիսահմայական գործառույթից: Դրանց նմանությունը ավանդական օրորոցայիններին դրսևորվում է զուտ երաժշտականության և կրկներգերի մեջ: Դրանք հաճախ ոչ թե մայրն է երգում, այլ լսվում է խաղալիքի մեջ տեղադրված ձայնագրությունը: Օնլայն հարթակում օրորոցայինների շուրջ առկա են բազմաթիվ հավելվածներ, որոնք կարող են լինել թե՛ ժողովրդական և թե՛ հեղինակային օրորներ. ինչպես նկատում է բանագետ Ռոգոֆը, յուրաքանչյուր սերունդ դրանք հարմարեցնում ու վերանայում է իր ժամանակի մարդկային ու կենսաբանական ընկալումներին ու պահանջներին համապատասխան (Rogoff 2003, 7): Հեղինակային օրորոցայիններում ևս նկատվում է վերոնշյալ երևույթը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր ազդեցությունն է թողնում ինչպես բանահյուսական այլ նմուշների, այնպես էլ օրորոցայինների վրա: Օրինակ, Արցախում տեղի ունեցող դեպքերը չէին կարող անմասն մնալ այս ամենից: XXI դարում շրջափակման մեջ անմարդկային ծանր զրկանքներ կրող արցախցի մոր օրորոցայինն անպայմանորեն տարբերվելու էր Հայաստանի մեկ ուրիշ ազգագրական շրջանի մոր օրորոցայինից, քանի որ արցախցի մայրը նախ և առաջ գոյաբանական խնդրի առջև էր կանգնած: Խաղաղ պայմաններում էլեկտրաէներգիայի, համացանցի ու սննդի առկայությունը մարդու բնականոն կյանքի ընթացքն ապահովող երևույթներ են, մինչդեռ պատերազմական իրադրությունում իրավիճակային լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Էլեկտրաէներգիայի խնայման նպատակով առավել քիչ էին դիմում ժամանակակից միջոցների, այստեղ նորից օգնության էր գալիս ավանդականը, որի շնորհիվ էլ ծնվում էին հեղինակային նոր օրորոցայիններ:

Ժողովրդի կյանքի հարափոփոխ ընթացքի հետ փոխվել է նաև օրորոցայինների տարածվածության ու կարևորության ցուցանիշը: Այս ժանրի ստեղծագործությունները գնալով դուրս են մղվում ժողովրդի կյանքից, առավելապես երիտասարդների կենցաղից՝ պայմանավորված ժամանցի այլընտրանքային միջոցներով:

Օնլայն հարթակն առավել իշխող ու գրավիչ է դարձնում երեխաների առօրյան: Այս երևույթն առկա է տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Գլխավոր պատճառն, անշուշտ, էկրանային մեդիայի լայն տարածումն է ժամանակակից ընտանիքների կյանքում (Brooks 2016, 83):

Այս մասին փաստում են տարբեր ազգերի հետազոտողներ. «Ժամանցի այլընտրանքային միջոցները ժամանակակից աշխարհում գնալով ավելի հասանելի ու մատչելի են դառնում շնորհիվ իրենց տարածվածության և օնլայն հար-

թակում հավելվածների հսկայական շուկայի ձևավորման» (Anthes 2011, 16–18): Այնուամենայնիվ, պետք է ընդունենք այն փաստը, որ ժամանակակից աշխարհում նոր օրորոցայիններ չեն ստեղծվում, եղածները, որոնք ժամանակակից միջոցներով տարածված են օնլայն հարթակում, հիմնականում ավանդականի վերամշակված ու ավելի մատչելի դարձրած տարբերակներն են:

Արցախի մանկական բանահյուսության մեջ ևս մանկատածության երգեր գրեթե չեն ստեղծվում, սակայն պահպանված նմուշները շարունակում են կենցաղավարել այն ընտանիքներում, որտեղ, բացի նորատի մայրիկներից, երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվում են նաև ընտանիքի կենսափորձ ունեցող կանայք:

Եզրակացություններ

Արդի աշխարհում ժողովրդական օրորոցայինների ավանդական ժանրը սահմանափակ գործածություն ունի, ինչն էլ պայմանավորված է այլընտրանքային բազմաթիվ միջոցների հասանելիությամբ: Ժամանակակից օրորոցայինների գերակշիռ մասը կամ հեղինակային ստեղծագործություններ են, կամ ավանդականի վերամշակված ձևեր: Օրորոցայիններն առնչակցական կապեր ունեն հրաշապատում հեքիաթներում պահպանված ծիսաառասպելաբանական պատկերացումների հետ, որտեղ պատուհասված երեխային գրեթե միշտ օգնության է հասնում բնությունը:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած գիտական տեղեկությունների ու խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում մեր ատենախոսության գիտական ղեկավար, բ.գ.դ. Թամար Հայրապետյանին, բ.գ.թ. Լուսինե Մադաթյանին, բ.գ.թ. Հասմիկ Գալստյանին:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Լրաբեր հասարակական գիտությունների» խմբագրական կազմին՝ համագործակցության համար:

Գրականություն/References/Литература

1. Աճառյան Հր. 1979, Հայերեն արմատական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետական հրատ., հ. Դ:
   Acharyan Hrachya 1979, Armenian Etymological Dictionary, Yerevan, Armenian SSR State Publishing House, vol. D (in Armenian).
2. Էմինյան ազգագրական ժողովածու 1906, հ. VI, Լազարյան ճեմարանի արևելյան լեզու, Մոսկուա - Վաղարշապատ (հաւաքեց Ս. Հայկունի):
   Eminian Ethnographic Collection 1906, vol. VI, Eastern Language of the Lazarian Seminary, Moscow - Vagharshapat (Collected by S. Haykuni) (in Armenian).
Հոպոպի մասին ավանդազրույցները 10-ն են, որոնք հյուսված են ընտանեկան հարաբերությունների շուրջ և վերաբերում են ծնող-երեխա, կին (հարսնացու) – ամուսին (փեսացու), հարս - սկեսուր, հարս - սկեսրայր, հարս - տեգր հարաբերություններին: Այս բաժանումներն ու ընտրված հերթականությունը, որոնք կամայականորեն չեն արված, ցույց են տալիս մարդու կյանքի իրարահաջորդ փուլերը՝ *ա. ծնողի խնամքին գտնվող երեխա, բ. հասուն տարիքի՝ արդեն եղբորը խնամող աղջիկ, գ. ամուսնության շեմին գտնվող հարսնացու, որը փախչում է ապագա ամուսնուց կամ փնտրում իր նախկին սիրեցյալին, դ. արդեն ամուսնացած կին (հարս):*

ա. Ծնող - երեխա: Առկա 10 ավանդազրույցներից 2-ում հոպոպը նախապես երեխա է եղել, որը մորը չլսելու պատճառով անիծվել է նրանից ու կերպափոխվել:

Այս բովանդակությամբ ավանդազրույցների՝ մեզ հայտնի առաջին տարբերակը (Ա. վերլուծական մասում ավանդազրույցները հիշատակելիս անընդհատ բնագրային մեջբերումներ չանելու նպատակով՝ բոլոր ավանդազրույցները համարակալում ենք՝ անհրաժեշտության դեպքում նշելով միայն թիվը, օրինակ՝ Ա, Բ, ...Զ, ...Է ևն)՝ «Պուպու (յոպոպ)» վերնագրով, XIX-րդ դարավերջին արձանագրվել է Հարքում և գրի առնվել Բենսեի կողմից: Ըստ ավանդազրույցի՝ մի կին լողացնում է իր չար տղային, սակայն տղան անընդհատ խանգարում է, ըմբոստանում՝ թույլ չտալով մորը շարունակել գործը: Բարկացած մայրը սանրը խփում է տղայի գլխին ու անիծում. *«...եղնիս պուպու սարերն ոլորտիս. փղէն կեղնի պուպու թռնայ երթայ»* (Բենսե 1900, 43): Ավանդազրույցը 1972 թ. վերահրատարակվել է ՀԱԲ-ի՝ Բենսեի ժողովածուում: Այստեղ մոր՝ սանրով խփելուց հետո «կեղտոտ ու ժպռոտ» տղան փախչում է՝ դառնալով հոպոպ՝ սանրը գլխին, և նշվում է, որ հոպոպի նախատիպ մարդու այդ վարքագծի՝ չլողանալու պատճառով է նրա բույնը գարշելի հոտ արձակում (Բենսե 1972, 52–53): Երեխայի և

հոպոպի համեմատության համատեքստում ուշագրավ է եգիպտական դամբարաններում հայտնաբերված երեխայի պատկերը, որի ձեռքին հոպոպ կա (Fakhri, Bakhtiari, Adelzadeh 2014, 42):

Երկրորդ տարբերակը (Բ) գրի է առնվել 2000 թ. Արցախի Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում 70-ամյա բանասաց Խորասան Սաղյանից և տեղ է գտել բանագետ, բանահավաք Արմեն Յ. Սարգսյանի կազմած ժողովածուում: Սյուժեն հետևյալն է. մի կին թութը հավաքում է, քամում և դնում կրակի վրա՝ քաղցու (դոշաբ) պատրաստելու նպատակով: Սակայն նրա չար տղան խաղալիս կաթսան շրջում է և թութը թափում, որի պատճառով մայրը բարկանում ու անիծում է նրան. տղան անմիջապես *«սընդըրկապէ յա փըէռնում, ընգում հէնդէրը»* (Սարգսյան 2015, N 2 (201) դ, 236): Այս ավանդազրույցում, ինչպես տեսնում ենք, ոչ մի կերպ չի բացատրվում հոպոպի գլխի «սանրի» առաջացումը:

Այսպիսով, նշված երկու տարբերակներում հոպոպը նախապես տղա երեխա է եղել, որը չի ենթարկվել մորն ու նրա անեծքի հետևանքով կերպափոխվել է:

բ. Եղբայր - քույր: Ավանդազրույցներից 2-ում հոպոպը նախապես աղջիկ է եղել, որը թռչուն է դարձել եղբոր (եղբայրների) կորստի ցավից:

Մի տարբերակը (Գ) վկայված է Գանձակի գավառին վերաբերող՝ Ե. Լալայանի աշխատության մեջ (1900 թ.). ազգագրագետը գրում է, որ այն պատմվում էր *«թուրքերի մէջ՝ յոպ-յոպի մասին»*: Այստեղ խոսքը, հավանաբար, դավանափոխ եղած հայերի մասին է, քանի որ այդ ժամանակաշրջանում *թուրք* եզրույթն ուներ ոչ թե էթնիկ, այլ կրոնական իմաստ: Ըստ այս տարբերակի՝ Յուսուփ և Նասիբ անուններով երկու եղբայր են լինում, որոնք ունենում են Ֆաթմա անունով մի քույր, «*որ սովորութիւն ունէր գլխին սանր կրել*»: Մի անգամ եղբայրները գնում են իրենց կորած ձին փնտրելու՝ պատվիրելով իրենց քրոջը մինչև վերադարձը կերակուր պատրաստել: Վերջինս թանապուր է պատրաստում ու սպասում, սակայն տեսնելով, որ եղբայրները չեն վերադառնում, ինքն է գնում նրանց գտնելու: Երկար փնտրելով՝ Աստծուն խնդրում է, որ իրեն թռչուն դարձնի, որպեսզի ավելի հեշտ կարողանա որոնել նրանց: Աստված կատարում է աղջկա խնդրանքը և նրան հոպոպ դարձնում (Լալայեան 1900, 341):

Մյուս տարբերակը (Դ) գրի է առնվել Արցախի Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում 2001 թ. 65-ամյա բանասաց Գոհար Գրիգորյանից: Հակուփ անունով երեխայի մայրը նրան թողնում է իր աղջկա մոտ, ինքը գնում դաշտ: Եղբորը հսկող աղջիկը սկսում է մազերը սանրել, սակայն, մի պահ հետ նայելով, տեսնում է, որ եղբայրն անհետացել է: Շատ փնտրելով ու չգտնելով՝ վշտից սանրը գլխին թռչուն է դառնում (Սարգսյան 2015, N 2 (201) գ, 235):

գ. Հարսնացու - սիրեցյալ: Ավանդազրույցներից 3-ում հոպոպը նախապես կին է եղել, դրանցից 2-ում ամուսնուց փախչելով է կերպափոխվում, իսկ 1-ում՝ ամուսնու կորստի լուրի ցավից:

«Իպիկ կուկու (աւանդավէպ)» վերնագրով ավանդազրույցը (Ե) 1896 թ. Պոլսի «Արեւելք» պարբերականում տպագրել է լեզվագետ, գրականագետ Հով-

հաննես Գազանճյանը: Ըստ ավանդազրույցի՝ մի գեղեցիկ աղջիկ ու մի «ծառահասակ» տղա անչափ սիրում են միմյանց: Սակայն աղջկան բռնի կնության են տալիս մեկին, որին նա չէր սիրում: Կատարվածից հետո երիտասարդն ուխտում է «*մոռնալ աշխարհքը» և «փուն, փեղ, արտ, կալ ձգելով՝ լեռները, դաշտերը ինկաւ թափառական»:* Այնուհետև նկարագրվում է արդեն «հարսնաբաղնիք» տարվող աղջիկը, որին բոլորը բարեմաղթանքներ են ուղղում, սակայն նա տխուր մտածում է. *«–Ա՛խ, ո՛ւր էր թէ թռչուն ըլլայի, լեռ սար ընկնէի, սիրականս գտնէի...: Եւ Աստուած որ սըրմա մազերով աղջկան տառապանքը վերէն կը տեսնէր, կը կատարէ անոր խնդիրքը, և հարսը՝ սանտրը գլուխը, յանկարծ թռչունի կը փոխուի ու կը սլանայ»* (Գազանճեան 1896, 3, տե՛ս նաև՝ Ղանալանյան 1969, N 367գ, 138):

Հաջորդ ավանդազրույցը (Զ) գրառվել է 1994 թ. Արցախի Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղում 82-ամյա բանասաց Զարվարդ Պետրոսյանից: Գեղեցիկ, աղքատ ընտանիքում ծնողները պայմանավորվում են մի հարուստ մարդու հետ և նրան կնության են տալիս իրենց աղջկան՝ հակառակ վերջինիս կամքին: Հայտնվելով անելանելի վիճակում՝ աղջիկը փախչում է մորաքրոջ տուն: Չհանդուրժելով անպատվությունը՝ ամուսինը, խանչալը վերցրած, գնում է, որ սպանի նրան: Հասնելու պահին աղջիկը մազերը սանրելիս է լինում, տեսնելով ամուսնուն, վախից հոպոպ է դառնում՝ սանրը գլխին (Սարգսյան 2015, N 2 (201)բ, 235, տե՛ս նաև՝ Ղանալանյան 1969, N 367գ, 138):

Մյուս տարբերակը (Է), «Իպիկ կուկուկ» վերնագրով, իր «Յուշամատեան»-ում հաղորդում է ամասիացի (Պոնտոս) բանասեր, բանահավաք Գաբրիել Սիմոնյանը: Ըստ ավանդազրույցի՝ Ամասիայում գարնան ավետաբեր համարվող հոպոպը նախկինում նորահարս է եղել, որը մազերը սանրելու պահին լսել է իր փեսացուի անհետացման լուրն ու սանրը գլխին թռչունի փոխակերպվել՝ «շառունակ ձայնելով Գրիգորը, կո՛ւկո՛ւ, կո՛ւկո՛ւ» (Սիմոնեան 1966, 924):

դ. Հարս - սկեսուր (սկեսրայր) փեգր: Հոպոպի մասին ավանդազրույցներում ամենատարածված մոտիվները հյուսված են ընտանիքում ճնշված, հալածված հարսի կերպարի շուրջ (թվով՝ 3 ավանդազրույց և 2 տարբերակ), որը «սխալ» գործողություն է անում որոշակի միջավայրում: Ավանդազրույցներից 1-ի (Ը, Ը*, Ը**) միջավայրը վերաբերում է խմոր հունցելուն. այստեղ սյուժեն ծավալվում է հարս-սկեսուր կամ հարս-սկեսրայր հարաբերությունների շուրջ: Հաջորդ ավանդազրույցի միջավայրը վերաբերում է լոգանք ընդունելուն (Թ), և սյուժեն՝ հարս-սկեսրայր հարաբերությունների մասին է, իսկ 3-րդ ավանդությունը (Ժ) հաղորդվում է շատ հպանցիկ՝ առանց միջավայրը նկարագրող մանրամասնությունների, սյուժեն՝ հարս-տեգր հարաբերությունների շուրջ է:

Մի տարբերակը (Ը), «Յոպոպ» վերնագրով, գրի է առնվել Լոռիում և 1903 թ. հրատարակվել Երվանդ Լալայանի կազմած ժողովածուում: Ըստ այդ ավանդազրույցի՝ հարսը, խմոր հունցելու ժամանակ գործը կիսատ թողնելով, սկսում է մազերը սանրել: Սկեսուրն այդ պահին ներս է մտնում և բարկանում հարսի վրա, որն էլ երկյուղելով՝ սանրը գլխին թռչուն է դառնում (Լալայեան 1903, 191,

տե՛ս նաև՝ Ղանալանյան 1969, N 367 ա, բ, 138): Նույն ավանդազրույցը [Ը*] գրի է առնվել 2002 թ. Արցախի Ասկերանի շրջանի Վարդաճոր գյուղում 70-ամյա բանասաց Վարդի Ասրյանից, այն աննշան տարբերությամբ, որ հարսը ոչ թե վախից, այլ ամոթից է սանրը գլխին կերպափոխվում հոպոպի (անունն էլ մնում է «Սանդըր») (Սարգսյան 2015, N 2 (201) ա, 235): Միևնույն ավանդազրույցն (Ը**) արձանագրված է նաև Գանձակում XIX դարավերջին, պարզապես սկեսուրի փոխարեն հարսին սկեսրայրն է հայտնաբերում խմորի մոտ սանրվելիս, որից հետո հարսը ամոթից ու երկյուղից թռչունի է փոխակերպվում ու սանրը գլխին թռչում (Լալայեան 1900, 341):

Հաջորդ ավանդազրույցը (Թ), որն արձանագրվել է Գեղարքունիքում (Նոր Բայազետ) XX դարասկզբին, բովանդակային մանրամասնություններով մի փոքր տարբերվում է նախորդից: Այստեղ այլ է փոխակերպման միջավայրը. հարսի՝ տանը լողանալու պահին ներս է մտնում սկեսրայրը, ինչից սաստիկ ամաչելով՝ հարսը թռչուն է դառնում և սանրը գլխին՝ երդիկից դուրս թռչում (Լալայեան 1908, 90): Հարսի կիսամերկ վիճակը *«կին/տղամարդ հարաբերության մեջ ակնարկում է սեռական ցանկության հարուցման նախահիմք, որն այդ նույն սովորույթի զորությամբ գիտակցվում էր հանցանք, ընտանեկան բարոյական նորմերի՝ արգելքի խախտում, հետևաբար և պատժի անհրաժեշտություն»* (Հարությունյան 2000, 244–245): Ընդհանրապես, լողացող կնոջ մարմնի թացությունն առասպելաբանության մեջ խորհրդանշում է պտղավորում, արգասավորում, սերմնավորում (հմմտ. մարդկային սերմի հեղուկային, ջրային, խոնավ վիճակի հետ). «Հետևաբար կնոջ կիսամերկ մարմինը՝ կապված լվացման, այն է՝ ջրի, խոնավության, գիշության հետ, ենթադրում է սեռական գործողության միտում... որը ավանդական սովորութային իրավունքով խստիվ արգելվում էր» (Հարությունյան 2000, 245–246): Տեսակետի ապացույցն արտացոլված է նաև «Սասնա ծռեր» էպոսում, երբ Սառյեն փորձում է (գլուխ լվանալու պատրվակով) իր կիսաբաց մարմնով գայթակղել Դավթին, (Սասունցի Դավիթ 1939, 216), սակայն հասկանալով դրա անթույլատրելիությունը՝ վերջինս կարողանում է խուսափել հորեղբոր կնոջ խարդավանքներից:

Ըստ էության, ամաչելուց և վախից հարսի՝ հոպոպ դառնալը հայկական ամենատարածված և, թերևս, ամենահին պատումն է, որը հայտնի է Արցախից, Գանձակից ու Լոռիից մինչև Ալաշկերտ և Համշեն (հայտնի են այս ավանդազրույցի նաև պարսկական (Fakhri, Bakhtiari, Adelzadeh 2014, 42) և թուրքական (Sakaoğlu 1976, 181–183) տարբերակները. առաջինը պահանջում է լուրջ քննություն՝ իրանական պատմահամեմատական նյութի համադրմամբ, իսկ երկրորդը, մեծ հավանականությամբ, հարկ է դիտարկել որպես հայկական մշակութային ենթաշերտի ազդեցության հետևանք): Վերջինից (Ժ), թեև ավանդազրույց, որպես այդպիսին, չունենք գրառված, սակայն Հ. Մուրադյանը հաղորդում է, որ XIX դարավերջին կամ XX դարասկզբին Համշենում եղել է հետևյալ պատկերացումը՝ թե հոպոպը *«նոր հարս է եղել, մազերը սանդրելիս՝ փէգրը*

վրայ է եկել, ամօթից թռչուն է դառել և սանրը գլխին թռել, գնացել է», դրա համար էլ հոպոպը Համշենում կոչվել է սօնդրիլիկ (Մուրադեան 1901, 88):

Կերպափոխման պատճառները բանահյուսական և ազգագրական լույսի ներքո

Կերպափոխումը բանահյուսության մեջ տարածված մոտիվ է՝ մարդ-կենդանի, մարդ-քար, մարդ-սար(լեռ), մարդ-թռչուն: Եթե ելնենք այն պատկերացումից, համաձայնի որի, մահից հետո մարդու հոգին մարմինը լքում է թռչնի պես, կարող ենք ենթադրել, որ քննվող ավանդազրույցներում տեղի է ունենում ժամանակավոր՝ մարմնական վիճակից հիմնական՝ հոգևոր-մշտական վիճակի անցման գործընթացը: Դա բխել է մեռած մարդու «հոգու թռիչքի» և թռչունների թռիչքի արագության նմանություն-համեմատությունից (Иванова-Казас 2006, 5–6): Մարդու՝ մահից հետո թռչնի վերածվելու հիմնարար ապացույցներից է նաև այն, որ որոշ ավանդազրույցներում կորած-մահացած սիրելիին որոնելիս փնտրողը, զգալով կորուստը գտնելու անհնարինությունը, Աստծուն խնդրում է, որ թևեր տա իրեն և թռչուն դարձնի, որը, հավանաբար, հարազատի մոտ գնալու ամենակարճ միջոցն է: Երբ մարդը նեղության ու անելանելի վիճակի մեջ էր ընկնում, ասում էր. *«Մահը ծեռիս իլի պա՛ց կըթողըմ, թըռչի քը՛ն»* (գրի ենք առել 2025 թ. գարնանը՝ Փամբակ գյուղում (Գեղարքունիքի մարզ, Վարդենիսի շրջան), տեղի բնակչուհի Վարսենիկ Չիլինգարյանից (ծնվ. 1965 թ., Ադրբեջանի ԽՍՀ Դաշքեսանի շրջանի Ղոթյուլ գյուղում)): Նշված նախադասության մեջ *«թըռչի քըն՛»* ձևակերպումը հոգու թռչնակերպ ընկալման հնագույն մտածողության արձագանքն է, որը, ենթադրաբար, մարդն արտաբերում է նույնիսկ առանց հիմնական իմաստը հասկանալու: Սակայն ակնհայտ է՝ արտաբերողը հավատում է, որ մահվան ժամին մարդու հոգին թռչում է: Ջ. Ֆրեզերը գրում է, որ մարդու հոգին փոքր՝ անտեսանելի մարմին է մեծ մարմնի մեջ: Վկայակոչելով Ավստրալիայի բնիկներին՝ նա գրում է, որ *«մեծ մարմինը մեռնում է և նրան թաղում են, իսկ փոքր մարմինը նրա մահից հետո թռչում է»* (Ֆրեզեր 1989, 216–217):

Ընդհանրապես, մարդկային հոգու թռչնակերպ պատկերացումները տարածված են եղել աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ, նաև հաճախ համարվել է, որ «թռչունը հոգին տանում է անդրաշխարհի թագավորություն» (Proon 2024, 266), իսկ հեքիաթների հերոսի մեռած նախնին հաճախ թռչնի տեսքով է հայտնվում (Топоров 1987, 398–403): Թռչունն իր մեջ կրում է երկրի վրա մեռած մարդու հոգին: Դերսիմցիները հավատում էին, որ փոքր երեխաների հոգիները մահից հետո «կերպարանափոխվում են աղավնիների, որոնք թևածում են եթերում և ճախրում երկնքում» (Հալաջյան 1960, 1435): Լալայանը գրում է, որ Վարանդայում մի պառավ իրեն պատմել է, «թէ մի ծառի տակ իւր հիւանդ թոռը խնամելիս, ննջում է և տեսնում մի աղաւնի, որ երեխայի բերանից դուրս է գալիս և կանգնում ծառի վրայ» (Լալայեան 1897, 185): Այսինքն՝ կերպափոխումն, ինչ-որ առումով, արդեն մահվան հետևանք է:

Մեռած մարդկանց հոգիներն Աստծո մոտ են տանում հրեշտակները, որոնք նույնպես փետրավոր ու թևավոր են և թռչում են: Հետևաբար՝ թռչունների և Վերին աշխարհի հետ առաջին կապը դրսևորվում է հենց թռչելու, թևավոր լինելու մեջ, քանի որ թռչունները շատ նման են Աստծու հրամանները կատարողներին: Վարանդայում Լալայանին պատմել են, որ հոգիները հասնում են երկինք և «թռչունների կերպարանքով մնում են՝ արդարները՝ մի ծաղկալից, ծառազարդ այգում, մեղաւորները՝ մի մթին տեղ, իսկ ո՛չ արդար, ո՛չ մեղաւորները՝ արդարների յետևը» (Լալայեան 1897, 186): Այսինքն՝ բոլոր դեպքերում մարդը մահից հետո Աստծո մոտ է հասնում թռչնի կերպարանքով՝ անկախ բարի կամ չար լինելուց: Ջավախքում հավատում էին, որ մեռնելուց հետո, երբ մարդու հոգուն ասում են «Փառք՝ ի բարձունս», նա «թռչում է Երուսաղէմ, երեք անգամ համբուրում Ս. գերեզմանը և այստեղ 40 օր մնում, մինչև ննջեցյալի քառասունքը լրանալը» (Լալայեան 1896, 317):

Ուշադրության է արժանի նաև թռչունների կերպափոխված մարդկանց վարքագիծը. բոլորը խոցելի, անպաշտպան, օգնության կարիք զգացող խմբեր են՝ հարկադրված ամուսնությունից խուսափող աղջիկներ, ամուսնուն կորցրած կանայք, ընտանիքում ճնշված հարսներ, եղբայրներին կորցրած քույրեր, այլ թռչունների դեպքում՝ պարտքը վերադարձնել չկարողացող գյուղացիներ, խորթ մորից հալածված երեխաներ, եզը կորցրած խեղճ հոտաղներ և այլք: Սրանք այն խմբերն են, որոնք, իրենց վիճակի բերումով, աղերսվում են խեղճությանն ու անօգնականությանը, և Աստված նրանց ընդունում է որպես ազնիվ և մաքուր հոգիների:

Հոպոպը՝ որպես անմաքուր թռչուն

Հոպոպը ժողովրդի կողմից բավական «փնթի» թռչունի համարում ունի, որի ապացույցն է, օրինակ, «Հոպոպն ինքն է հոտած, հենց գիտե, թե բունն է հոտած» առածը (Տեր-Աղեքսանդրեան 1885, 124, տե՛ս նաև Ղանալանյան 1960, 46): Աստվածաշնչում էլ այս թռչունը դասվում է անմաքուրների շարքում (Ղեւտ., 11:18): Հին կտակարանում՝ Զաքարիայի գրքում, կարդում ենք, որ անիրավության կապարե կշեռքի թևերին կանայք են նստած և «նրանց թեւերը յոպոպի թեւերի պէս էին» (Զաքարիա 5:9):

Գրող Վախթանգ Անանյանը, ակնարկելով նաև հայ ժողովրդական ավանդազրույցը, գրում է. *«...այդ «ամոթխած հարսը» տեսեք, թե ահա ինչ կենցաղ ունի: Հոպոպը միշտ «զուգված» է խայտաբղետ գեղեցիկ հագուստներով, երփներանգ սանրը գլխին, բայց եթե նայես բույնը, չես հավատա, որ դա այդ թռչունինն է: Նախ ծույլ է, կարգին փափուկ բույն չի շինում: Հետո, անմաքուր է պահում բույնը, դուրս չի թափում ծերփը: Այնքան է կեղտ (ծերփ) հավաքում բնում, որ ձագերը մինչև վզները խրվում են նրա մեջ»* (Անանյան 1967, 186): «Բազմավէպի» համարներից մեկում կարդում ենք. *«Թե ինչու է, որ սա գեղեցիկ թռչունը անարգ կը սեպվի, ասոր ուրիշ պատճառ չենք գտներ, բայց եթե իրեն գարշահոտությունը ու անախորժ ձայնը»* (Բնական պատմութիւն (Յոպոպ) 1845,

338–340): Հոպոպի «անմաքրակենցաղության» մասին հիշատակում է նաև Մխիթար Գոշը. *«...շատերը արհամարհում էին նորան (հոպոպին) զազրահոտության համար»* (Գոշ 1878, 75):

Բերված օրինակները պարզաբանում են նաև խմորին անմաքուր մոտեցող հարսի կերպափոխման պատճառները. քանի որ նրա մեղքը փնթիությունն է, դրա պատճառով էլ նա դառնում է հոպոպ: Այսինքն՝ ժողովրդական մտածողությունն այս ավանդազրույցները հյուսել է բավական ճշգրիտ և իրական՝ իր աչքի տեսածի և իմացածի համաձայն:

Հոպոպի և ջրային իգական ոգիների առնչությունները

Հոպոպը, ըստ երևույթին, առնչվում է ջրային ոգիների, աստվածուհիների (սիրեններ, նայադներ, ջրահարսեր և այլն) հետ, որոնք տարբեր աղբյուրներում նկարագրվում են գոտկատեղից վերև՝ կնոջ տեսքով, կրծքերով, մեջքով, երկար մազերով ու հերարձակ, գոտկատեղից ներքև՝ թռչնակերպ (Горбовский 2003, 118, 120; Непомнящий, Низовский 2004, 138–146; Виноградова 2009, 496, Стрелкова 2015, 268; Ապոլլոդորս 2017, 215; Օվիդիուս 2021, 167): Ապրելով մեկուսի՝ որևէ մեկին տեսնելիս այդ արարածներն իսկույն անհետանում են (Լալայեան 1896, 337), ինչը հիշեցնում է հայերենի բառարաններում *հոպոպ* բառի դիմաց երկրորդ իմաստով նշված բացատրությունը՝ «ամբողջովին մեկուսացած մարդ» (Ճէրէճեան, Տէր-Խաչատուրեան 1992, 315; Մալխասեանց 1944, 415):

Սլավոնական բանահյուսության մեջ ջրահարսերը ծնողների կողմից նզովված աղջիկներ են, որոնք անիծվում են կա՛մ սխալ վարքի, կա՛մ տնից փախչելու, անհետանալու պատճառով (Зеленин 1995, 148–150), այսինքն՝ ծնողի կողմից անիծված երեխաների մարմնավորումներ են, որոշ շրջաններում՝ չթաղված կանանց և աղջիկների հոգիներ (Зеленин 1995, 149): Հիմնական բնութագրիչներից է նաև անժամանակ և անբնական մահով մեռած լինելու հանգամանքը (Зеленин 1995, 149), որը նման է հոպոպի կերպափոխված մարդկանց ճակատագրերին: Տեսաբաններից ոմանք ջրահարսերի նախատիպեր են համարում ամուսնությունից առաջ մահացած աղջիկներին (Виноградова 2009, 142):

Ուշադրության արժանի է նաև հոպոպի՝ հողի միջով տեսնելու և թաքնված ջրերը, աղբյուրները գտնելու կարողության մասին պատմությունը: Գերմանացի բանագետ Կունցմանը, հղում անելով արևելյան սեմական ավանդազրույցներին, նշում է, որ «հոպոպը համարվում է ջուր որոնող («ջրաբեր»), «բացող» և օժտված է խոսելու ունակությամբ: ...կարողանում է տեսնել հողի միջով և ցույց տալ թաքնված աղբյուրները, ինչը նրան սիրելի է դարձրել Սողոմոնի համար և, բնականաբար, բարձր է գնահատվել անապատում ապրող մարդկանց կողմից (Kunstmann 1938, 17):

Հունական որոշ աղբյուրներում, օրինակ, սիրենները թռչնի մարմին են ստացել իրենց խնդրանքով՝ իրենց մտերիմ Պերսեփոնեին փնտրելու և ավելի հեշտ գտնելու նպատակով: Որոշ առասպելներում էլ Դեմետրա աստվածուհին է պատժել նրանց՝ Պեսրեփոնեի կորուստը չկանխելու համար (Обнорский 1900,

66. Гигин 2017, 193): Այս ավանդազրույցն առաջին մասով համապատասխանում է, օրինակ, մեր **Գ** և **Դ** ավանդազրույցներին, որտեղ կերպափոխումը տեղի է ունենում հուսահատությունից դրդված՝ հարազատին փնտրելիս: Երկրորդ մասով այն համապատասխանում է անեծքի գործադրմամբ կերպափոխմանը (տե՛ս **Ա, Բ** ավանդազրույցները):

Խուսափելով Պելևսի հետ ամուսնությունից՝ Մակեդոնացու մայր Թետիսը, որը նույնպես ջրային աստվածուհի էր, հաճախակի կերպարանափոխվում էր՝ դառնալով կրակ, ջուր, օձ, առյուծ, ծառ և թռչուն (Овидиюс 2021, 325): Սա համապատասխանում է մեր՝ ամուսնուց փախչող և հոպոպ դարձած կանանց մասին հյուսված ավանդազրույցներին (**Զ,** մասամբ՝ **Ե**): Ընդհանուր առմամբ կարելի է հոպոպի և ջրային իգական ոգիների նմանությունները դասակարգել երեք հիմնական խմբերի՝ կերպափոխում (որի մասին արդեն խոսել ենք), սանր/գլխաթագ, ձայն:

Սանր/գլխաթագ

Սանրը մի շարք դիցաբանական իգական կերպարներին բնորոշ իր է. այդ էակները բանահյուսության մեջ հանդես են գալիս նաև սանրվելով (Լալայեան 1896, 338, Зеленин 1995, 145): Այն համարվում է կնոջ ճակատագրի բանալին (Захарченко 2008, 77): Աբխազական ժողովրդական հեքիաթներից մեկում, օրինակ, աղջիկը հենց սանրից է ծնվում (Зухба 2005, 209): Հոպոպի մասին հյուսված հայկական 10 ավանդազրույցից 9-ում (Ա, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ) կերպափոխվողն ինչ-որ կերպ առնչվում է սանրին: Նշված տասն ավանդազրույցից երեքում (Ը, Թ, Ժ) հարսին տան անդամները հանկարծակի հայտնաբերում են ինչ-որ վիճակում սանրվելիս, որից հետո նա անմիջապես կերպափոխվում է հոպոպի:

Նույն գործառույթներն ունեն նաև ջրային ոգիները, որոնք ծովի ափին կամ ափամերձ ժայռերի վրա սանրվում են, սակայն մարդ տեսնելիս իսկույն անհետանում են (Зеленин 1995, 162): XX դարասկզբին սլավոնական բանահյուսական-ազգագրական միջավայրը լավ ուսումնասիրած Զելենինը գրում է, որ ջրահարսը ժողովրդի պատկերացումներում սանրվելիս միշտ մազերն առջևից հետ է տանում (Зеленин 1995, 160): Նկարագրվածը շատ նման է հոպոպի գլխի փետրափնջին, որին ժողովուրդը սանր է կոչում: Այն, իրապես, կարծես հետ սանրված լինի:

Ջրային իգական արարածները պատկերված են գլխին՝ գլխաթագով, ծաղկեփնջով կամ ծաղկեպսակով (Зеленин 1995, 185): Այդ նկարագրությունները մեզ հիշեցնում են հայերենի բառարաններում հոպոպի կատարի նկարագրությունը, որ կոչում ենք «փունջ» (Գայայեան 1938, 354): Այդ բառն առաջին իմաստով նշանակում է ծաղիկների փունջ: Ուստի, սա կարող ենք զգուշությամբ համեմատել ջրահարսերի, սիրենների ու մյուս ջրային արարածների գլուխները զարդարող ծաղկեփնջերի հետ: Ըստ արևելյան ավանդության՝ հոպոպը մի շարք լավ արարքների համար իր թագն ստացել է Սողոմոն Իմաստունից: Գեր-

մանացի բանագետ Կունցմանը դասակարգել է այդ արարքները, որի շնորհիվ ստացվել է հետևյալ պատկերը:

ա. Հոպոպը Սողոմոնին անապատում փրկել է արևից ու առաջնորդել նրան, որի համար արքայից ստացել է իր գլխաթագը, որը սկզբնապես ոսկի է եղել, սակայն մյուս թռչունների նախանձի ու բողոքների պատճառով Սողոմոնն այն վերածում է փետուրե թագի (Kunstmann 1938, 6–7):

բ. Երբ Սողոմոն արքան ուխտագնացության էր Մեքքայում, նկատում է, որ հոպոպը բացակայում է, ինչն առաջացնում է նրա բարկությունը, քանի որ մաքրման ծեսի համար ջուր էր անհրաժեշտ, սակայն միայն հոպոպը կարող էր ջուր գտնել (Quran 27:20–22; Kunstmann 1938, 7): Ավելի ուշ հոպոպը գալիս է և օգնում արքային:

գ. Հոպոպը թագ է ստացել ուղղակի՝ կանանց առաջ խոնարհվելուց հրաժարվելու պատճառով (Kunstmann 1938, 8): Սա, ինչպես նշում է հեղինակը, արևմտյան ավանդազրույց է և, ըստ մեզ, գուցե ինչ-որ կերպով փոխկապակցված է միջավայրի հետ, քանի որ զգալիորեն տարբերվում է մյուսներից, որոնք առնչվում են արևելքին:

դ. Հոպոպն իր թագը ձեռք է բերել գողությամբ, մի դեպքում՝ կրիայից, մի դեպքում՝ կկվից (Kunstmann 1938, 8–9): Այսպիսով, այսպես կոչված, «սողոմոնյան մոտիվաշարով» այս ավանդազրույցները ևս մեկ անգամ փաստում են հոպոպի և ջրային ոգիների որոշ նմանությունները, որոնք արտահայտված են սանրի, գլխաթագի, ջրի տեսքով:

Ձայնը և կանչը

Հոպոպը ջրային ոգիների հետ առնչվում է նաև արձակած ձայնի, կանչի առումով: Արդեն նշվեց, որ սիրեններն ու ջրային մյուս աստվածուհիներն իրենց ձայնով կանչում էին նավաստիներին: **Է** ավանդազրույցում ամուսնուն կորցրած, փնտրող, հոպոպ դարձած կինն ուղղակի անձնանուններ արտաբերելով կամ տարբեր ձայնարկություններ արձակելով, կանչում է իր ամուսնուն. «Գրիգորը, կո՛ւկո՛ւ, կո՛ւկո՛ւ» (Սիմոնեան 1966, 924): Սա ենթադրաբար վերևում հիշատակված ջրային կերպարների շուրջ հյուսված պատկերացումների հեռավոր՝ ձևաբովանդակային փոփոխություններ կրած արձագանքն է: Ընդհանրապես կենդանիների ձայն ունենալը խորհրդանշում էր նրանց խելքն ու իմաստնությունը: Հնդկական դիցաբանության մեջ օրինակներ կան, որտեղ թռչուններին խոսքը տրվել է «վերևից և ինչ-որ բան է նշանակում» (Ледовских 2021, 3197): Եվ չափազանց ուշագրավ է, որ հոպոպի «հոպոպ» ձայնը շատ նման է ջրահարսերի արձակած ձայներին՝ «գու-գու-գու» կամ «կումա-կումա» (Зеленин 1995, 191):

Հոպոպի արձակած ձայնը հիմնված է զուգավորման կանչի վրա (Kuntsmann 1938, 40), այսինքն՝ այդ ձայնով նա կանչում է իր զույգին: Այս բնութագրումը մեզ կրկին հիշեցնում է իգական ջրային ոգիների արձակած ձայները, որոնցով նրանք հրապուրում և կանչում են նավաստիներին, որոնք, բնականաբար, հակառակ սեռի են, այսինքն՝ լիովին տեղավորվում են «զուգընկերոջ» գաղափարի

մեջ: Գերմանացի մշակութաբան Կլյուգեն նույնպես պաշտպանում է այս տեսակետը՝ նշելով, որ այն «առաջացել է հոպոպի զուգավորման կանչից (h)upup» (Kluge 1967, 857): Ձայնով զուգընկերոջը կանչելու բնույթով են օժտված նաև տատրակը, աղավնին, որոնք նույնպես զուգավորման շրջանում կանչում են իրենց «արուներին»: Սա, իհարկե, հոպոպի կանչի միակողմանի մեկնաբանություն է, քանի որ այլ ավանդազրույցներում նա այդ կանչով փնտրում է մե՛րթ եղբորը, մե՛րթ երեխային, մե՛րթ ամուսնուն: Ուստի, հոպոպը ձայնող, փնտրող ու պատժված մարդ-թռչուն է (Грейвс 1992, 126):

Տաբու

Հոպոպի հետ կապված պատկերացումներն ու հավատալիքները ուշ հայկական միջավայրում, անշուշտ, ձևաբովանդակային զգալի փոփոխություններ են կրել և մեզ հասել առասպելական հիմքից զրկված: Դրանք հիմնականում ձեռք են բերել ընտանեկան, կենցաղային բնույթ և արտահայտում են հայկական նահապետական ընտանիքի նիստուկացի օրենքները: Մեր հին ընտանեկան հարաբերությունները պտտվում էին տաբուների շուրջ, որոնք վաղնջական ժամանակներում ձևավորված և որոշ առումներով ցօրս կենցաղավարող չգրված օրենքներ են, որոնք խախտողը, ըստ խախտման (սխալի կամ հանցանքի) մեծության, պատժվում է կամ անընդունելի դառնում շրջապատի կողմից և ֆիզիկապես օտարվում, վտարվում սեփական միջավայրից: Տաբուների շրջանցման դրսևորմամբ ավանդազրույցները վերաբերում են հարս-սկեսուր, հարս-սկեսրայր, հարս-տեգր, ծնող-երեխա, կին-ամուսին հարաբերություններին, որոնք, ժամանակին խիստ տաբուների ազդեցության տակ գտնվող հարաբերություններ են եղել:

Հարս և սկեսուր: Հարսի և սկեսուրի հարաբերություններն արտացոլող **Ը** ավանդազրույցներում կոնֆլիկտն առաջանում է հնուց ընտանիքներում արմատացած անքննելի օրենքներից մեկի՝ հացի նկատմամբ ունեցած պաշտամունքի շուրջ: Հայտնի է, որ հայկական նահապետական ընտանիքներում հարսը երկյուղ է ունեցել սկեսուրից և ամոթխածություն՝ սկեսրայրի ու տեգրոջ նկատմամբ, որոնք արտացոլված են վերը հիշատակված զրույցներում: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ հայկական ընտանիքներում տնտեսական գործերի առումով իշխանությունը պատկանում էր տան տիկնոջը, նա էր հանձնարարում՝ ով ինչ պետք է անի (Լիսիցյան 1981, 39; Լալայեան 1896, 289–290; Լալայեան 1897, 151; Լալայեան 1898, 234, 235), և բնական էր, որ բաց մազերով խմորին մոտենալու դեպքում սկեսուրը պետք է նախատեր նրան, քանի որ հայ իրականության մեջ խմոր հունցող կինը, բացի ձեռքերն ու երեսը լվանալուց, պետք է այնպես կապեր գլխաշորը, որ մազ անգամ չերևար: Սակայն հարսը խախտում է այդ կանոններն ու չգիտակցված դեմ գնում սկեսուրի բացարձակ իշխանությանը: Դա ոչ միայն երկյուղ ու ամոթխածություն էր ենթադրում, այլև՝ պատիժ, որի մասին գրում է Ս. Լիսիցյանը՝ նշելով, որ սկեսուրը, հարսին նախատելուց բացի, կարող էր նաև բռունցքների դիմել (Լիսիցյան 1981, 40–41):

Հարս և սկեսրայր: Սկեսրայրի (**ԹԻ** ավանդազրույց) ու տեգրոջ (**ԺԻ** ավանդազրույց) դեպքում, ինչպես վերը նշեցինք, հարսը ոչ թե երկյուղից, այլ ամոթից է կերպափոխվում, և սա նույնպես բխում է մեր նահապետական ընտանիքներում կենցաղավարած համալիր բարքերից: Սկեսրոջ ու սկեսրայրի հետ հարսի հարաբերությունների տարբերությունը կապված է նաև հայկական ընտանիքներում զբաղվածության բաժանումով. սկեսուրի հետ հարսը մշտապես տանն է, նրանք միասին են իրականացնում տան աշխատանքները, ինչն էլ հաճախ հարսին իրավունք է վերապահում երկխոսության մեջ մտնել, հաճախ՝ պատասխանել սկեսուրին: Սակայն իրավունք չունենալով բառ փոխանակելու սկեսրայրի հետ՝ հարսն ամոթից, անճարությունից կերպափոխվում է թռչունի: Եվ, եթե այս ամենը դիտարկենք մահ-կերպափոխում համատեքստում, կարելի է համարել, որ, ժողովրդական ձևով՝ «հարսն ամոթից մեռել է»: Սակայն սրանք ազգագրական և կենցաղային հողի վրա արված դիտարկումներ են, այնինչ սկեսրայրի և հարսի շուրջ հյուսված ավանդազրույցներն առանձնանում են բազմաթիվ այլ շերտերով, որոնցից ամենակարևորն ու ուշագրավը, թերևս, ջրի հետ առնչությունն է:

Եզրակացություններ

Այսպիսով՝ հայ բանահյուսության մեջ հոպոպի մասին առկա բոլոր ավանդազրույցները վերաբերում են այդ թռչնի ծագմանն ու, որոշ դեպքերում, անվան ստուգաբանությանը: Ավանդազրույցներում հոպոպը հանդես է գալիս որպես՝

ա. երեխա, որը չարությունների պատճառով արժանանում է մոր անեծքին,

բ. քույր, որի եղբայրները ձին փնտրելիս անհետ կորչում են,

գ. հարսնացու, որը հալածվում-ճնշվում է ծնողներից ու փեսացուից,

դ. հարս, որն հալածվում-ճնշվում է սկեսուրից և սկեսրայրից,

ե. կին, որը անելանելի վիճակում է հայտնվում ամուսնու կորստի պատճառով,

զ. կին, որն անելանելի վիճակում է հայտնվում ամուսնու (փեսացուի) նկատմամբ ունեցած վախից:

Հոպոպը արտաքին և գործառութային որոշակի նմանություններ ունի նաև ջրային իգական կերպարների՝ ջրահարսերի, սիրենների, նայադների և այլնի հետ: Այդ ամենն արտացոլված է սանր-գլխաթագի, մեկուսի լինելու, անհայտանալու, կանչի և այլ նմանություններով: Միաժամանակ նշենք, որ հայկական միջավայրում հոպոպն էականորեն հեռացել է իր նախնական ընկալումներից: Առաջին հայացքից ավանդազրույցները չեն պարունակում թռչնի հետ կապված հնագույն պատկերացումները, փոխարենը դրանք դարձել են զուտ միջավայրային, կենցաղային, ընտանեկան հարաբերություններ ու կարգուկանոն արտացոլող զրույցներ: Ընդհանուր աղբյուրների համադրությունը, սակայն, թույլ է տալիս ենթադրել, որ հարսի և սկեսրայրի/տեգրոջ հարաբերությունները ծովահարսերի նկատմամբ բռնի սեռական գործողությունների հնագույն առասպելների արձագանքներ են:

Այդքանով հանդերձ՝ կարող ենք եզրակացնել նաև, որ ինչ-որ շրջաններում հոպոպը մարմնավորել է նաև պատվի զգացումը: Առաջին հերթին դա երևում է նրա՝ կերպափոխվելու հիմնական դրդապատճառներից՝ սեր ամուսնու, եղբոր նկատմամբ և ամոթի բարձր զգացում, բացի այդ, ազգագրական որոշ շրջաններում հարգանք և բարի համբավ վայելելու նպատակով՝ կանանց կողմից իրենց հագուստի մեջ հոպոպի փետուր մտցնելու սովորությունը (Նազարեանց 1878, 11): Հոպոպի վայելած հարգանքի մասին են խոսում նաև միջնադարում Սողոմոն Իմաստունի անձի շուրջ հյուսված զրույցները (Սրապյան 1969, 318):

Շնորհակալական

Սույն հոդվածը գրելու ընթացքում տրամադրած արժեքավոր տեղեկությունների, օգտակար դիտողությունների, խորհուրդների և հոդվածի վերջնական խմբագրման համար շնորհակալություն ենք հայտնում մեր գիտական ղեկավարին՝ բանագետ, լեզվաբան Տորք Դալալյանին: Արցախին առնչվող բանահյուսական նյութերի և բարբառային ճշգրտումների համար շնորհակալություն ենք հայտնում նաև բանագետ, բարբառագետ Արմեն Յ. Սարգսյանին, ազգագրական առանձին շրջանների մասին բանահյուսական-ազգագրական տվյալներ տրամադրելու համար՝ բանագետ Հասմիկ Գալստյանին: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 24SSAH-6B016 գիտական նախագծի, ինչպես նաև մեր բազային՝ «Թռչունների հետ կապված պատկերացումներն ու հավատալիքները հայ վիպական բանահյուսության մեջ» թեմայի շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Անանյան Վ. 1967, Հայաստանի կենդանական աշխարհը, հ. 3, Երևան, Հայպետհրատ:
   Ananyan V. 1967, The Animal World of Armenia, vol. 3, Yerevan, Haypethrat (in Armenian).
2. Ապոլլոդորս 2017, Դիցաբանական գրադարան, Երևան, Անտարես:
   Apollodorus 2017, Mythological Library, Yerevan, Antares (in Armenian).
3. Բենսե 1900, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Ազգագրական հանդէս, Ձ, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի:
   Bense 1900, Bulanukh or Hark District, Ethnographic Journal, 6, Tiflis, Printing House of K. Martirosyants (in Armenian).
4. Բենսէ 1972, Հարք (Մշո Բուլանըխ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Bense 1972, Hark (Msho Bulanukh), Armenian Ethnography and Folklore, vol. 3. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
5. Բնական պատմութիւն 1845, Յոպոպ, Բազմավէպ, Վէնետիկ, Գ, 22, 338–340:
   Natural History 1845, The Hoopoe, Bazmavep, Venice, vol. III/22, 338–340 (In Armenian).
6. Գազանճեան Յ. 1896, Իպիկ կուկու (Աւանդավէպ), Արեւելք, Թիւ 3692, 3:

Gazandjean H. 1896, Ipik Kuku (A Legend), Arevelk, N 3692, 3 (in Armenian).

7. Գայայեան Յ. 1938, Բառարան-գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, «Գալֆա»:
Gayayan H. 1938, Dictionary-Treasury of the Armenian Language, Cairo, Galfa (In Armenian).
8. Լալայեան Ե. 1896, Ջաւախք: Ընտանեկան բարք: Հոգու և հանդերձեալ կեանքի մասին, Ազգագրական հանդէս, Ա, Թիֆլիս, տպարան Աւագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի:
Lalayan Y. 1896, Javakhk: On Family Customs, Soul, and the Afterlife. Ethnographic Journal, vol. I, Tiflis, Printing House of Avag M. Mahtesi-Hakobyants (in Armenian).
9. Լալայեան Ե. 1897, Վարանդա, Ազգագրական հանդէս, գ. Բ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռոտինեանցի:
Lalayan Y. 1897, Varanda, Ethnographic Journal, vol. II, Tiflis, Printing House of M.D. Rotinyants (in Armenian).
10. Լալայեան Ե. 1898, Սիսիան. ընտանեկան կեանք, Ազգագրական հանդէս, գ. Գ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի:
Lalayan Y. 1898, Sisian. Family Life, Ethnographic Review, vol. III, Tiflis, M.D. Rotinyants Printing House (in Armenian).
11. Լալայեան Ե. 1900, Գանձակի գաւառ, Ազգագրական հանդէս, գ. Զ, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի:
Lalayan Y. 1900, Gandzak District, Ethnographic Journal, vol. VI, Tiflis, Printing House of K. Martirosyants (in Armenian).
12. Լալայան Ե. 1903, Բորչալուի գաւառ, Ազգագրական հանդէս, գ. Ք, Թիֆլիս, արագատիպ Մ. Մարտիրոսեանցի:
Lalayan Y. 1903, Borchalu District, Ethnographic Journal, vol. X, Tiflis, Typesetting House of M. Martirosyants (in Armenian).
13. Լալայեան Ե. 1908, Նոր-Բայազէտի գաւառ, Ազգագրական հանդէս, գ. XVII/1, Թիֆլիս, տպարան Օր. Ն. Աղանեանի:
Lalayan Y. 1908, Nor-Bayazet District, Ethnographic Journal, vol. XVII/1, Tiflis, Publishing House, Mr. N. Aghanean (in Armenian).
14. Լիսիցյան Ս. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Lisitsian S. 1981, The Armenians of Mountainous Karabakh, Armenian Ethnography and Folklore, vol. 12, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
15. Հալաջյան Գ. 1960, Դերսիմի ազգագրությունը: Թռչուններ, ՀԱԻ արխ., Գևորգ Հալաջյանի ֆոնդ, Դերսիմի ազգագրություն, ցուցակ 2, գործ 14:
Halajyan G. 1960, The Ethnography of Dersim: Birds, Archive of the Institute of Archaeology and Ethnography of Armenia, Gevorg Halajyan's Fund, Dersim Ethnography, Inventory 2, File 14 (in Armenian).
16. Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան տպարան»:
Harutyunyan S. 2000, Armenian Mythology, Beirut, Hamazkayin Vahe Seteyan Press (in Armenian).

17. Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ghanalanyan A. 1960, Aratsani, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

18. Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ghanalanyan A. 1969, Oral Tradition, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

19. Ճէրէճեան Գ., Տօնիկեան Կ., Տէր-Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 2, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատ.
Jerejean G., Tonikean K., Ter Khachatourean A. 1992, New Dictionary of the Armenian Language, vol. 2, Beirut, K. Tonikian and Sons Publishing House (in Armenian).

20. Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան 3, Երեւան, ՀՍՍՌ պետական հրատ.:
Malkhaseants S. 1944, Armenian Explanatory Dictionary, vol. 3, Yerevan, State Publishing House of the Armenian SSR (in Armenian).

21. Մխիթար Գոշ 1878, Ողոմպիանու եւ Եզովպոսի ընտիր առակները, թարգմ.՝ Խորէն քահանա Միրզաբէգեանց), Բագու, տպ. Հայոց մարդասիրական ընկերության:
Mkhitar Gosh 1878, Selected Fables of Olympianos: Aesop, Translated by Khoren Mirzabekyants (Priest), Baku, Printing House of the Armenian Philanthropic Society (in Armenian).

22. Մխիթար Պ. 1938, Բառարան գանձարան հայերէն լեզուի Գահիրէ, «Գալֆա»:
Mkhtiar P. 1938, Dictionary Treasure of the Armenian Language, Cairo, Galfa (in Armenian).

23. Մուրադեան Յ. 1901, Համշէնցի հայեր, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի:
Muradean, H. 1901, Armenians of Hamshen, Tiflis, Printing House of K. Martiroseants (in Armenian).

24. Նազարեանց Յ. 1878, Նախապաշարմունք, հ. 1 (Բ գործ.), Տփղիս, տպ. Յովի. Մարտիրոսեանցի:
Nazareants H. 1878, Prejudice, vol. 1 (Part B), Tiflis, Printing House of H. Martiroseants (in Armenian).

25. Սամուելյան Խ. 1931, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Յերեվան, «Արմֆան»:
Samvelyan Kh. 1931, The Culture of Ancient Armenia, vol. 1. Yerevan, Armfan (in Armenian).

26. Սասունցի Դավիթ 1939, համահավաք բնագիր, կազմ.՝ Մ.Խ. Աբեղյան, Երևան, ՀԽՍՀ պետհրատ:
David of Sassoun, 1939, Critical Edition, ed. M.Kh. Abeghyan, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

27. Սարգսյան Ա. 2015, Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիթ Պրինտ»:
Sargsyan A. 2015, The Folklore of Artsakh, Yerevan, Edit Print (in Armenian).

28. Սիմոնեան Գ. 1966, Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, Վենետիկ, տպ. Մխիթարեան Միաբանութեան:
Simonean G. 1966, Memoirs of Pontic Amasya, Venice, Printing House of Mekhitarist Congregation (in Armenian).

29. Սրապյան Ա. 1969, Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Srapyan A. 1969, Medieval Armenian Dialogues, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

30. Տեր-Աղեքսանդրեան Գ. 1885, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, Թիֆլիս, Յովհաննես Մարտիրոսեանցի տպ.:
Ter-Alexandrean G. 1885, The Intellectual Life of Tiflis, Tiflis, Yovhanness Martiroseants Press (in Armenian).

31. Օվիդիուս Պ. 2021, Կերպարանափոխություններ, Երևան, «Զանգակ»:
Ovid P. 2021, Metamorphoses, Yerevan, Zangak (in Armenian).

32. Ֆրեզեր Ջ. 1989, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան»:
Frazer J. 1989, The Golden Bough, Yerevan, Hayastan (in Armenian).

33. Виноградова Л. 2009, Русалка, Славянские древности: этнолингвистический словарь т. 4, Москва, 495–501.
Vinogradova L. 2009, Mermaid, Slavic Antiquities: An Ethnolinguistic Dictionary, vol. 4, Moscow (in Russian), 495–501.

34. Гигин Г. 2017, Мифы, Санкт-Петербург, «Алетейя».
Gigin G. 2017, Myths, Saint Petersburg, Aleteya (in Russian).

35. Горбовский А. 2003, По следам нереид, тритонов и русалок, «Наука и жизнь», N 9.
Gorbovsky A. 2003, In the Footsteps of Nereids, Tritons, and Mermaids, Science and Life, N 9 (in Russian).

36. Грейвс Р. 1992, Мифы древней Греции, Москва, «Прогресс».
Graves R. 1992, The Myths of Ancient Greece, Moscow, Progress (in Russian).

37. Захарченко М. 2008, Кодовые предметы в святочных гаданиях на примере литературных текстов, Гуманитарные исследования в Восточной Сибири и на Дальнем Востоке, N 4, 75-78.
Zakharchenko M. 2008, Symbolic Objects in Yuletide Divinations, A Case Study of Literary Texts, Humanities Research in Eastern Siberia and the Far East, N 4, 75-78 (in Russian).

38. Зеленин Д. 1995, Избранные труды, очерки русской мифологии: умершие неестественною смертью и русалки, «Индрик».
Zelenin D. 1995, Selected Works Essays on Russian Mythology, The Unnaturally Dead and Mermaids, Moscow, Indrik (in Russian).

39. Зухба С. (сост.) 2005, Абхазское народное поэтическое творчество, т. IV, к. 1, Абазские сказки, Сухум.
Zukhba S. (comp.) 2005, Abkhaz Folk Poetic Creativity, vol. IV, book 1, Abkhaz Fairy Tales (In Abkhazian).

40. Иванова-Казас О. 2006, Птицы в мифологии, фольклоре и искусстве, Санкт-Петербург, «Нестор-История».
Ivanova-Kazas, O. 2006, Birds in Mythology, Folklore, and Art, Saint Petersburg, Nestor-History (in Russian).

41. Ледовских А. 2021, Голос кам мифологический архетип в индоевропейской культуре, Филологические науки, Вопросы теории и практики, т. 14/10, 3196–3201.

Ledovskikh A. 2021, The Voice as a Mythological Archetype in Indo-European Culture, Philological Sciences, Questions of Theory and Practice, vol. 14/10, 3196–3201 (in Russian).

42. Непомнящий Н., Низовский А. 2004, Сто великих тайн, Москва, «Вече».
Nepomnyashchiy N., Nizovsky, A. 2004, One Hundred Great Mysteries, Moscow, Veche (in Russian).
43. Обнорский Н. 1900, Сирены, Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, т. XXX/59, С-Петербургь, «Издательское дело».
Obnorsky N. 1900, Sirens, Encyclopedic Dictionary of Brockhaus and Efron, vol. XXX/59, St. Petersburg, Izdatelskoe Delo (in Russian).
44. Пропп В. 2024, Исторические корни волшебной сказки, Москва, «Эксмо».
Propp V. 2024, Historical Roots of the Fairy Tale, Moscow, Eksmo (in Russian).
45. Стрелкова А. 2015, Сирены, Большая Российская энциклопедия, т. 29, Москва, «Советская энциклопедия».
Strelkova A. 2015, Sirens, The Great Russian Encyclopedia, vol. 29, Moscow, Soviet Encyclopedia (in Russian).
46. Топоров В. 1987, Древо мировое, Мифы народов мира, т. 1, Москва, «Советская энциклопедия».
Toporov V. 1987, The World Tree, Myths of the Peoples of the World, vol. 1, Moscow, Soviet Encyclopedia (in Russian).
47. Fakhri K., Bakhtiari R., Adelzadeh P. 2014, Hoopoe in Persian Literature and Myths, International Archive of Applied Science and Technology, vol. 5/2, 41–44.
48. Kunstmann J. 1938, The Hoopoe, A Study in European Folklore, Chicago, University of Toronto Press.
49. Kluge F. 1967, Etymologisches Wörterbuch der Deutschen Sprache, Berlin, New York, Walter de Gruyter.
50. Sakaoğlu S. 1976, 101 Anadolu efsanesi, Istanbul, Damla Yayinevi.

ՂԱԶԻ ԽԱՂ-ՊԱՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ
THE MANIFESTATIONS OF GHAZI GAME-DANCE IN OSHAKAN
ОСОБЕННОСТИ ИГРЫ-ТАНЦА ГАЗИ В ОШАКАНЕ

Վարդուհի Գրիգորյան
Varduhi Grigoryan
Вардуи Григорян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

varduhi.grigoryan@iae.am

Ներկայացվել է՝ 01.02.2025; գրախոսվել է՝ 17.02.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 01.02.2025; Revised: 17.02.2025; Accepted: 12.05.2025
Представлено: 01.02.2025; рецензировано: 17.02.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-308

Ամփոփում – *Ղազ-ղազը* կամ *ղազին* խաղ-պար է, որը կենցաղավարել է մինչ 1980-ական թթ.: Այն կատարել են միայն տղամարդիկ՝ հիմնականում հարսանեկան ծեսերի և ուխտագնացությունների ժամանակ: Ղազի պարելիս յուրաքանչյուր մեկ երաժշտական ֆրազն անցնում են ծնկածալերով պարաքայլերով, ինչից հետո պարագլուխը կատարում է մեկ խաղային-կատակային գործողություն, որն անմիջապես պետք է կրկնեն պարի մյուս մասնակիցները (հակառակ դեպքում ուշացող մասնակցին սպառնում է գոտիով կամ ճիպոտով հարված, և տվյալ մասնակիցը լքում է շրջանը): Այս գործողության ավարտից հետո պարը դարձյալ վերսկսվում է, մինչև որ վերջում մնում է միայն մեկ մասնակից, որն էլ հանձնարարությունն արագ կատարելու դեպքում դառնում է հաղթող: Պարագլուխը հանգուցային դեր է կատարում և կոչվում է *մերուն*: Պարի տևողությունը կախված է մասնակիցների թվից (նվազագույնը՝ 7–10 տղամարդ): Տարբեր իրավիճակներով պայմանավորված՝ առանց հեռանալու հիմնական տարբերակից՝ պարի և երաժշտական հատվածի զարգացումն ապահովելու համար կիրառվել են նաև տեմպի փոփոխություններ, դադարներ, տոնի փոփոխություններ, ավելացվել են հավելյալ նոտաներ: «Ղազի» կամ «ղազ-ղազ» անվանումը, հավանաբար, ծագում է «սագ» բառի կրկնությունից: Այս ավանդական խաղ-պարի ընթացքում մասնակիցները, փորձելով հնարավորինս արագ վերարտադրել մերունի գործողությունները, ընդօրինակում են սագերի վարքը: Հոդվածում փորձ է արվել հանգամանալից քննել կատարման տարբերակները, ուղեկցող մեղեդին ու նվագարանները, կատարման ժամանակը, վայրը և պարին վերաբերող այլ բաղադրիչներ: Մեր նպատակն է ոչ միայն ներկայացնել գրառ-

ված դաշտային նյութը, այլև այն մեկնաբանել առկա ազգագրական տվյալների համատեքստում:

Abstract – Ghaz-ghaz or ghazi is a game-dance that was performed only by men, mainly during wedding ceremonies and pilgrimages. Ghazi is a circle dance with arm interlogings, in which each musical phrase is passed with crossing steps, after which the leader performs a game-joke action, which must be repeated by the other participants of the dance (otherwise, the late participant is threatened with a blow of pre-prepared belts or switch, and that participant leaves the circle). The aforementioned actions are sudden and unpredictable each time. After the completion of this action, the dance is repeated several times until at the end remains only one participant, who becomes the winner if he completes the task quickly. The leader plays a pivotal role and is called merun. The duration of the dance depends on the number of participants. Due to various situational factors, and without deviating from the main structure, modifications such as tempo changes, pauses, tonal shifts, and the addition of extra notes were employed to enhance the development of the dance and musical sections. The name Ghazi or ghaz-ghaz is due to the reduplication of goose bird; the dancers imitate geese trying to repeat the actions of the merun as quickly as possible. In the article, in more detail we have studied the performance options, accompanying melody and musical instruments, performance time, place and other components related to the dance. Our goal is not only to present the recorded field material, but also to interpret it in the context of existing ethnographic data.

Аннотация – Газ-газ или гази – это танец-игра, который исполнялся только мужчинами и, главным образом, во время свадебных церемоний и паломничеств. Гази представляет собой хоровод с переплетениями рук, в котором каждая музыкальная фраза передается перекрещивающимися шагами, после чего ведущий совершает игровое-шутовское действие, которое должны повторить остальные участники танца (в противном случае опоздавшему участнику наносят удары заранее подготовленными ремнями или веткой, и этот участник выходит из круга). Вышеупомянутые действия каждый раз внезапны и непредсказуемы. После завершения этого действия танец повторяется несколько раз, пока не останется лишь один участник, который станет победителем, если быстро выполнит задание. Лидер играет решающую роль и называется мерун. Продолжительность танца зависит от числа участников. В зависимости от различных ситуационных факторов, не нарушая основную структуру, для развития танцевального и музыкального фрагментов были использованы изменения темпа, паузы, смена тональности, а также добавление дополнительных нот. Название гази или газ-газ связано с редупликацией слова «гусь»; танцоры имитируют гусей, стараясь как можно быстрее повторить действия меруна. В статье более подробно рассмотрены варианты исполнения, сопровождающая мелодия и музыкальные инструменты, время и место исполнения, а также другие компоненты, связанные с танцем. Наша цель заключается не только в представлении зафиксированного полевого материала, но и в его интерпретации в контексте имеющихся этнографических данных.

Բանալի բառեր – պար, խաղ, ղազի, Օշական, մերուն:
Keywords – dance, game, gazi, Oshakan, merun.
Ключевые слова – танец, игра, гази, Ошакан, мерун.

Ներածություն

Ազգագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ ժողովրդական պարեր ունեն խաղային տարրեր, և հակառակը: Երբեմն այս փոխազդեցություններն այնքան շատ են, որ ստեղծում են միջանկյալ ժանր, որն անվանում ենք խաղ-պար («խաղ-պար» հասկացությունը գործածում է պարագետ Նարինե Շամամյանը՝ ««Յայլի» պարը. պատմաազգագրական ուսումնասիրության փորձ» հոդվածում: Հմմտ. Շամամյան 2019, 247–248): Հայ ժողովրդական խաղ-պարային մշակույթն առանձնանում է իր ժանրային յուրահատկությամբ և տվյալ տեղանքին բնորոշ առանձնահատկություններով: Նման դրսևորումներից է *ղազ-ղազ* կամ *ղազի* խաղ-պարը, որ դասվում է նաև թռչնապարերի շարքին (Лисицян 1958, 241): Ըստ որոշ տեղեկությունների՝ պարը, դեռևս 1980-ականներին շարունակում էր կենցաղավարել Արագածոտնի մի շարք բնակավայրերում, մասնավորապես՝ Աշտարակի շրջանի Օշական, Ուջան և Կարբի գյուղերում (տեղեկությունը տրամադրել է Նարինե Շամամյանը (05.03.2024): *Ղազ-ղազի* անվամբ մեկ այլ տարբերակ գրանցվել է նաև Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում (Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Շամամյան Ն., հարցազրույց, 2011):

Հոդվածի թեմայի հիմքում Օշականում 2024 թ. մեր գրանցած նյութն է (արվել են ավելի քան մեկ տասնյակ հարցազրույցներ Օշականի տարեց բնակիչների հետ), ինչպես նաև ազգագրական այլ հետազոտությունների շնորհիվ հավաքագրված նյութեր: Դրանք գրանցելու համար կիրառվել է Սրբուհի Լիսիցյանի՝ պարի գրանցման հատուկ հարցաթերթիկը (Лисицян 1958, 458–467)՝ որոշ հարցերի պարագայում մեր կողմից արված համալրումներով:

Պարի կատարման ժամանակը և վայրը

Ղազին իր կենսունակությունը սկսել է կորցնել արդեն նախորդ դարի 70-ականներից և 1980-ականների վերջից ամբողջությամբ դադարել է գոյություն ունենալ՝ որպես մշակութային ֆենոմեն, իսկ մեր օրերում պահպանվում էր միայն ավագ սերնդի հիշողություններում: Եվ միայն 2024 թ. պարի վերականգնման ուղղությամբ վերսկսվել են աշխատանքներ Օշական գյուղում: Դրա տեսական վերականգնումը հնարավորություն է տալիս խաղ-պարի մասին պահպանելու և փոխանցելու տեղեկություններ:

Ըստ պարի ազգագրագետ Ժենյա Խաչատրյանի՝ ազգային-ժողովրդական շատ արարողություններում թռչնապարերը դառնում են հանգուցալուծում (Խաչատրյան 2009, 3): Նույնը գործում է նաև Օշականի *ղազ-ղազիի* տարբերակում. այն, ըստ էության, ազդարարում էր հարսանեկան հավաքույթի ավարտը: Ղազին սկսվում էր հարսանիքի վերջում, երբ հյուրերն արդեն գինովցած էին, ինչը սովորաբար համընկնում էր կեսգիշերն անցի կամ լուսաբացի ժամերին, և կարող էր շարունակվել տասնհինգ րոպեից մինչև երկու կամ ավելի ժամեր: Օշականում *ղազի* պարում էին նաև ուխտագնացությունների օրերին, սակայն այս դեպքում այն կատարվում էր ցերեկային ժամերին: Պարի տևողությունը կախված էր մասնակիցների թվից (նվազագույնը մասնակցում էր 7–10 տղա-

մարդ), և կարող էին ներգրավվել ինչպես տեղացիները, այնպես էլ այլ համայնքներից հյուրընկալվածները:

Հարսանեկան արարողությունների ժամանակ այն կատարվում էր տան ներսում, փոքր տների պարագայում՝ բակում: Կրկնազատիկին դեպի Դիդի կոնդի, ինչպես տեղացիներն են այն անվանում, մեծ Թուխ մանուկ եկեղեցի կատարվող ուխտագնացության ժամանակ այն պարում էին բլրի համեմատաբար հարթ հատվածում, Սուրբ Հարության տոնին՝ Սբ Սիոն եկեղեցու հարևանությամբ (Գրիգորյան Ռ., հարցազրույց, 02.03.2024): Օշական գյուղի երկու ուխտագնացությունները մինչ օրս կատարվում են Սուրբ Հարության և Կրկնազատիկի տոներին, սակայն խաղ – պարն այլևս ո՛չ այս ուխտագնացությունների, ո՛չ հարսանեկան արարողությունների ժամանակ չի կատարվում:

Կառուցվածքը

Պարի կառուցվածքը կիսաշրջան դասավորություն ունի: Ըստ մեր զրուցակիցների մեծ մասի՝ *ղազին* ափ ափի բռնելաձևով շուրջպար է, իսկ ավելի փոքր հատվածը պնդում էր, որ այն պարել են թև թևի: Ընդ որում՝ թև թևի բռնելաձևի պարագայում յուրաքանչյուր մեկ երաժշտական պարբերությունն անցնում են խաչվող պարաքայլերով՝ աջից ձախ և հակառակ ուղղությամբ, իսկ ափ ափի բռնվածքի դեպքում ծունկկոտրուկով կատարվող քայլեր են՝ դեպի առաջ: Մեր ուսումնասիրությունները, սակայն, թույլ են տալիս հավաստելու, որ *ղազին* կատարվել է հենց ափ ափի բռնելաձևով ու դեպի առաջ ընթացող ծունկկոտրուկներով քայլերով: Հետագա փորձերի ժամանակ ներկա բանասացները ևս հաստատեցին, որ պարը կատարվել է հենց նման եղանակով: Պարաքայլերի հստակ քանակ չկա՝ 8–16 և ավելի՝ կախված երաժշտական պարբերության ընթացքից և դադարից:

Յուրաքանչյուր անգամ, երբ երաժշտությունը ընդհատվում էր, պարագլուխը կատարում էր մեկ խաղային-կատակային գործողություն, որն անմիջապես պետք է կրկնեին պարի մյուս մասնակիցները: Ուշացող կամ հրաժարվող մասնակցին սպառնում էր նախապես պատրաստված գոտիներով կամ ճիպոտներով հարված, ինչից հետո տվյալ մասնակիցը լքում էր շրջանը: Վերոհիշյալ գործողությունները յուրաքանչյուր անգամ տարբեր էին լինում և անկանխատեսելի էին: Այս գործողության ավարտից հետո պարը վերսկսվում էր մի քանի անգամ, մինչև որ վերջում մնում էր միայն մեկ մասնակից, որն էլ հանձնարարությունն արագ կատարելու դեպքում դառնում էր հաղթող: Խաղային գործողություններ կատարող-թելադրողը պարագլուխն էր՝ *մերունը* (պարագլխի տեղական անվանումը տվյալ պարի համատեքստում):

Պարագլխի՝ *մերունի* դերը

Ինչպես նշեցինք, հանգուցային դեր կատարողը պարագլուխն էր՝ *մերունը*: Պարի ընթացքում տրվող առաջադրանքներն ու դրանց անսպասելիությունը կախված էին միայն ու միայն *մերունից*: Դրանց մեծ մասը մտածվում ու նախա-

պատրաստվում էր վաղօրոք. հագնում էին մի քանի տաբատ կամ շապիկ, գրպանում պահում տարատեսակ իրեր և այլն, մտածում այնպիսի գործողություններ, որոնք կատարելը մյուս մասնակիցների համար պետք է լիներ դժվար կամ ոչ նախընտրելի: Իսկ ամենադժվար առաջադրանքը *մերունները* պահում էին վերջին մասնակցի համար: Մեր զրուցակիցներից մեկը հիշում է, թե ինչպես պարագլուխը նախօրոք վերցրել էր հարսանիքի համար մորթված ցլի աչքն ու այն պահել խաղ-պարի համար, և որպես հերթական առաջադրանքի մաս՝ այն ափի մեջ դրած, մոտեցրել էր դեմքին՝ ցույց տալով, թե իբրև սեփական աչքն է հանում (Լևոնյան, հարցազրույց, 30.03.2024): Իսկ առավել հաճախ պարագլուխներին հաջողվում էր գրպանում ունենալ այդ տարիների համար դժվարհասանելի, շոկոլադե կոնֆետներ, որ հանում ու ցուցադրում էին կամ նվիրում որևէ մեկին՝ որպես հերթական առաջադրանք (Դարբինյան, հարցազրույց, 24.02.2024): Բանասացներից մի քանիսը հիշում են, թե ինչպես *մերունը* կարող էր մոտենալ ու գրկել կամ համբուրել երիտասարդ կանանցից մեկին, նույնը պետք է կրկնեին նաև մյուս մասնակիցները: Իհարկե, խոսքն այստեղ ավելի բարդ փուլերի մասին է, իսկ պարը սկսվում էր երբեմն պարզունակ առաջադրանքներով՝ կքանստելով, որևէ կենդանու ձայն հանելով և այլն:

Օշականի նախկին բնակիչ Հասմիկ Վարդանյանը պատմում է. *«Առանց այս պարերի ոչ մի հյուր չէր գնում մինչ լուսաբաց: Ղազ-ղազի պարում էին միայն տղամարդիկ: Պարի գլխավորը մերունն էր: Նա նախապես պատրաստված էր լինում. հագնում էր մի երկու շալվար, բլուզ, որոնց գրպաններում կային առարկաներ՝ ձու, կոնֆետ, չիր ու չամիչ: Ձեռքին ուներ կաշվե գոտի… Պարողները ուժեղ էին ու դիմացկուն: Պարի ժամանակ ինչ առարկա հաներ մերունը, նույնը պետք է հաներին պարողները. հակառակ դեպքում՝ կսպանային հարվածներ: Մի կատարյալ «թամաշա»»* (Վարդանյան, հարցազրույց, 05.03.2024):

Սովորաբար *մերունի* դերը ստանձնում էր խմբի առավել հնարամիտ ու հումորային անդամը՝ ինքնակամ կամ խմբի մյուս անդամների ու ներկաների ընտրությամբ: Կար նաև *մերուն* լինելու մեկ այլ տարբերակ, երբ պարի մասնակիցներից որևէ մեկին հաջողվում էր հաղթել՝ կատարել *մերունի* բոլոր առաջադրած հանձնարարությունները: Ըստ գյուղացիների՝ հաղթողը կարող էր գյուղի ցանկացած վայրում իրեն պարտվողին հանդիպելիս կանչել՝ *ղազ*, մինչև տեղի կունենար հաջորդ խաղ-պարը: Իսկ պարտվող համարվում էր ոչ թե ընդհանուր խաղ-պարի ընթացքում շրջանը լքողը, այլ վերջին՝ մերուն-մասնակից զույգում թերացողը (Գրիգորյան Վ., հարցազրույց, 21.02.2024): Լավագույն պարագլուխները հաճախ նաև *վերընտրվում էին որպես մերուն:* Մեր որոշ զրուցակիցներ անգամ հիշատակում են Օշականում առավել հայտնի *մերունների*՝ Հովհաննես Վարդանյան, Իսրոյի Օֆո, Աբգարանց Պապ ապեր (Արսեն Արսենյան), Մանտյոր Հովակիմ (Հովակիմ Հովակիմյան), Խըլըշի Վալոդ (Միխայիլ Ղարիբյան) և այլք:

Փաստորեն, բոլոր նրանց, ում հաջողվում էր դառնալ *մերուն*, տրվում էր հարսանեկան արարողությունը փակելու պատիվը, որի շնորհիվ տվյալ անձը որոշակի ճանաչում և դիրք էր ձեռք բերում հասարակության մեջ, արժանանում

յուրատեսակ հարգանքի՝ իր ճարպկության, հնարամտության և արագաշարժության համար: Այն նաև միջոց էր տղամարդկանց համար՝ ևս մեկ անգամ ցուցադրելու սեփական ուժը, ճարպկությունը, երբեմն նաև կատարելու իր գաղտնի կամ անիրականանալի ցանկությունը: Այն որոշ առումով կարող ենք համեմատել նաև հարսանեկան կոխի կամ մակարների խաղի հետ, որտեղ նպատակը դարձյալ անձի հնարավոր բոլոր դրական կողմերը խաղի միջոցով ցուցադրելն էր:

Հագուստը

Հագուստի սահմանափակումներ չկային, ավելին՝ երբեմն կրում էին մի քանի հագուստ՝ խաղային առաջադրանքի ժամանակ այն հանելու համար: Հիմնականում կրել են յուրաքանչյուր ժամանակաշրջանին հարիր տոնական հագուստը, որով մասնակցում էին հարսանեկան արարողության կամ ուխտագնացության (նկ. 1-ում պատկերված հատվածը 1950-ականներին Օշականում տեղի ունեցած հարսանիքից է, որտեղ երևում են նաև ներկաների հագուստները):



Նկ. 1. Հարսանիք Օշականում, 1950-ական թթ. (անձնական արխիվ)

Պարի ընթացքում պարագլխի ձեռքին միշտ կար ճիպոտ կամ գոտի, սակայն խաղ-պարի մասնակիցների պարագայում ունենք հակասություն. որոշ բանասացներ նշում են, որ մյուս մասնակիցները պարում էին թաշկինակներով, իսկ ասացողներից ոմանք հերքում են դա (տեղեկություններ հավաքելու առաջին փուլում բանասացների մեծ մասը երբեմն շփոթում էր պարը՝ այդ տարիներին հաճախ կատարված այլ պարերի հետ, հետևաբար սա ևս կարող է նման շփոթության արդյունք լինել): Այս պարագայում, ավելի հակված ենք

եզրակացնելու, որ մասնակիցների ձեռքին թաշկինակներ չեն եղել, քանի որ մեզ հայտնի երկու բռնելաձևերի դեպքում էլ այն հարմար և գործածելի չէ:

Մասնակիցները

Պարին մասնակցել կարող էին բացառապես տղամարդիկ, կանայք միայն հանդիսատես էին: Առավելագույն մասնակցությունը կարող էր լինել այն դեպքում, երբ պարագլուխը համբուրում կամ որևէ կերպ առնչվում էր ներկա կանանցից մեկին՝ որպես առաջադրանքի մաս: Սա հիմնականում պայմանավորված էր նրանով, որ թե՛ առաջադրանքները, թե՛ պատիժը կոպիտ էին, իսկ որոշները՝ ինչպես հագուստները հանելը և այլն, բացարձակ անընդունելի կանանց պարագայում: Անգամ բանասացներից մեկը՝ կանանց՝ խաղ-պարին չմասնակցելը բացատրելիս, կես կատակ – կես լուրջ *ղազին* անվանում է «վայրենի պար» (Սմբատյան, հարցազրույց, 21.02.2024): Մյուսները նշում են, որ գինովցած մերուններ հաճախ այնքան էլ գթասիրտ չէին պարտվողների նկատմամբ, և հարվածները կարող էին չափազանց ուժեղ լինել: Հետաքրքիր է, որ նման գործողությունները դրականորեն են ընդունվել, հրաժարվելը կամ հակադարձելը համարվում էր կարգազանցություն, և չէր ընդունվում ո՛չ խաղ-պարի մասնակիցների, ո՛չ հանդիսատեսի կողմից:

Ուղեկցող մեղեդին և նվագարանները

Ղազի պարը սովորաբար ուղեկցվել է դհոլի, զուռնայի, թմբուկի, դափի, պարկապզուկի նվագակցությամբ, ավելի ուշ շրջանում՝ խորհրդային մշակույթի տարածմանը զուգահեռ, գործիքակազմը համալրվել է նաև ակորդեոնով և կլարնետով: Երաժիշտների պարագայում մեր զրուցակիցները հիշատակում են Չիդարի Ցոլակին (Ցոլակ Ղարաբաղցյան)՝ որպես լավագույն զուռնաչի, որ հիմնականում նվագում էր այս պարի ժամանակ, և վերջինիս նվագակցող, Դամքաշ Աթամին (Ադամ Սուքիասյան): Սակայն ուղեկցող երգեր, որպես այդպիսին, չեն հիշատակվում: Միակ խոսքային հատվածը «Ղազ, ղազ, ղազ…» նմանաձայնությունն է եղել, այն էլ ոչ միշտ է օգտագործվել:

Ինչ վերաբերում է մեղեդային բաղադրիչին, ապա մեր դաշտային աշխատանքների ընթացքում զրուցակիցներից ոչ ոք չկարողացավ հիշել խնդրո առարկա խաղ-պարի երաժշտությունը, սակայն Նարինե Շամամյանը 2012 թ. Լեռնանիստ գյուղում տեսաձայնագրել է *ղազի* խաղ-պարի մեղեդու մի տարբերակ՝ այդ գյուղի տարեց բնակչի կատարմամբ (Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Շամամյան Ն., տեսանյութ, 2011), որը հաստատվեց մեր զրուցակիցների կողմից. այն ուներ հետևյալ կառուցվածքը (նկ. 2).



Նկ. 2. Ղազիի մեղեդին. նոտագրող՝ դաշնակահար Արմինե Շմավոնյան

Ըստ մեր զրուցակիցների՝ տարբեր իրավիճակներով պայմանավորված, առանց հեռանալու հիմնական տարբերակից՝ երաժշտական հատվածի զարգացումն ապահովելու համար երբեմն կիրառվել են տեմպի փոփոխություններ, դադարներ, տոնի փոփոխություններ կամ հավելյալ նոտաներ:

Անվանումը

Ըստ հիմնական վարկածի՝ *ղազի* կամ *ղազ-ղազ* անվանումը պայմանավորված է ղազ՝ սագ թռչունների վարքագծի կրկնօրինակմամբ. պարողները, փորձելով հնարավորիս արագ կրկնել *մերուի* գործողությունները, նմանակում են ղազերին՝ սագերին: Ի դեպ, *մերուն* բարբառային ձևում անվանում են հենց ձագեր ունեցող կենդանուն կամ թռչնին, ինչը ևս ասածի հավաստումն է: Պարի ընթացքում հնչեցված «ղազ, ղազ» նմանաձայնությունով էլ կրկնօրինակում են այս թռչուններին:

Սակայն այս պարագայում հարկ է դիտարկել հետևյալ կարևոր հանգամանքը. ըստ պարագետ Սրբուհի Լիսիցյանի՝ թռչնապարերը ձևավորվել են բնությանն ու կենդանիներին նմանակող շորորաձև շարժումներից (Лисицян 1958, 241), մինչդեռ *ղազիի* պարագայում խնդիրն այլ է: Այս դեպքում *ղազին* թռչնապարերի շարքին դասվում է ոչ թե պարային, այլ ավելի շատ խաղային տարրերի՝ մայր սագին կրկնօրինակելու և ձայնային նմանակումների հաշվին: Նշանակում է՝ այն կարող ենք դասել ոչ թե շորորի, այլ խաղային-մրցութային պարերի շարքին:

Ղազ-ղազի և համանման այլ պարերի հիշատակումներ այլ աղբյուրներում

Ազգագրագետ Ժենյա Խաչատրյանը առաջինն է, որ անդրադարձել է *ղազիին*՝ Հայկական սովետական հանրագիտարանում բնութագրելով այն որպես հայ ժողովրդական տղամարդկանց խմբապար, որը նմանողական շարժումներով թռչնապար է՝ տարածված Հայաստանի որոշ բնակավայրերում: Ազգագրագետը *ղազին* նկարագրում է հետևյալ կերպ. *«Պարն ունի գլուխ՝ մայր, և պոչ՝ թոփալ ղազ: Բոլոր պարողներն ունեն դալար ճիպոտներ (մտրակներ): «Մայրը» պարելու ընթացքում աստիճանաբար հանում է շորերը (ներկայացնում է շարժումներով), մյուսները կրկնում են: Ուշացողներին մտրակում են: Պարաքայլը ոտք փոխելն է: Պարեղանակը մեկն է և անընդհատ կրկնվում է տարբեր վարիացիաներով: Ամեն շրջան ունի իր տարբերակը և անունը»* (Խաչատրյան 1981,

23): Այս տարբերակը, սակայն, նկատելի տարբերություններ ունի օշականյան *ղազիի* համեմատ:

Թե՛ Ժենյա Խաչատրյանը, թե՛ Նարինե Շամամյանն այն նույնացնում են *զոփի*, *յալլի*, *կյազկյազ* պարերի հետ՝ նշելով, որ ամեն շրջան ունի իր տարբերակը և անունը: Այս առնչությամբ նկատենք, որ ազգագրագետ Հռիփսիմե Պիկիչյանը Իջևանի շրջանի Այգեհովիտ գյուղում գրառել է շատ նման պար՝ «Յա՛լլի» անվամբ, որտեղ պատիժը նույնն է, սակայն մասնակիցները ոչ թե տարբեր գործողություններ են կատարում, այլ պարբերաբար հանում են հագուստը (Պիկիչյան 1981): Նման մեկ այլ պար՝ *շարաբունի* անվամբ, հիշատակում է նաև Քաջբերունին իր «Ճանապարհորդական նկատողություններում» (Քաջբերունի 2003, 159–161): Իսկ Խաչատուր Աբովյանն «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի ու հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» աշխատանքում առանց անուն նշելու նկարագրում է այսպիսի մի «ծեծելու պար»՝ հետևյալ կերպ. «*Այդ կլոր պարը հիրավի ծեծի պար է. 15–20 մարդ շրջան են կազմում ձեռք ձեռքի տված, միայն առաջինն է ազատ մնում, որ վարպետն է: Ձեռքերը բարձրացրած և բավական ճիշտ տակտով առաջ է տանում վարպետն իր պարողներին: Նրանք ամբողջ մարմնով նախ աջ, հետո ձախ օրորվելով, մի ահռելի ոստյուն են կատարում: Գլխավոր պարողը պպզում է, վեր ելնում, զանազան խեղկատակություններ անում ոտքերով և իր ձեռքին եղած փայտով աշխատում է իր հարևանին ինչպես հարկն է ծեծել, իր հետ քաշել, սա էլ զգուշանալով, մյուսներին է առաջ հրում, ծեծից խուսափելու համար, բայց երբեմն էլ կարգին ծեծվում է*» (Աբովյան 1984, 628):

Ղազիին շատ մոտ ևս մեկ տարբերակ՝ *հարտաշի* անվամբ, 2020 թ. գրանցել է արվեստաբան Հովհաննես Գալստյանը՝ Արմավիրի մարզի Ապագա գյուղում (Գալստյան 2020): Հետաքրքիր է, որ այս՝ ավելի մոտ տարածաշրջանում գրանցված տարբերակի և *ղազիի* ընդհանուր հատկանիշները ավելի շատ են: *Հարտաշիի* պարագայում պարին ուղեկցող մեղեդին և բռնելաձևը տարբեր են, սակայն նույնությամբ կրկնվում են խաղային հատվածի հիմնական կանոնները, պարագլուխը ձեռքին կրում է գոտի, նույնն են նաև պարաքայլերը: Իսկ *հարտաշի* անվանումը, կարծում ենք, ոչ այնքան պարի բնութագրման, այլ այն կատարող առավել հայտնի պարագլխի անվան հետ է կապված: Այստեղ նկատենք, որ ըստ ՀՀ ժողովրդական արտիստ, պարուսույց Արտաշես Կարապետյանի հաղորդման՝ ՀՀ տարբեր շրջաններում որոշ պարեր երբեմն բնակիչների կողմից ավելի լավ հիշվում են որպես այս կամ այն անձի առաջարկած կամ գլխավորած պար՝ ստանալով վերջինիս անունը՝ հիմնականում սեռական հոլովով (օրինակ՝ Անդրանիկի պար և այլն): Այս դեպքում, ենթադրում ենք, որ *հարտաշի* անունը կարող էր առաջանալ Արտաշի անվան բարբառային տարբերակից:

Եվս մեկ պար՝ *կռնկավե* կամ *ղռունկ պար* անվամբ, որ գրանցել է Ռուդիկ Հարոյանը Ապարանի տարածաշրջանից, ունի շատ նման պարային կառուցվածք (հմմտ. «Մասունք», Ղռունկ պար (Կռնկավե), 27.08.2018): Այստեղ ևս գործ ունենք թռչնապարի հետ, որի հիմքը թռչունին, տվյալ դեպքում՝ կռունկին նմա-

նակելն է: Այս պարագայում պարաքայլը և դրա ուղղությունը շատ նման են մեր դիտարկած պարի տարբերակին, սակայն բացակայում է խաղային հատվածը:

Հետաքրքիր է, որ նման խաղ-պարեր հանդիպում են նաև քրդերի և եզդիների մոտ, որոնցում ևս գլխավոր նախապայմանը առաջադրված հանձնարարությունը կատարելն է: Ընդ որում, հատկապես քրդերի մոտ այն կենսունակ է մինչ օրս: Քրդական տարբերակում մեղեդին ամեն անգամ տարբեր է, իսկ մասնակիցները հարվածը ստանալուց հետո չեն լքում խաղը և շարունակում են մնալ մինչև դրա ավարտը, սակայն պարային հատվածն ու առաջադրանքների կատարումը գրեթե նույնն են (հմմտ. Kafkas Haber Ajansi, Kars tavuk bari oyunu, 31.08.2021):

Նշված բոլոր պարերին էլ բնորոշ են խաղային մրցութայնությունը, պարագլխի արած խաղային-կատակային գործողությունների կրկնումը մասնակիցների կողմից, պարում ճիպոտների կամ գոտիների կիրառությունը, բոլորն էլ կատարում են միայն տղամարդիկ, բացառությամբ Տաթև գյուղում հանդիպած *յալլիի* տարբերակի (Շամամյան 2019, 247–248): Սակայն պարերի կատարման որոշ առանցքային հատկանիշներ՝ բռնելաձև, պարաքայլ, մեղեդի և այլն, նկատելիորեն տարբեր են: Փաստորեն, գործ ունենք խաղի հիմնական կառուցվածքի հետ, որը տարբեր տարածաշրջաններում ստացել է տվյալ տեղանքին բնորոշ պարային շարժումներ և ուղեկցող մեղեդիներ:

Եզրակացություններ

Ղազ-ղազին բնորոշ խաղ-պարային առանձնահատկություններն են՝ հանկարծաստեղծությունը, հումորային գործողությունները, տվյալ իրավիճակով պայմանավորված՝ պարաքայլերի քանակի ավելացումը կամ կրճատումը: Խաղ-պարն ունի կատակային բնույթ: Այն պարել են բացառապես տղամարդիկ՝ հիմնականում հարսանեկան արարողությունների ժամանակ: Խաղ-պարում կարևոր դեր է կատարում պարագլուխը՝ *մերուն*, որի առաջադրանքներով էլ պայմանավորվում է խաղ-պարի ընթացքը:

ՀՀ բնակավայրերի մեծ մասում պարը չի պահպանվել, սակայն հետազոտությունների ժամանակ, բանասացների՝ հիշողությամբ տրամադրած տեղեկությունների հիման վրա, մեզ հաջողվել է վերականգնել պարը: Իսկ Օշական գյուղում ներկայումս փորձեր ենք կատարում այն դարձյալ կենցաղ բերելու ուղղությամբ:

Շնորհակալական

Հոդվածը գրելու ընթացքում տրամադրած դաշտային ազգագրական նյութերի և մասնագիտական տեղեկատվության համար շնորհակալություն ենք հայտնում ՀԱԻ գիտաշխատող, պարագետ Ն. Շամամյանին, ՀԱԻ փոխտնօրեն, բանագետ Տ. Դալալյանին:

Գրականություն/References/Литература

1. Աբովյան Խ. 1984, Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի ու հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին, Երկեր, Երևան, «Սովետական գրող»:
   Abovyan Kh. 1984, Notes on the Life of Armenians Living in Tiflis and Especially on Their Wedding Traditions, Works, Yerevan, Sovetakan Grogh (in Armenian).
2. Խաչատրյան Ժ.Կ. 1981, Ղազի, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատ., 23:
   Khachatryan Zh.K. 1981, Ghazi, Armenian Soviet Encyclopedia, vol. 7, Yerevan, Armenian Soviet Encyclopedia Publishing House, 23 (in Armenian).
3. Խաչատրյան Ժ.Կ. 2009, Պարը համշենահայերի ծիսական արարողությունների ներքիմաստ, Ձայն համշենյան, N 9-10, 3:
   Khachatryan Zh.K. 2009, The Inner Meaning of Dance in the Ritual Ceremonies of the Hamshen Armenians, Dzayn Hamshenyan Monthly, N 9-10, 3 (in Armenian).
4. «Մասունք», Ղռունկ պար (Կռնկավե), https://www.youtube.com/watch?v=DRNBSu7I7Jw (Ներբեռնման օրը՝ 27.08.2018):
   Masunk, Ghrunk Dance (Krnkave), https://www.youtube.com/watch?v=DRNBSu7I7Jw (Accessed on: 27.08.2018) (in Armenian).
5. Շամամյան Ն.Ա. 2019, «Յայլի» պարը. պատմաազգագրական ուսումնասիրության փորձ, Սյունիքը կրթության և մշակույթի օջախ, Երևան, «Արմավ», 247–248:
   Shamamyan N.A. 2019, The "Yayli" Dance: A Historical-Ethnographic Study, Syunik: Center of Education and Culture, Yerevan, Armav, 247–248 (in Armenian).
6. Քաջբերունի 2003, Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, «Մուղնի»:
   Kajberuni 2003, Travel Observations, Yerevan, Mughni (in Armenian).
7. Лисицян С.С. 1958, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, изд. АН Арм ССР.
   Lisitsyan S.S. 1958, Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People, vol. I, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).
8. Kafkas Haber Ajansi, Kars tavuk bari oyunu, https://www.youtube.com/watch?v=Q5ESWTwx808 (Accessed on: 31.08.2021).

Հարցազրույցների ցանկ/List of Interviews/Список интервью

1. Գրգորյան Ռ.Գ. (ծնվ.՝ 1941 թ.), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 02.03.2024 թ.:
   Grigoryan R.G. (b. 1941), Village Oshakan (Aragatsotn Province), 02.03.2024.
2. Գրգորյան Վ.Վ. (ծնվ.՝ 1952 թ.), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 21.02.2024 թ.:
   Grigoryan V.V. (b. 1952), Village Oshakan (Aragatsotn Province), 21.02.2024.
3. Դարբինյան Գ.Ս. (ծնվ.՝ 1948 թ.), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 24.02.2024 թ.:
   Darbinyan G.S. (b. 1948), Village Oshakan (Aragatsotn Province), 24.02.2024.
4. Լևոնյանի Ն.Լ. (ծնվ.՝ 1961 թ.), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 30.03.2024 թ.:

Levonyan N.L. (b. 1961), Village Oshakan (Aragatsotn Province), 30.03.2024.

5. Սմբատյան Ջ.Մ. (ծնվ.՝ 1961 թ.), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 21.02.2024 թ.:
Smbatyan J.M. (b. 1961), Village Oshakan (Aragatsotn Province), 21.02.2024.
6. Վարդանյան Հ. (ծննդյան թվականը հայտնի չէ), գյուղ Օշական (Արագածոտնի մարզ), 05.03.2024 թ.:
Vardanyan H. (Year of Birth Unknown), Village Oshakan (Aragatsotn Province), 05.03.2024.

Դաշտային հետազոտական նյութեր/Fieldwork Materials/Полевые исследовательские материалы

1. Գալստյան Հ., գյուղ Ապագա (Արմավիրի մարզ), 2020 թ., բանասացներ՝ Եղիազարյան Ա.Ու. (ծնվ.՝ 1947 թ.), Բարսեղյան Հ.Թ. (ծնվ.՝ 1956 թ.):
Galstyan H., Village Apaga (Armavir Province), 2020, Narrators: Yeghiazaryan A.U. (b. 1947), Barseghyan H.T. (b. 1956).
2. Պիկիչյան Հ., Դաշտային նյութեր, գյուղ Այգեհովիտ (Տավուշի մարզ), 1981 թ., անհայտ բանասաց:
Pikichyan H., Field Materials, Village Aygehovit (Tavush Province), 1981, Unknown Narrator.
3. Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Շամամյան Ն., Ղազի պարի նկարագրություն. տեսանյութ, գյուղ Լեռնանիստ (Կոտայքի մարզ), 2011 թ., անհայտ բանասաց:
Simonyan L., Hovhannisyan K., Shamamyan N., Description of the Ghazi Dance. Video Recording, Village Lernanist (Kotayk Province), 2011, Unknown Narrator.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ ՈՐ ՃԱՄՍ ԵՐԵՍՈՒՆ Ի ԿԵԱՆՍ ԻՒՐ ՇՐՋԵՑԱՒ ՅԵՒՐՈՊԻԱՅ, ՅԱՍԻԱ, Ի ՀՆԴԻԿՍ ԵՒ ՅԱՓՐԻԿԷ Ի ՀԱՊԵՇՏԱՆ, ԱՇԽԱՏԱՍԻՈՒԹԵԱՄԲ ԷԼԻՉԱԲԷԹ ԹԱՋԻՐԵԱՆԻ ԵՒ ՄԵՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ, ԵՐԵՒԱՆ-ԼՈՆԴՈՆ-ՍԲ. ՂԱԶԱՐ, ՎԵՆԵՏԻԿ, ՍԻԴ, 2024, «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ», 787 ԷՋ:

THE STORY OF LORD HOVHANNES TOVMAJANIAN, WHO TRAVELED FOR THIRTY YEARS IN HIS LIFE THROUGH EUROPE, ASIA, INDIA, AND AFRICA TO ABYSSINIA, COMPILED BY ELIZABET TAJIREAN AND MERUZHAN KARAPETEAN, YEREVAN-LONDON-ST. GHAZAR, VENICE, SID, 2024, TIGRAN METS, 787 P.

ИСТОРИЯ ОТЦА ОВАНЕСА ТОВМАЧАНЯНА, КОТОРЫЙ НА ПРОТЯЖЕНИИ 30 ЛЕТ СВОЕЙ ЖИЗНИ ПУТЕШЕСТВОВАЛ ПО ЕВРОПЕ, АЗИИ, ИНДИИ, АФРИКЕ (АБИССИНИИ), СОСТАВИТЕЛИ ЭЛИЗАБЕТ ТАДЖИРЯН И МЕРУЖАН КАРАПЕТЯН, ЕРЕВАН-ЛОНДОН, О. СВ. ЛАЗАРЯ, ВЕНЕЦИЯ, СИД, 2024, «ТИГРАН МЕЦ», 787 С.

ՊՈԼՍԱՀԱՅ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ (XVIII Դ. II ԿԵՍ)



Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի պատմությունը հագեցավ նոր և իր նշանակությամբ եզակի մի սկզբնաղբյուրով, որ վերաբերում է իրականության գրեթե բոլոր կողմերին ու պատմական բազմաթիվ դեմքերի՝ հայ հանրությանը, նրա մշակույթին, առևտրին ու տնտեսությանը, հոգևոր արժեքներին ու դրանք ամբողջացնող կողմնորոշումներին, գաղթօջախի արտաքին կապերին, հպատակ ազգերի հանդեպ Օսմանյան պետության վերաբերմունքին, գաղթօջախի դավանական իրողություններին և բազում այլ հիմնահարցերի: Այս բազմաշերտ և ծավալուն վերարտադրության կենտրոնում կանգնած է իր ժամանակի հայ մարդը՝ կրթված և աշխարհճանաչողությունը սեփական փորձով ընդլայնած վաճառականը, Եվրոպայի, Ասիայի երեք տասնյակի չափ երկրներում շրջած և տարբեր ազգերի կյանքն ու բնավորությունը դիտարկող տաղանդավոր անհատը՝ Հովհաննես Թովմաճանյանը: Այդ ճանապարհորդությունների մեջ է ամփոփվում նրա կյանքի մեծ մասը, և որչափով նա ընկալում է իր անհատականության շառավիղներում, Վենետիկի Մխիթարյաններին ուսանած և բանիմաց ու լայնախոհ մարդու աչքերով, այդչա-

փով ճանաչողական լիցքեր են ստանում նրա դիտարկումները վերը նշված իրողությունների վերհանման ասպարեզում, և որոնք բնութագրական են դառնում նրա ողջ շարադրանքում:

Հովի. Թովմաճանյանի աշխատանքի գիտական մշակումը, որ նվիրումով և մեծ բարեխղճությամբ իրականացրել են աշխատասիրողները, կարելի է ասել, գերազանցում է մեր սպասելիքները: Ամենից առաջ խոսքը վերաբերում է լրատվական-վերլուծական բնույթով աչքի զարնող ծանոթագրություններին, որոնք կցված են աշխատության յուրաքանչյուր գլխի: Դրանք՝ միանգամայն համապատասխան Թովմաճանյանի շարադրանքի մեծածավալ ընդգրկումներին, հղվում են հայրենական և օտար լեզուներով հարուստ գրականությամբ, որ լավագույնս վկայում է ձեռագրի գիտական վերարտադրության խորքային բնույթի մասին: Ավելացնենք, որ աշխատասիրողները ջանք և իմացականություն չեն խնայել ներկայացնելու խնդրո սոսկակա երկի ոչ միայն հայագիտական խոշոր արժեքը, այլև այդ արժեքը բնութագրող և պատմական իրադարձությունները լուսաբանող սեփական, հաճախ՝ ամբողջովին ինքնուրույն նարատիվը: Կարելի է մակաբերել, որ ծանոթագրությունները ընթերցողին ուղղորդում են առավելագույնս ընկալելու եղելությունները, այլև դրանք միավորող և տեքստին ներհատուկ տրամաբանությունը: Առանց վարանման կարելի է ասել, որ ծանոթագրական բնույթի հավելումները ներկայանում են որպես ինքնատիպ հայագիտական ուսումնասիրություն, որն իր նորութային արժեքն ու անհրաժեշտությունն ապացուցում է շարադրանքի բազում ծալքերը մեկնաբանելու թելադրանքով:

Հարկ է առանձնացնել աշխատասիրողների կարևոր հավելվածը բուն պատմությանը, որն ընդգրկում է Հ. Թովմաճանյանի նամակները՝ ուղղված ժամանակի հայ և կաթոլիկ գործիչներին, ինչպես նաև այս վերջինների բազմաթիվ նամակները, որտեղ խոսվում է նրա մասին և բնութագրվում նրա անձը կամ գործունեությունը: Դրանք ամբողջացնում են Հ. Թովմաճանյանի, նրա միջավայրի կամ հետաքրքրությունների անչափ լայն շրջանակը, մեծապես նպաստում այս երևելի անհատի գործունեության, միջավայրի և ժամանակի հայ իրականության, դրա նկատմամբ կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումների բացահայտմանն ու լուսաբանումներին: Տեղեկատվական այս հատվածի մեջ են մտնում օտար բառերի և արտահայտությունների բառարանը, նրա կյանքին և մատենագիտական գործունեության ամփոփ նկարագիրը, տեղանունների և անձնանունների ցանկերը՝ իրականացնելով արդի գիտական մատենագիտության մակարդակը լիովին ապահովող խնդիրների հեղինակային կատարումը: Կուզենայի առանձնացնել «Յովհաննէս Թովմաճանեան. ԺԸ դարի հայ մատենագիր» հատվածը՝ դարձյալ հագեցած հմտալի ծանոթագրություններով, որոնք ընթերցողին առավել քան մատչելի են դարձնում խնդրո առարկա աշխատությունը: Ուսյալ վաճառականը, որպիսին հայտնի էր (և միակողմահորեն) Թովմաճանյանն առ այսօր, այս հրատարակության և նրա մշակողների շնորհիվ մեզ հայտնվում է նոր և ամբողջական լույսի տակ, որպես ԺԸ դարի մատենագիր՝ իրականության և մարդկանց նկատմամբ ունեցած որոշակի վերաբերմունքով և

դրանից բխող սեփական աշխարհայացքով ու բնութագրերով: Ընդսմին, պետք է նկատել, միակ մատենագիրը, որի աշխատությունն ընդգրկում է ոչ միայն Կ. Պոլսի գաղթօջախի ավելի քան վաթսունամյա պատմության համայնապատկերը, այլև հայ իրական մարդուն՝ իր հոգեբանությամբ ու մտածելակերպով, վարքով ու վարքագծով: Այս վերջին հանգամանքը շուք և միաժամանակ յուրահատուկ տեղ է ապահովում Թովմաճանյանին ու, բնականաբար, նրա աշխատությանը՝ XVIII դ. մեր մատենագրության մեջ:

Թովմաճանյանի աշխատությունն ունի ինքնակենսագրական բնույթ և որպես այդպիսին, այստեղ նկարագրված իրադարձությունների կենտրոնում մեր առջև բացահայտվում է ինքը՝ հեղինակը, բնականաբար, իր անձնական ընկալումներով ու պատկերացումներով: Վենետիկի Մխիթարյանների մոտ ստանալով իր նախնական կրթությունը՝ այնուհետև զբաղվում է վաճառականությամբ և իր շարունակաբար այցելած երկրներում ձեռք է բերում առևտրական վիթխարի փորձ ու իմացություն՝ միշտ պահպանելով հայ վաճառականի, հատկապես աշխարհով մեկ շրջող և այս բառի բուն նշանակությամբ՝ իրազեկ վաճառականի նկարագիրը: Ճանաչողական լուրջ արժեք ունեն նրա հաղորդած տեղեկությունները հայ և օտարազգի վաճառականների, Արևելքում և Եվրոպայում նրանց երթուղիների, ժամանակի առևտրական մեթոդների, գործելակերպի, միջազգային առևտրում նրանց միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության, տարբեր երկրներում առաջարկի և պահանջարկի հարաբերականության և այլնի վերաբերյալ: Թովմաճանյանը տաղանդավոր անհատ է և չի սահմանափակվում առևտրի ու առևտրականության շրջագծով, այլև խորապես գիտակցում է առևտրի ու քաղաքականության սերտ կապն ու պայմանավորվածությունը: Այս տեսակետից նրա երկում անգնահատելի տեղեկություններ կան ժամանակի օսմանյան, մերձավորարևելյան, ասիական ու եվրոպական քաղաքական ու պետական գործիչների (որոնցից ոչ քչերի հետ նա ուներ անձնական ու մերձավոր փոխհարաբերություններ), առևտրի հանդեպ նրանց վերաբերմունքի, խառնվածքի և այլնի մասին: Ընդսմին, Թովմաճանյանն այս ճշմարտությունները ներկայացնում է պատումի ոչ սովորական ձևաչափերով, հայեցողի անտարբերությամբ կամ պաղարյունով, այլ սեփական աչքերով ու նուրբ դիտարկողի ընկալումներով, որ նրա շարադրանքին տալիս է կենսական ճշմարտացիություն և որպես դրա անխուսափելի հետևանք՝ համոզչություն և գեղարվեստական հմայք: Թովմաճանյանը շատ լավ գիտի մարդկային անմիջական զգացողությունների, հումորի արժեքը, որ կարևոր նշանակություն ունի այս աշխարհի հզորների տրամադրվածությունը ցանկալի հունով ուղղորդելու համար: Հիշենք, օրինակ, Հռոմում Սուրբ Դռան արարողությանը ներկայանալու՝ Թովմաճանյանի և նրա երկու ընկերակիցների զավեշտախառն միջադեպը. նրան հաջողվում է իրենց հետ պահակազորի քթի տակից անցկացնել երրորդ ընկերոջը, (որն անցաթուղթ չուներ)՝ թաքցնելով նրան թիկնոցի տակ (էջ 120–121): Լսելով այս արկածի մասին՝ Հռոմի պապը մեծապես զվարճանում է Թովմաճանյանի և նրա ընկերների հնարամտությամբ, ինչը և ոչ պակաս չափերով

նպաստում է պապի նման մեծագնորդ (թանկարժեք քարերի առևտրի պարագայում) անձի հովանավորությունն ապահովելուն ու Թովմաճանյանի հետ առևտրական գործարք կնքելու հաջողությանը: Կամ՝ Փարիզում նրա հանդիպումը վարչապետ Շուեզոլի և ապա Լուի XV-ի հետ, երբ հայ վաճառականը զվարճացնում է միապետին և նրա արքունիքին՝ պատմելով հաբեշական վերնախավում ընդունված և եվրոպացիների համար արտառոց՝ կենցաղային սովորույթների մասին: Թովմաճանյանի հանդեպ իր բարեհաճությունը թագավորն արտահայտում է նրան շնորհած եռամսյա արտոնագրով՝ իրավունք տալով, որ նա ողջ Ֆրանսիայով մեկ առևտուր անի՝ առանց մաքսի կամ այլ ծախսերի: Ինչ ասել կուզի, Թովմաճանյանը դրան է հասնում նաև իր դիվանագիտական կարողությունների շնորհիվ՝ թագավորին իր երախտիքը հայտնելով այն բանի համար, որ ֆրանսիական դիվանագիտությունն օգնել էր հայերին, Երուսաղեմում Ս. Հակոբյանց վանքը և նրա սեփականությունները նրանց տնօրինության տակ պահպանելու հարցում (էջ 327): Նկատի ունի 1730-ական թթ. սուր բանավեճը հայերի և հույների միջև, երբ մի պահ հույները գրեթե հաջողել էին սեփականացնել հայերին ավանդաբար պատկանող՝ նշված վանքը: Բայց անգամ խնդրարկուի ոչ այնքան հարմարավետ կացության մեջ Թովմաճանյանը պահպանում է իր մարդկային լավագույն հատկություններից մեկը՝ իր խորին հայրենասիրությունը, երբ կտրուկ առարկում է հայերի պատմության մասին քամահրանքով արտահայտվող («այս ազգն երեկ եւ այսօր նոր ել», իմա նորելուկ է – Ա.Խ.) ֆրանսիացի ազնվականներից մեկին: Թովմաճանյանը իր ազգի պատմականությունը վկայում է արժանապատվորեն՝ նրան հիշեցնելով Հայաստանում գտնվող աստվածաշնչյան Արարատ լեռը, որի վրա իջել էր Նոյյան տապանը (էջ 328):

Առևտրական աշխարհը՝ իր բազմազանությամբ և հակասականությամբ, խարդավանքներով ընչաքաղցությամբ, և միաժամանակ իր ուղղամտությամբ ու ավանդապահությամբ, Թովմաճանյանը նկարագրում է իր շիտակ ու հաստատուն խառնվածքի համեմատ: Կորովի և դժվարությունների առջև չընկրկող այս մարդը հաղթահարում է շատ անելանելի վիճակներ՝ գործի դնելով իր զարմանալի խորաթափանցությունը, արևելյան առևտրում և ամենուրեք ու ոչ միայն առևտրում հարգի կաշառքը, հնարամտությունն ու ճկուն միտքը: Առևտուրը, ինչպես XVIII դ. և դրանից էլ շատ առաջ և հետո, մնում էր առևտուր, որի մեջ ներգրավվում էին պետությունների առաջին դեմքերից սկսած՝ մինչև սովորական, շարքային մարդիկ. ակնավաճառ Թովմաճանյանի հետ բառացիորեն սակարկում են Հռոմի պապն ու նրա բարձրաստիճան եկեղեցականները, Հաբեշստանի թագուհին, ֆրանսիական պետական այրերը, Եգիպտոսի փաշան և օսմանյան ու եվրոպական բարձրաստիճան անձինք՝ հանդես բերելով ոչ միայն իրազեկություն, այլև շուկայական գնի իմացություն, և ոմանք էլ, ըստ հարկին, ապրանքի գինը գցելու հարցում սոցիալական ճնշում են գործադրում Թովմաճանյանի վրա, որը նման դեպքերում հարկադրված էր զիջել ազդեցիկ գնորդներին: Բայց այդ նույն առևտուրը առնչվում է բարքերի ու սովորույթների հետ, և այս իմաստով հարկ է ուշադրություն դարձնել եվրոպական ու ասիական ար-

քունիքներում ընդունված արարողակարգերի, նույն պաշտոնակալման և պաշտոնանկության, հիերարխիական սանդուղքում փոփոխությունների, ժողովուրդների կենցաղի ու բնավորության վերաբերյալ Թովմաճանյանի տեղեկություններին, որոնք շարադրանքում թափվում են ասես առատության եղջյուրից: Այստեղ ուշագրավ է օսմանյան բարձրաստիճան միջավայրի նկարագիրը. հիշենք, օրինակ, լալաների (թուրք. լալա, դաստիարակ) տեղն ու դերակատարությունն օսմանյան արքունիքում՝ հատկապես սուլթանների վրա նրանց ունեցած ազդեցության տեսակետից (նույն XVIII դ. սկզբներին արքունիքում ամենազոր անձ էր դարձել Մուսթաֆա Բ-ի (1695–1703) երբեմնի լալա, շեյխ ուլ-իսլամ դարձած Ֆեյզուլլահը): Թովմաճանյանի աշխատության մեջ հանդիպում ենք լալայի իրավունքներին տիրանալու պատրաստվող Աբդուլլահ աղայի (եղել էր Աբդուլ Համիդ Ա սուլթանի՝ (1774–1789) դաստիարակը) պատմությանը: Արքունիքի մրցակցող ուժերը թունավորում են նրան, և այդպես կորչում է Թովմաճանյանի հինգ հազար ղուրուշը, որ վերջինս նախապես տրամադրել էր Աբդուլլահին (էջ 377): Թովմաճանյանը հատկանշական տեղեկություններ է տալիս իր ժամանակի հնդկահայ և Հնդկաստանում առևտուր անող հայ վաճառականների մասին՝ ոչ քիչ դեպքերում իր շարադրանքը հագեցնելով մեզ համար այնպիսի նորութային արժեքներով, որոնք, ի դեպ, չկան կամ գրեթե չկան համապատասխան սկզբնաղբյուրային գրականության մեջ: Թովմաճանյանը մտերմիկ կապեր ուներ նշանավոր Շ. Շահամիրյանի հետ, նրա պատմության մեջ մենք հանդիպում ենք հնդկահայ վաճառականության ականավոր դեմքերին՝ Հովհ. դի Մարգարին, Պ. Խաչիկյանին, Մ. Շեհրիմանյանին, Մ. Միրզեմին, Հ. Մարությանին, Խոջամալյանին և էլի շատերին, որոնց կենսագրությունները ամենայն բարեխղճությամբ ծանոթագրում են աշխատասիրողները: Մադրասի հայ վաճառականներին Թովմաճանյանն ուրվագծում է բազմազան կապերով ու հարաբերություններով, որ նրանք ունեին հնդկական իշխանավորների, ինչպես և անգլիական առևտրական ընկերության հետ: Այդ բացահայտումները շատ հետաքրքիր աղբյուր կարող են լինել հնդկահայ վաճառականության և նրա սնուցած՝ գաղափարական ու մշակութային կողմնորոշումները նորովի մեկնաբանող ուսումնասիրությունների համար:

Իր խոսքում և գործողություններում Թովմաճանյանն ամենուրեք հանդես է գալիս իբրև բարեպաշտ քրիստոնյա (կաթոլիկական ակնհայտ նախասիրություններով), որի վարքագիծը չափակշռվում և գնահատանքի է արժանանում, նրա խորին համոզմամբ, երկնային արդարադատության կողմից: Ինչպես արդեն ասվեց, նա իր ժամանակի մարդն է՝ հավատով, մտածելակերպով և հոգեբանությամբ, որպիսիք են նրա դարաշրջանի մեր բոլոր վավերագրերի հեղինակները: Նրա պատմության սյուժետային հոլովույթներում և ոչ սակավ դեպքերում երկնային արդարադատության անխուսափելիությամբ կործանվում կամ անամոթ վերքերի են արժանանում իր բոլոր թշնամիները, և այս ամենը նա գնահատում է ոչ այնքան գոհունակությամբ, այլ անողոք ճակատագրի գիտակցմամբ, ներքին համոզումով և միշտ իրեն ներհատուկ չափի մեջ: Այսպես,

նա խստիվ դատապարտում է խաբեբայությունն առևտրում, ինչպես խոճա Շաքարի և նրա որդեգրի պարագայում, որոնք խաբում են Թովմաճանյանին, և երկուսն էլ մեռնում են նույն ամսին, իսկ նրանց ապրանքները կորչում են անդարձ (էջ 293–294): Իրենց արարքի հատուցումն են գտնում նաև այլ թշնամիներ, ինչպես Թովմաճանյանին Մադրասից հետո Մուրիս կղզի տանող նավի անգլիական ջոկատի հրամանատարը, որը անակնկալ մեռնում է այն բանից հետո, երբ հանիրավի բռնություններ է գործադրում հայ վաճառականի նկատմամբ (էջ 299): Ի դեպ, արդյոք այս դրվագով Թովմաճանյանը չի հայտնում հնդկաբնակ հայ վաճառականների խուլ դժգոհությունը անգլիական առևտրական ընկերության նկատմամբ, որն ինչպես միշտ, անողոք էր վարվում հայ վաճառականության հետ՝ առևտրական հայտնի մրցակցության պայմաններում:

Ճանապարհորդությունների միջև ընկած տևական ժամանակահատվածներում Թովմաճանյանը բնակվում է իր ծննդավայր Կ. Պոլսում և այս միջավայրն ու մարդկանց լայն շառավիղներով դիտարկող անհատի նկարագրություններն ու անկեղծությունը հասնում են հանրագիտարանային չափերի՝ վերստին պայմանավորելով շարադրանքի սկզբնաղբյուրային ինքնատիպությունը: Թովմաճանյանը տալիս է իր աչքի առջև ձևավորվող (XVIII դ. երկրորդ կես)՝ ամիրայության և պոլսահայ համայնքում նրա տեղի ու նշանակության, պատրիարքների (Հ. Նալյան, Գր. Պասմաճյան, Զաքարիա Կաղզվանցի) գործողություններն ու վարքագիծը օսմանյան իշխանությունների հետ ունեցած առնչություններում, պոլսահայ ներհամայնքային, հատկապես դավանական հակասությունների, համայնքի մարդկանց կենցաղի ու բարոյական կողմնորոշումների, ապրելակերպի և մշակույթի ուշագրավ կողմերի, եկեղեցու և բնական ու տարերային աղետների և էլի բազում հանգամանքների պատկերն ու նկարագիրը: Նրա պատմությունը մեզ համար իր թարմ ճշտումներն ու մանրամասներն է մտցնում պոլսահայ նոր վերնախավի՝ ամիրայության առաջացման, նրա հանրային նշանակության վերաբերյալ մեր իմացությասն մեջ՝ ընդլայնելով դրա սահմանները: Եվ այս տեսակետից այն իր կարևոր վերհանումներով լրացնում է հայկական այդ եզակի սոցիալական դասի ուրվագծերում Գր. Պասմաճյան պատրիարքի (1764–1774) գրառումները: Ամիրայության մեջ Գր. Պասմաճյանն առանձնացնում էր շերտն այն նորաթուխ մեծահարուստների, որոնք օսմանյան պաշտոնեության (ինչպես և եվրոպական դեսպանատների) հետ իրենց կայուն փոխհարաբերությունների շնորհիվ ազգային վարչության թող որ անձուկ սահմաններում ձգտում և հասնում էին զգալի հաջողությունների՝ պահպանելով, սակայն, էլիտար դասի մեջ հայտնվելու անձնական բավարարվածությունն ու գավառական խավերին հատուկ մանրախնդիր հոգեբանությունն ու գործելակերպը: Թովմաճանյանի պատմության մեջ այդպիսի իրական կերպար է երբեմնի սպասավորությունից շեշտակիորեն վեր բաձրացած և Թովմաճանյանի բնութագրմամբ՝ «Սերգիս ամիրաեացեալն, զի այժմ փարթամացեալ եւ մեծացեալ էր» (էջ 383): Սերգիսը ամբարտավան մեկն է և տեղն եղած տեղը պատրաստ է վայրահաչությունների՝ ի գոհացումն Սիմեոն կաթողիկոսի և նրա տոնացույցի

դեմ մարտնչող և պահպանողական ամիրաների: Պատահական չէ, որ նա գործակցում էր Գր. Պասմաճյան պատրիարքին հալածող՝ տխրահռչակ Գասպար Մուրատյան ամիրայի հետ: Սրանք և իրենց համախոհները՝ բախտախնդիր տեր Մանուելը, Տիպաճի օղլու Սարգիսը և մյուսները պատրաստ են կաթոլիկամետ հայերին մատնելու թիապարտության, աքսորանքի ու կախաղանի (Մանուել քահանան հենց Թովմաճանյանին կախելու պահանջ էր առաջադրել օսմանյան իշխանություններին)՝ մտրակված իրենց հանրային նշանակալիության մարմաջից:

Ամիրայության նկարագիրը Թովմաճանյանն առավել խտացված, և անշուշտ, նաև գեղարվեստական գույներով է պատկերում՝ հանձինս օսմանյան վերնախավի հետ սերտաճած (Սուլեյման աղա, ներքինապետ և այլն) և գաղթօջախում ամենահզոր անհատը դարձած Յաղուպ ամիրայի, որին պարտական էր Հ. Նալյանը՝ իր պատրիարքական երկրորդ շրջանի (1752–1764) համար: Յաղուպը, կարելի է կարծել, պատկանում էր Բ. դռան հետ մրցակցող արքունիքի խմբակցությանը, որից ոչ քիչ դեպքերում կախված էր բարձրաստիճան շատ պաշտոնյաների, այդ թվում և մեծ վեզիրի ճակատագիրը, որ և ընդգծում է Թովմաճանյանը. «Եւ ոչ այսչափ միայն, այլ եւս զեպարքոսս փոփոխէր, վասն որոյ եւ եպարքոսքն իսկ ահս կրէին ի նմանէ եւ սիրով քաղաքավարէին ընդ նմա: Յաղագս որոյ ի խնդրելն նորա զիր ինչ յեպարքոսէն, իսկոյն յառաջանայր առանց ինչ ընդդիմաբանութեան, սակս որոյ յամենայն ազգաց պատուեալ եւ մեծարեալ էր եւ համբաւ նորա ընդ ամենայն տեղիս հռչակէր» (էջ 150):

Թովմաճանյանը անհայտ կամ քիչ հայտնի տեղեկություններ է ավելացնում Յաղուպ ամիրայի կենսագրությանը՝ միաժամանակ անդրադառնալով կայսրության մեջ ամիրայության սոցիալական նշանակությանն ու սահմաններին, այդ թվում և Յաղուպի շեշտակի վերելքին և նույնչափ շեշտակի անկմանը, երբ վերջինս գլխատվում է սուլթանի հրամանով՝ 1752 թ.: Ավելացնենք, որ այստեղ և առհասարակ, Թովմաճանյանի ամբողջ պատմության մեջ կամ, որ նույնն է՝ շարադրանքի ոճում, իրականի կողքին և դրան սերտաճած՝ ակնհայտորեն զգացվում է հեղինակի գեղարվեստական ընկալումը՝ ի հայտ բերելով նրա պատկերավոր մտածողությունը, որ պետք է համարել այս աշխատության գործի արժանիքներից մեկը:

Կենսական ճշմարտացիությամբ են շնչում Թովմաճանյանի նկարագրությունները Կ. Պոլսի հայ հանրության մեջ տասնամյակների դավանական հակասությունների, դրանց նկատմամբ Օսմանյան պետության և հատկապես հայ եկեղեցու վերաբերմունքը գնահատելու տեսակետից: Այստեղ և այս կտրվածքով առանձնանում են Կ. Պոլսի հայոց պատրիարքների նկարագրերը՝ Հ. Նալյանից մինչև Զաքարիա Կաղզվանցի, որոնց լավ ծանոթ էր Թովմաճանյանը: Այստեղ նրանք ի հայտ են գալիս իրենց անձնական և հանրային դեմքով, և այս ուրվագծերը լրացնում են ոչ միայն նրանց բնութագրերը, այլև բնութագրում են իրեն՝ Թովմաճանյանին, իբրև պատմաբանի, հուշագրողի ու մատենագրի ցայտուն անհատականության: Լինելով կաթոլիկամետ՝ իր ներքին համոզումներով

և կրթվելով Մխիթարյանների դպրոցում, որը նախորոշելու էր հետագայում նրա քահանայական կոչումը, Թովմաճանյանը զարմանալիորեն լռակյաց է իր դավանական համակրանքները կամ պատկերացումները արտահայտելու հարցում: Դավանական հակասությունների մասին նա խոսում է, և գրեթե բացառապես, կաթոլիկամետ հայերին հետապնդելու և պատժելու առիթներով: Պոլսահայ համայնքում որպես այդպիսին ճանաչված մեկը, Թովմաճանյանը ևս դարձել է հայ պահպանողականության հալածանքների թիրախ՝ հատկապես Հ. Նալյանի պատրիարքության օրերին և ազատվել է իրեն սպառնացող ճնշումներից բարեկամների, ամենից առաջ՝ պատրիարքի հետ ունեցած մերձավոր փոխհարաբերությունների շնորհիվ: Հ. Նալյանը նրան փրկում է եպարքոսի առջև՝ ատյանում, երաշխավորելով իր բարեկամի ուղղադավանությունը, իբրև հայ եկեղեցու հավատարիմ հետևորդի: Այստեղ կարևորը, սակայն, իր՝ Հ. Նալյանի ուղղադավանության խնդիրն է: Մ. Օրմանյանի բնութագրով՝ Հ. Նալյանը, ինչպես և իր ուսուցիչ, պատրիարք Հովի. Կոլոտը, իր ճկուն վարքագծով ձգտել է կանխել և կամ մեղմացնել դավանական ատելությունը հայ հանրության մեջ՝ հանդես բերելով արդարացված զգուշություն և զիջողամտություն՝ կաթոլիկ եկեղեցիով հրապուրված հայերի նկատմամբ, դույզն ինչ չափով չնահանջելով հայրենի եկեղեցու ավանդույթներից: Բնականաբար, կրքեր չգրգռելու և կաթոլիկամետներին սիրաշահելու գնով պետության ցասումը հեռացնելուն հետամտող՝ Հ. Նալյանի վարքագիծը գրեթե միանշանակ պետք է ընկալվեր երկուստեք՝ և՛ հայ թունդ պահպանողականության, և՛ կաթոլիկությանը հարած հայերի կողմից, իբրև ապացույց այն բանի, որ կաթոլիկամետ է նաև ինքը՝ Հ. Նալյանը: Հավանաբար, այս առասպելի ակունքը լատինական քարոզչությունն էր, որը միշտ կարիք էր զգում հիմնավորելու սեփական նվաճումները իր քայքայիչ գործունեության մեջ: Թովմաճանյանը, որ շարունակաբար շփումների մեջ էր լատին կղերի, ինչպես և հայ հանրության տարբեր շերտերի հետ (այս իմաստով ևս մատնվելով արկածախնդիր տեր Մանուելի և նրա յուրայինների հալածանքներին), երևակայական լույսի տակ է ներկայացնում իրականությունը՝ Հ. Նալյանին պատկերելով իբրև անվերապահորեն կաթոլիկություն ընդունած անձի: «Ի այն ամ 1746, Պատրիարգն Հայոց Յակոբ վարդապետ Նալեան, բազում թոյլտուութիւն ետ ուղղափառաց (կաթոլիկամետ հայերին – Ա.Խ.) եւ նոքա եւս, քան զարժանն համարձակեալ, անցին ըստ չափ», գրում է Թովմաճանյանը (էջ 80): Բայց չափն անցնում է և ինքը՝ Թովմաճանյանը, երբ գրում է, որ պատրիարքը հայտնել է իրեն «զներքին խորհուրդն իւր, զի կամէր սիրոյ եւ հնազանդութեան գիր մի գրել ի Հռոմ» և որ Նալյանն անում է՝ Թովմաճանյանի միջոցով պապին ուղարկելով դավանության թուղթը (էջ 215): Բայց դավանության թղթի գոյությունն առ այսօր հայտնի չէ, իսկ եթե Հ. Նալյանը իսկապես կարող էր գրած լինել, ապա ոչ դավանական հնազանդության կամ ազգային եկեղեցուց դիմաշրջվելու իմաստով, որ հայտնում է Թովմաճանյանը՝ կրկնում եմ, լատին քարոզիչների ազդեցությամբ: Ի դեպ, այս ազդեցությունն ակնհայտ է նաև Հ. Նալյանի «Վէմ հաւատոյ» և «Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի

Նարեկացւոյ» աշխատությունների՝ թովմաճանյանական մեկնաբանության մեջ, որ, իբր, դարձյալ վկայում է պատրիարքի կաթոլիկական նախասիրությունների մասին (էջ 215)։ Ավելին, իբր, Հռոմի կամքով է, ըստ Թովմաճանյանի, Հ. Նալյանը հեռանում պատրիարքական աթոռից, որ բնավ չի համապատասխանում իրականությանը։ Թովմաճանյանը աստվածաբան չէ, և նրա անվերապահ դատողություններն այս առումով ցույց են տալիս դրանց օտարամուտ բնույթը։

Մի քանի խոսք Թովմաճանյանի գրելաոճի և լեզվի մասին։ Նա գրում է մխիթարյանների մշակած լեզվին մոտ, թերևս ավելի պարզ գրաբարով, պոյսահայ բարբառի որոշ զուգորդումներով։ Իր մասին գրում է երրորդ դեմքով, յուրահատուկ մի ոճ, որ, կարելի է ենթադրել, դարձյալ գալիս է մխիթարյաններից, որոնց հետ նա առնչվում էր ամբողջ կյանքում, և որի վերջում կաթոլիկական քահանա պետք է ձեռնադրվեր փոթորկահույզ կենսագրության տեր այս անհատականությունը։ Կարելի է ենթադրել նաև, որ Թովմաճանյանը Մ. Չամչյանի աղբյուրներից մեկն է՝ հատկապես XVIII դ. երկրորդ կեսի պոլսահայ իրականության կտրվածքով, մի խնդիր, որ կարոտ է ուսումնասիրության։

Կարելի էր անել որոշ դիտողություններ, ավելի շուտ՝ դիտարկումներ այն ահռելի աշխատանքի դիմաց, որ կատարել են աշխատասիրողները՝ ներդնելով իրենց հայագիտական խոր գիտելիքները, իրենց հմտությունն ու ճաշակը տրամադրելով ընթերցողին։ Երբեմն չեն թարգմանվել թուրքերեն և օտար այլ դարձվածներ, ծանոթագրությունները կարելի էր հավելել մասնագիտական բնույթի որոշ միջամտություններով, որոնց լիովին իրազեկ են աշխատասիրողները և այլն։ Սակայն այս ամենը որևէ նշանակություն չունի այն մեծ և շնորհակալ գործի առջև, որով հայագիտական և հրատարակչական բարձր որակներով մեզ է ներկայացվում Հովի. Թովմաճանյանի պատմությունը՝ իբրև ուշ շրջանի հայ մատենագիտության կոթող։

Ալբերտ Խառատյան
Albert Kharatyan
Альберт Харатян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

albert.kharatyan@academhistory.am

DOI: 10.53548/0320-8117-2025.2-320

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ Մելանիա Միքայելյան
Սեդա Քուպելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ Գայանե Հարությունյան

Editors of Armenian section – Melania Mikaelyan
Seda Kupelyan
Editor of Russian section – Gayane Harutyunyan

Редакторы армянского отдела – Меланья Микаелян
Седа Купелян
Редактор русского отдела – Гаянэ Арутюнян

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Պետրոսյանի
Computer design and pagination – Armine Petrosyan
Компьютерный дизайн и пагинация – Армине Петросян

Հրատ. պատվեր N 1395
Ստորագրված է տպագրության 05.09.2025 թ.:
Տպագրական 20.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902, 56-41-80:

Signed for printing 05.09.2025
20.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902, 56-41-80

Подписано к печати 05.09.2025 г.
20.5 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902, 56-41-80

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://lraber.sci.am
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Official site of the Journal: http://lraber.sci.am
E.mail of the Journal: lraber@sci.am
Официальный сайт журнала: http://lraber.sci.am
Электронная почта журнала: lraber@sci.am

© Հանդեսի տեխնիկական ֆորմատը հաստատված է հեղինակային իրավունքով
© The technical format of the journal is confirmed by copyright
© Технический формат журнала подтвержден авторским правом